«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆԻ Ն. ԱՃԵՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԻՎ 2 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2023

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի (այսուհետ՝ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվել և իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթական գործընթացի իրականացման վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 14

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 14

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 14

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ Ն. ԱՃԵՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԻՎ 2 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 18

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 20

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 20

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 24

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 33

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 41

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 47

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 53

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 58

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 62

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 65

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 68

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 74

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 75

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 75

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 76

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 79

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 82

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 83

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 84

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի (այսուհետ՝ քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջն առաջին անգամ է ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնում, ինչպես նաև գտնվում է որակի ապահովման մշակույթի ձևավորման փուլում:

Փորձագիտական գնահատում իրականացնելիս խումբը հաշվի է առել նաև, որ Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի առաքելությունն է՝ «պատրաստել փոքր և միջին բիզնեսի մասնագետներ՝ միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի իրականացմամբ՝ տնտեսության ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ինչպես նաև ապահովել սպասարկման ոլորտի աշխատողների և առանձին անհատների վերապատրաստումը լրացուցիչ կրթական ծրագրերի ու կարճաժամկետ դասընթացների միջոցով»:

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը իրականացնում է միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր ըստ ՈԱՇ-ի 3-րդ և 5-րդ մակարդակների:

Քոլեջում իրականացվում են 8 միջին մասնագիտական և 1 նախնական մասնագիտական կրթական ծրագրեր, ընդ որում դրանցից երեքը՝ «Սառնարանային տնտեսություն», «Կոսմետիկա և դիմահարդարում», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում», ներդրվել են վերջին 3 տարիների ընթացքում, իսկ «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիներում» ՄԿԾ-ն 2019-2020 ուստարվանից իրականացվում է դուալ ուսուցմամբ, ինչը փաստում է նոր մասնագիտական ծրագրեր ներդնելու և աշխատաշուկայի պահանջներին արձագանքելու քոլեջի նպատակի մասին:

Քոլեջում իրականացվող կրթական ծրագրերի նկարագրերը, ուսումնական պլանները, մոդուլների նկարագրերը և դասերի պլանները կազմված են ՄԿՈՒԶԱԿԻ-ի կողմից սահմանված պետական չափորոշիչների հիման վրա: Քոլեջն օգտագործում է պետական չափորոշիչներում 10 տոկոս փոփոխություն կատարելու հնարավորությունը հիմնականում

դասաժամերի բաշխվածության և կամընտրական դասընթացների շրջանակում: Դասընթացների բովանդակության փոփոխություններ կատարվում են պետական չափորոշիչների փոփոխությունների պատճառով կամ գործատու-դասախոսների առաջարկությունների հիման վրա: Վերջիններս հիմնականում առնչվում են բովանդակության արդիականացմանը և թեմաների կրկնության բացառմանը: Ինչ վերաբերում է կրթական վերջնարդյունքների ձևակերպմանը, ապա դրանք լիովին համընկնում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից ներկայացված չափորոշիչներին: Քոլեջի առարկայական հանձնաժողովներում և մանկավարժական խորհրդում քննարկվում է դրանց իրատեսականությունը և որոշ դեպքերում առաջարկությունների փաթեթ ուղարկվում ՄԿՈՒԶԱԿ, սակայն այս ուղղությամբ մեծ առաջընթաց չի գրացվել:

Քոլեջում իրականացվող մի շարք ծրագրերում՝ «Հաշվապահական հաշվառում», «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում», «Ապահովագրական գործ», կրթական վերջնարդյունքներն առավել համահունչ են ՈԱԾ 5-րդ մակարդակի պահանջներին, և շրջանավարտները աշխատանք են գտնում առանց հետագա կրթության, իսկ օրինակ՝ «Շուկայաբանություն» և «Կառավարում» մասնագիտությունների դեպքում հաճախ աշխատանքը համատեղում են բուհում հեռակա ուսուցման հետ: Այս առումով, անհրաժեշտ է նշել, որ ծրագրերի բովանդակության համապատասխանեցման և տրամաբանական շարունակականության ապահովման ուղղությամբ բուհերի հետ համագործակցության քայլեր չեն իրականացվում: Քոլեջը չի իրականացնում կրթական ծրագրերի բենչմարքինգ հայաստանյան այլ քոլեջների համապատասխան ծրագրերի հետ, ինչը կարելի է բացատրել այն փաստով, որ բոլոր քոլեջները առաջնորդվում են պետական նույն չափորոշիչներով: Բացառություն է կազմում «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» դուալ կրթական ծրագիրը, որի արդյունավետ իրականացման համար ուսումնասիրվել է դուալ կրթությունը ավելի վաղ ներդրած քոլեջների փորձը: Փորձագիտական խումբը համարում է, որ ոչ միայն հայաստանյան, այլև միջազգային միջին մասնագիտական կրթության հաստատությունների փորձի համեմատական վերլուծությունը մեծապես կնպաստեր քոլեջի կրթական ծրագրերի բարելավմանը:

Իրականացվող կրթական ծրագրերի մոդուլային դասընթացների նկարագրերի և դասերի պլանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնված են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից առաջարկված կաղապարի վրա, և դրանցում մասնավորեցված չեն կոնկրետ առաջադրանքները և հանձնարարականների թեմաները, բազմազանեցված չեն դասավանդման և ուսումնառության մեթոդները: Մասնագիտական մոդուլների մեծ մասի, ինչպես նաև հանրակրթական առարկաների շրջանակում տրվում են ինքնուրույն և թիմային աշխատանքների հանձնարարականներ, որոնք միտված են ուսանողների հետազոտական, վերլուծական և ստեղծագործական մտքի զարգացմանը: Այս առումով, եղած լավագույն փորձի փաստաթղթավորումը և փոխանակման մեխանիզմների ներդրումը կարող է ապահովել կրթական ծրագրերի շարունակականությունը մանկավարժական կազմի սերնդափոխության կամ հնարավոր փոփոխությունների պայմաններում: Փորձագիտական խումբը գտնում է, որ

հետազոտական կամ գործնական բաղադրիչի կարևորումը նաև ամփոփիչ ատեստավորման քննության ժամանակ հնարավորություն կտա ավելի ճիշտ գնահատել ուսանողի հմտություններն ու կարողությունները:

Քոլեջը հետևողականորեն աշխատում է դասախոսական կազմի համալրման և սերնդափոխության ուղղությամբ: Հաշվի առնելով քոլեջի ուսանողների թվի աճը և նոր մասնագիտությունների ներդրումը՝ վերջին 2 տարիների ընթացքում քոլեջը մրցույթային կարգով աշխատանքի է ընդունել 20-ից ավել դասախոս, որոնց մեջ կան նաև գիտությունների թեկնածուներ: Գիտությունների թեկնածուներ կան նաև համատեղությամբ աշխատող դասախոսների մեջ: Այդուհանդերձ, քոլեջը դեռևս ունի որակյալ մասնագետների պակաս, մասնավորապես նոր մասնագիտությունների՝ «Սառնարանային տնտեսություն» և «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» գծով: Գնահատելի է մանկավարժական կազմի ջանքերը մասնագիտական ձեռնարկներ ստեղծելու ուղղությամբ, մասնավորապես լեզուների դասավանդման նպատակով: Դրանց մի մասը հաստատվել են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից և կիրառվում են այլ քոլեջներում ևս: Իր Ռազմավարական ծրագրում և դրա գործողությունների պլան-ժամանակացույցում քոլեջը կարևորում է մանկավարժական անձնակազմի վերապատրաստումը, սակայն քոլեջի ներքին ռեսուրսներով նախատեսվում է միայն մեթոդական վերապատրաստումներ: Դասախոսները մոդուլների դասավանդման մեթոդական վերապատրաստումներ են անցնում նաև ՄԿՈՒԶԱԿ-ում, իսկ որոշ դասախոսներ ստիպված են մասնագիտական վերապատրաստումներ անցնել սեփական նախաձեռնությամբ՝ ելնելով իրենց կողմից դասավանդվող առարկաների/մոդուլների բովանդակության արդիականացման կարիքներից: Փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսական կազմի պարբերաբար գնահատումը, արդյունքների հետևողական վերլուծությունն ու համապատասխան օղակներում քննարկումը և դրա հիման վրա խրախուսման մեխանիզմների գործարկումը կարող է մեծապես խթանել դասախոսների մոտիվացիան և նոր կադրերի ներգրավումը:

Քոլեջի ռազմավարական առաջնահերթություններից է նյութատեխնիկական ռեսուրսների բարելավումը և այդ նպատակով որոշակի միջոցներ է հատկացնում տարեկան բյուջեում: Այդուհանդերձ, հատկացված ռեսուրսները բավարար չեն մեծածավալ աշխատանքներ իրականացնելու համար, մասնավորապես խոհանոցի և հյուրանոցային նախատիպային սենյակների վերակառուցման և կահավորման համար, ինչն անհրաժեշտ է համապատասխան կրթական ծրագրերի արդյունավետության բարելավման համար: Ներկայումս քոլեջն ունի բավարար ռեսուրսներ ՄԿԾ-ների իրականացման համար և հնարավոր բացը փորձում է լրացնել այն կազմակերպությունների ռեսուրսներով, որտեղ ուսանողները պրակտիկա են անցնում: Փորձագիտական խումբը գտնում է, որ պետական կամ այլ դրամաշնորհային ծրագրերը կարող են հիմնանորոգումների հնարավորություն ընձեռել, քանի որ քոլեջի բյուջեի մեծ մասը տրամադրվում է աշխատավարձերին, և քոլեջը չունի ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու օրենսդրորեն սահմանված իրավունք:

Հաշվի առնելով, որ Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը տրամադրում է ՀՀ ՈԱԾ 3-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան

կրթական ծրագրեր, որոնց իրականացման արդյունավետությունը ապահովում է պարբերաբար վերապատրաստվող մանկավարժական անձնակազմի միջոցով, որոնց մեծ մասը կիրառում է դասավանդման և ուսումնառության ուսանողակենտրոն մոտեցումներ՝ զարգացնելու ուսանողների հետազոտական և վերլուծական կարողությունները, ինչպես նաև կազմակերպելով ուսանողների պրակտիկան տարբեր կազմակերպություններում և շարունակաբար բարելավելով ենթակառուցվածքն ու ռեսուրսները, կարելի է եզրակացնել, որ քոլեջի շնորհած որակավորումներն արժանահավատ են:

Քոլեջի կառավարման գործընթացների դիտարկումը և փաստաթղթերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ առկա խնդիրները պայմանավորված են որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլի ոչ լիարժեք իրականացմամբ և հավաստի տվյալների հավաքագրման և դրանց վերլուծությունների հիման վրա որոշումների կայացման բացակայությամբ, բացառությամբ մեկ կամ երկու դեպքի: Վերոնշյալը ակնհայտ է քոլեջի ռազմավարական ծրագրի զարգացման պլանի և դրա գործողությունների պլան-ժամանակացույցի համադրումից: Քոլեջի ՌԾ զարգացման պլանում շեշտադրված է հիմնականում նյութատեխնիկական բարելավման խնդիրը, մինչդեռ այլ կարիքները ուշադրությունից դուրս են մնացել: Գործողությունների պլան-ժամանակացույցը ավելի մանրամասն կազմված փաստաթուղթ է, որտեղ տարբերակված են քոլեջի գործունեության մի քանի ոլորտներ: Նախքան ռազմավարական պլանի մշակումը կառավարման համակարգի բոլոր մարմինների աշխատանքների բազմակողմանի գնահատումը և արդյունքների վերլուծությունը վեր կհաներ մի շարք այլ խնդիրներ, որոնց լուծման ուղղությամբ քոլեջը կարող էր միջոցառումներ ձեռնարկել: Բացի այդ, մշակված չեն գնահատման առանցքային ցուցիչներ, որոնց օգնությամբ կգնահատվեն իրականացված գործողությունները: Վերոնշյալ գործընթացների թերացումներով է պայմանավորված նաև հաշվետողականության համակարգի խնդիրները, մասնավորապես առանձին պաշտոնների և ստորաբաժանումների աշխատանքային պլանները և տարեկան հաշվետվությունները չեն կազմվում ըստ գործողությունների պլանի, հետևաբար ՌԾ-ի իրականացման գնահատման հնարավորություն չեն ապահովում:

Ընդհանուր առմամբ, կառավարման համակարգի որակի ապահովման համար անհրաժեշտ մի շարք ընթացակարգերի ներդրումը հնարավորություն կտա իրականացնել երկարաժամկետ պլանավորում քոլեջի գործունեության բոլոր հնարավոր ոլորտների ընդգրկմամբ և խուսափել իրավիճակային կառավարման մոտեցումից:

Կառավարման համակարգի ուսումնասիրությունը վեր հանեց նաև այլ թերի կողմեր: Այսպես, օրինակ՝ կառավարման տարբեր մարմինների կանոնակարգերի, իրականացված նիստերի արձանագրությունների, պաշտոնների անձնագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա են գործառույթների կրկնություններ, ինչը կարող է խոչընդոտել մի շարք գործողությունների համակարգվածության ապահովմանը, մասնավորապես արդյունքների ամբողջական և հետևողական վերլուծության առումով, օրինակ՝ պրակտիկաների մասին գործատուների կարծիքների կամ դասալսումների արդյունքների վերլուծություն: Մյուս կողմից, որպես դրական փաստ, անհրաժեշտ է նշել քոլեջում տիրող համագործակցային

մթնոլորտը, առկա խնդիրները, օրինակ՝ պրակտիկաների կազմակերպում, համատեղ լուծելու ջանքերը և մոտիվացիան: Բացառություն է կազմում որակի ներքին ապահովման գործընթացներին շահակիցների մասնակցությունը, ինչը կարելի է բացատրել մի կողմից որակի ապահովման մասնագետի հաստիքում երկարաժամկետ աշխատող ունենալու խնդրով (նրանք պարբերաբար փոխվում են) և նրա գործառույթների շատ լայն շրջանակով, մյուս կողմից՝ ներքին շահակիցների շրջանում քոլեջի գործունեության բարելավման համար որակի ապահովման գործընթացների կարևորության ոչ լիարժեք գիտակցմամբ: Փորձագիտական խումբը համարում է, որ ներքին շահակիցների շրջանում իրազեկման նպատակաուղղված միջոցառումների կազմակերպումը, որակի ապահովման պատասխանատուի գործառույթների հստակ սահմանափակումը և քոլեջի գործունեության բոլոր ոլորտներում ՊԻԳԲ շրջափուլի հետևողական իրականացումը՝ գնահատման և արդյունքների վերլուծության հստակ մեխանիզմների կիրարկմամբ, կնպաստի քոլեջում որակի մշակույթի ձևավորմանը:

Կառավարման համակարգի լավարկումը, գործառույթների հստակեցումը և համակարգումը կարող է մեծապես նպաստել նաև հետազոտական ոլորտի, հասարակայնության հետ կապերի, ինչպես նաև արտաքին կապերի բարելավմանը: Թեև քոլեջը մի շարք քայլեր է իրականացրել վերոնշյալ ուղղություններով և ունի ձեռքբերումներ, թերի է մնում գործողությունների համակարգումը, արդյունքների վերլուծությունը և դրա հիման վրա հետագա պլանավորումը: Հետազոտության ներառումը հաջորդ ՌԾ-ում՝ որպես քոլեջի զարգացման գերակա ուղղություններից մեկը, հնարավոր հետազոտական ուղղությունների սահմանումը՝ ըստ ՄԿԾ-ների կարող է խթանել քոլեջի հետազոտական գործունեությունը:

Քոլեջը կիրառում է տեղեկատվության տարածման մի քանի ուղիներ՝ ԷՔՍՊՈ-ների մասնակցություն, տեղեկատվական այցեր, պաշտոնական կայքէջի և սոցիալական կայքերի արդյունավետ գործարկում՝ հետադարձ կապի հնարավորություններով: Հասարակության լայն շերտերին քոլեջի դասախոսների և ուսանողների կողմից իրենց ստացած գիտելիքի անվճար փոխանցման մեխանիզմների ներդրումը մեծապես կնպաստի քոլեջի վարկանիշի բարձրացմանը և քոլեջի մասին տեղեկատվության տարածմանը:

Քոլեջում արտաքին կապերի ստեղծման ուղղությամբ աշխատանքները իրականացվում են բոլոր ստորաբաժանումների կողմից, ինչը գովելի է, սակայն, մյուս կողմից թերի է այդ աշխատանքների համակարգումը, ինչը կապահովի աշխատանքների արդյունավետության գնահատումը, կայուն համագործակցությունների հաստատումը: Այս ուղղությամբ աշխատանքները կարող են բավարար հիմք ստեղծել հետագայում միջազգայնացումը ռազմավարական պլանավորման մեջ ներառելու համար:

Փորձագիտական խումբը լիահույս է, որ զեկույցն ու խորհրդատվությունները կնպաստեն քոլեջի կառավարման գործընթացների, որակի ներքին ապահովման և ռազմավարական պլանավորման բարելավմանը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Քոլեջի առաքելության համահունչությունը ՀՀ ՈԱԾ-ի 3-րդ և 5-րդ մակարդակներին:
2. Քոլեջում առկա համագործակցային մթոնոլորտը:
3. Աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան կրթական ծրագրերի իրականացումը և նոր ծրագրերի ներդրումը:
4. Ուսանողների թվի կայուն աճը, նրանց հավաքագրման գործընթացի թափանցիկությունը:
5. Կարիերայի կենտրոնի ակտիվ աշխատանքը ուսանողների հետ, շրջանավարների հետ հետադարձ կապի պահպանումը և այլ ստորաբաժանումների հետ համագործակցությունը:
6. Իրենց մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների առկայությունը:
7. Դասախոսական կազմի շարունակական ընդլայնումը:
8. Դասախոսական կազմի մոտիվացիան և նախաձեռնողականությունը՝ մասնավորապես ուսումնական ձեռնարկներ մշակելու ուղղությամբ:
9. Գործատու-դասախոսների ներգրավումը:
10. Դասընթացներում ուսանողների հետազոտական հմտությունների և վերլուծական մտքի զարգացմանը միտված առաջադրանքների առկայությունը:
11. Քոլեջի ջանքերը ենթակառուցվածքների և ռեսուրսների շարունակական բարելավման ուղղությամբ:
12. Քոլեջի ջանքերը արտաքին կապերը բազմազանեցնելու, ուսանողների պրակտիկան և հետագա զբաղվածությունը ապահովելու ուղղությամբ:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Քոլեջի ՌԾ-ի զարգացման պլանի և գործողությունների պլան-ժամանակացույցի անհամապատասխանությունը:
2. Ռազմավարական պլանավորման համապատասխան ընթացակարգերի և մեխանիզմների, ինչպես նաև ԳԱՑ-երի բացակայությունը:
3. ՌԾ-ի և տարեկան պլանավորման ու հաշվետվողականության համակարգի փոխկապակցվածության բացակայությունը:
4. Պաշտոնների նկարագրերում գործառույթների չափազանց լայն շրջանակի ընդգրկումը և տարբեր պաշտոնների գործառույթների կրկնությունը:
5. Կրթական ծրագրերի մշտադիտարկման և որակի ապահովման մեխանիզմների ոչ լիարժեք կիրառումը:
6. Ներքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմների ոչ լիարժեք գործարկումը:
7. Դասախոսների մասնագիտական վերապատրաստման ուղղությամբ քայլերի և ռեսուրսների տրամադրման բացակայություն:
8. Հետազոտության ոլորտում ռազմավարական նպատակադրման բացակայությունը:

9. Ուսանողների և դասախոսների շարժունության և միջազգայնացման ուղղությամբ քայլերի բացակայությունը:
10. Որակի մշակույթի բացակայությունը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Համապատասխանեցնել քոլեջի ՌԾ-ի կարողությունների զարգացման ծրագիր բաժինը ՌԾ-ի գործողությունների պլանին:
2. Հաջորդ ՌԾ-ի մշակումից առաջ իրականացնել նախորդ ՌԾ-ի գործողությունների պլանի իրականացման վերլուծություն և ներքին ու արտաքին շահակիցների կարիքների վերլուծություն:
3. Մշակել ՌԾ-ի գործողությունների պլանով նախատեսված արդյունքների գնահատման թվային ցուցիչներ:
4. Մշակել տարեկան աշխատանքային պլանների և հաշվետվությունների նոր ձևաչափ, որը հիմնված կլինի ՌԾ գործողությունների պլանի կատարողականի վրա և կգնահատվի ըստ մշակված ԳԱՑ-երի:

Կառավարումն ու վարչարարությունը

5. Վերանայել պաշտոնների անձնագրերը և հստակ տարանջատել վարչական կազմի գործառույթները՝ սահմանելով պատասխանատվության շրջանակ:
6. Վերանայել քոլեջի կառուցվածքում ստորակարգային/հիերարխիկ հարաբերությունները՝ բացառելու վերահսկողական գործառույթների համընկնումները:
7. Իրականացնել կառավարման համակարգի արդյունավետության բազմակողմանի վերլուծություն և վերհանված խնդիրների լուծման ուղիների ու անհրաժեշտ նոր մեխանիզմների ներդրումը ամրագրել հաջորդ ՌԾ-ում:
8. Մշակել կառավարման համակարգի գնահատման քանակական և որակական ցուցիչներ:
9. Գործարկել տվյալների պարբերաբար հավաքագրման և վերլուծության մեխանիզմներ՝ բաշխելով աշխատանքը պատասխանատու ստորաբաժանումների միջև:
10. Ընդունել որոշումներ՝ հիմնվելով հավաստի տվյալների հենքով իրականացված մանրամասն, փաստաթղթավորված վերլուծությունների վրա:

Մասնագիտության կրթական ծրագրերը

11. Իրականացնել ՄԿԾ-ների՝ մասնավորապես մոդուլային դասընթացների շարունակական բարելավումներ՝ հիմնվելով մշտադիտարկման մեխանիզմների

ամբողջական գործիքակազմի պարբերաբար կիրառման, ինչպես նաև արտերկրի միջին մասնագիտական կրթական հաստատությունների համապատասխան ծրագրերի բենչմարքինգի հիման վրա:

12. Մշակել գործնական հմտություններ և կարողություններ ձևավորող առաջադրանքների փաթեթներ՝ ըստ առանձին ՄԿԾ-ների:
13. Դասապլանները ձևավորել՝ հիմնվելով մոդուլների բովանդակության պահանջների վրա՝ բազմազանեցնելով դասավանդման և ուսումնառության մեթոդները՝ ըստ թեմայի, մանրամասնել նաև գործնական առաջադրանքների և հանձնարարականների պահանջները:
14. Ներդնել բոլոր մասնագիտությունների համար վերլուծական բաղադրիչ պարունակող, կարողությունները և հմությունները գնահատող պրակտիկաների օրագրեր՝ ըստ կրթական ծրագրերի վերջնարդյունքների:
15. Ընդգրկել ամփոփիչ ատեստավորման քննության շրջանակներում գործնական հմտությունները ստուգող առաջադրանքներ՝ ելնելով տվյալ կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքների բնույթից:

Ուսանողները

16. Մշակել և կիրառել ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով հստակ մեխանիզմներ:
17. Ներդնել տրամադրվող կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմներ:
18. Ներդնել ՈւԽ-ի տարեկան աշխատանքների պլանավորման՝ ըստ իրենց գործառույթների շրջանակի և տարեկան հաշվետվողականության ընթացակարգեր:
19. Ընդլայնել Գիտահիննովացիոն բաժնի միջոցառումներում ընդգրկված ուսանողների շրջանակը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

20. Կրթական կարիքներից ելնելով՝ ֆինանսական ռեսուրսներ տրամադրել դասախոսների մասնագիտական վերապատրաստումների համար:
21. Ձևավորվել կադրային բազա՝ ներգրավելով գործատու-դասախոսների լայն շրջանակ բոլոր մասնագիտությունների գծով:
22. Մշակել խրախուսման արդյունավետ մեխանիզմներ՝ հիմքում դնելով դասախոսների պարբերաբար գնահատումը:

Հետազոտությունը և զարգացումը

23. Հետազոտական բաղադրիչը դարձնել ռազմավարական պլանավորման կարևոր մաս՝ մասնավորեցնելով գերակա ուղղությունները ըստ ՄԿԾ-ների:
24. Ներդնել հետազոտությունը խթանող մեխանիզմներ և ընթացակարգեր:

25. Յուրաքանչյուր ՄԿԾ-ի շրջանակում սահմանել հետազոտական բաղադրիչը և ստեղծել համապատասխան հետազոտական առաջադրանքների բանկ:
26. Զարգացնել և ներդնել հետազոտական բաղադրիչ պարունակող աշխատանքների արդյունավետության գնահատման մեխանիզմները:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

27. Իրականացնել արտաբյուջետային միջոցների հայթայթում՝ դիմելով պետական կամ այլ դրամաշնորհային ծրագրերի:
28. Գործատուների ռեսուրսների օգտագործման հնարավորություններն ընդլայնել՝ համապատասխան պայմանագրերի կնքմամբ:
29. Բյուջեի բաշխումը կատարել ըստ կոնկրետ կրթական ծրագրերի կարիքների՝ հիմնվելով դրանց վերլուծության արդյունքների վրա:

Հասարակական պատասխանատվությունը

30. Լիարժեք գործարկել քոլեջի պաշտոնական կայքը՝ տեղեկատվությունը հասանելի դարձնելով շահակիցների առավել լայն շրջանակների, ինչպես հայերենով, այնպես էլ օտար լեզուներով:
31. Նախաձեռնողականություն ցուցաբերել ԼԿԾ-ների և գիտելիքի փոխանցման միջոցառումների իրականացման և դրանց մասին տեղեկատվության տարածման ուղղությամբ:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

32. Քայլներ իրականացնել արտաքին կապերի ստեղծման աշխատանքները համակարգելու ուղղությամբ:
33. Արտաքին կապերի ընդլայնման և միջազգայնացման հնարավորությունների ստեղծման ուղղությամբ միջոցառումներ նախատեսել՝ հիմնվելով քոլեջի կարիքների և ներուժի վերլուծության վրա:

Որակի ներքին ապահովման համակարգը

34. Վերանայել որակի ապահովման մասնագետի պաշտոնի նկարագիրը և հստակեցնել նրա գործառույթները:
35. Ներդնել ՈԱ գործընթացների պլանավորման մշակույթ՝ ներառելով յուրաքանչյուր ոլորտի որակի ապահովման գործիքակազմը:
36. Կազմակերպել վերապատրաստումներ դասախոսական ու վարչական անձնակազմի համար և բարելավել առարկայական հանձնաժողովների հետ համագործակցությունը:
37. Հստակ սահմանել անցկացվող հարցումների, ֆոկուս խմբերի, կլոր սեղանների նպատակները, պարբերականությունը և արդյունքների ներկայացումը շահակիցներին:

38. Ապահովել որակի ապահովման պատասխանատուի համագործակցությունը այլ ՄՈՒՀ-երի համապատասխան կենտրոնների և աշխատակիցների հետ:



Լիլիթ Բաղալյան
Փորձագիտական խմբի ղեկավար

06 սեպտոմբերի, 2023 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

1. **Լիլիթ Բաղալյան՝** Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Քրիստինե Հակոբյան՝** Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, դասախոս, փորձագիտական խմբի անդամ,
3. **Վիոլետտա Դավիդյան՝** Երևանի տարածաշրջանային №1 պետական քոլեջի դասախոս, փորձագիտական խմբի անդամ,
4. **Ալբերտ Թադևոսյան՝** Երևանի պետական հումանիտար տեխնիկական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ տնօրենի օգնական **Լիանա Ալավերդյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը 13.01.2023թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ-ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հաշվի առնելով ուսումնական հաստատության առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ–ը առցանց աշխատաժողովներ է իրականացրել հավատարմագրվող ՄԿՈ հաստատությունների հետ: Աշխատաժողովները նպատակ են ունեցել նախապատրաստել քոլեջներին հավատարմագրման գործընթացի կազմակերպման փուլերին: Աշխատաժողովներին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները, հավատարմագրման դիմելու համար լրացվող էլեկտրոնային հարցաշարը, ինքնավերլուծության ու SWOT վերլուծության իրականացման առանձնահատկությունները: Ուսումնական հաստատությունն իրականացրել է փորձնական SWOT վերլուծություն, որը քննարկվել է ՈԱԱԿ աշխատակիցների հետ:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: Համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ–ի պահանջներին ստուգելու նպատակով: Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությունը չի համապատասխանել սահմանված միասնական ձևաչափին, առկա են եղել տեխնիկական, ձևաչափային և բովանդակային թերություններ: Ինքնավերլուծությունը վերադարձվել է քոլեջին, Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը սահմանված ժամկետներում շտկել է թերությունները և ինքնավերլուծությունը համապատասխանեցրել ՈԱԱԿ սահմանված ձևաչափին: Ինքնավերլուծությունը ՈԱԱԿ է ներկայացվել 02.05.2022թ.:

Նախապատրաստական փուլ

Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանաջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,

3.ՄԿՈՒ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում,

4.նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակարգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, զուգահեռ հանդիպումներ և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել ընտրված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն ուսումնասիրել են ուսանողներին տրվող հանձնարարականները, իրականացրել են դասալսումներ՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը:

Նախանական այց

2023 թվականի մայիսի 12-ին տեղի է ունեցել նախապատրաստական այց Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ. մայիսի 26-29-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցին նախորդող շաբաթվա ընթացքում փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողն այցելել են քոլեջ, դիտարկել քոլեջի

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ենթակառուցվածքներն ու ռեսուրսները[3], իրականացրել դասալսումներ: Այնուհետև փորձագետներն ու համակարգողն ունեցել են փակ հանդիպում: Հանդիպման նպատակն էր դուրս բերել քոլեջի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն[4]:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին՝ 25.08.2023թ.: Նախնական զեկույցի վերաբերյալ Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը դիտարկումներ չի ներկայացրել: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 06.09.2023թ. :

Լիանա Ալավերդյան
Փորձագիտական խմբի համակարգող

06 սեպտեմբերի, 2023 թ.

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
[4] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ Ն. ԱՃԵՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԻՎ 2 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. «Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ քոլեջ) շահույթ չհետապնդող իրավաբանական անձ հանդիսացող միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է:

1935 թ.-ին ստեղծվել է Երևանի Առևտրատնտեսագիտական տեխնիկումը: Այնուհետև 1959թ. նախարարների խորհրդի որոշումով միացվել և դարձել է ֆինանսատնտեսագիտական տեխնիկում: Նախարարության 1967թ. հուլիսի 1-ի հրամանով առանձնացել և դարձել է Սովետական առևտրի Երևանի տեխնիկում: 1990թ. ՀՀ ժողովրդական նախարարության որոշման համաձայն վերանվանվել է Երևանի առևտրատնտեսագիտական տեխնիկում: 1999թ. Երևանի քաղաքապետի ապրիլի 23-ի որոշման համաձայն վերանվանվել է Նորայր Աճեմյանի անվան առևտրի և սպասարկման պետական քոլեջ: 2012թ. ՀՀ ԿԳ նախարարի հրամանով վերանվանվել է «Երևանի Նորայր Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ» ՊՈԱԿ:

Երևանի տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը գտնվում է Մոլդավական 37ա հասցեում, զբաղեցնում է 5800 քառ. մ տարածք, բաղկացած է 2 մասնաշենքից՝ վարչական և ուսումնական:

Կրթություն. Քոլեջի գործունեության հիմնական առարկան միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է ՀՀ օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ նախատեսված կարգով: Քոլեջում տարբեր մասնագիտությունների գծով սովորում է շուրջ 600 ուսանող: Հասարակական կյանքի տարբեր ոլորտների համար պետական կրթական չափորոշիչներին համապատասխան քոլեջը պատրաստում է սպասարկման ոլորտի մասնագետներ:

Քոլեջն իրականացվում է 8 միջին մասնագիտական՝ «Հաշվապահական հաշվառում», «Կառավարում», «Շուկայաբանություն», «Սառնարանային տնտեսություն», «Կոսմետիկա և դիմահարդարում», «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում», «Հանրային սննդի տեխնոլոգիա», «Ապահովագրական գործ» և 1 նախնական մասնագիտական՝ «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» կրթական ծրագրեր:

Ուսուցումը քոլեջում կազմակերպվում է ժամանակակից ձևերով ու մեթոդներով՝ հիմք ունենալով ավանդական մեթոդների լավագույն և արդարացված տարբերակները: Դասախոսական անձնակազմի զգալի մասը ժամանակ առ ժամանակ անցնում է վերապատրաստում, որը նպաստում է կատարելագործելու նրանց մասնագիտական հմտությունները:

Հետազոտություն/ստեղծագործ մտածելակերպի ձևավորում. Առաջնորդվելով զարգացման գործողությունների պլան-ժամանակացույցով՝ քոլեջի կառավարման

համակարգի արդյունավետությունը ուսանողական և դասախոսական ներուժի միջոցով զարգացնելու համար քոլեջը կարևորում է հետազոտության դերն ու կապը ուսումնառության հետ: Մշտապես կազմակերպվել և անցկացվել են տարաբնույթ հետազոտական աշխատանքներ, որտեղ ներգրավված են եղել դասախոսներ և ուսանողներ:

ՄՈՒՀ-ն ունի հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնությունները արտահայտող ռազմավարություն, որոնց ուղղություններն են՝ ուսանողական նախաձեռնություններ՝ ռեֆերատ աշխատանքներ, մասնագիտական հետազոտական աշխատանքներ, շուկայի վերլուծություն և երիտասարդական ներուժի բացահայտում, կարևորում, կամավորական և հանրային աջակցության միջոցառումների ակտիվացում/էքսպո ցուցահանդեսներ, մրցույթների մասնակցություններ, ձեռնարկատիրական համակարգի հնարավորությունների գնահատում:

Արտաքին կապեր. Քոլեջը կարևորում է արտաքին կապերի հաստատումը, որը նպաստում է փորձի փոխանակմանը, զարգացմանն ու միջազգայնացմանը: ՄՈՒՀ-ն ըստ ռազմավարության առաքելության ձգտում է տարածաշրջանային և միջազգային համագործակցության: Քոլեջի նպատակներից է մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում նորարարությունների, ինչպես նաև տեղայնացված առաջավոր միջազգային փորձի ներդրումը, զարգացումն ու տարածումը, կրթության գլոբալ համակարգերի ինտեգրումը: Միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների, գործատու-դասախոսների, այլ քոլեջների, և սոցիալական գործընկերների հետ համագործակցության արդյունքում քոլեջը խրախուսում է զարգացումն ու ուսման որակի բարձրացումը:

Որակի ապահովում. Քոլեջը կարևորելով իր առաքելությունը և ռազմավարական նպատակների իրագործումը շարունակաբար ձեռնարկում և իրականացնում է քայլեր, որոնք միտված են կրթության որակի բարելավմանն ու առաջխաղացմանը՝ հաշվի առնելով առկա և հնարավոր ռեսուրսների առկայությունը, մշտապես դիտարկելով աշխատաշուկայի պահանջները միջին մասնագիտական որակավորմամբ աշխատակիցներ պատրաստելու հարցում: Քոլեջի որակի ապահովման ենթակառուցվածքը խթանում է հետազոտության իրականացումը ուսանողների շրջանում, որը նպատակ ունի վերհանել առկա անհամապատասխանություններն ու կարիքները ուսումնառության և դասավանդման գործընթացներում: Քոլեջի որակի ապահովման ենթակառուցվածքի առաքելությունն է քոլեջում ներքին մեխանիզմների, գնահատող գործիքակազմի ներդրումը և ընթացակարգերի սահմանումը, որոնք կապահովեն կրթության որակի շարունակական բարելավումը:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
Ի. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը (այսուհետ՝ Քոլեջ) իրականացնում է միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր ըստ ՈԱՇ-ի 3-րդ և 5-րդ մակարդակների: Քոլեջի հիմնական առաքելությունն է պատրաստել փոքր և միջին բիզնեսի մասնագետներ՝ միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի իրականացմամբ՝ տնտեսության ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ինչպես նաև ապահովել սպասարկման ոլորտի աշխատողների և առանձին անհատների վերապատրաստումը լրացուցիչ կրթական ծրագրերի ու կարճաժամկետ դասընթացների միջոցով:

Քոլեջը գործում է ըստ իր կանոնադրության և 2020-2025 թթ. հնգամյա ռազմավարական ծրագիրի (ՌԾ): Ռազմավարական ծրագիրը մեծամասամբ նկարագրական բնույթի է: Ռազմավարական ծրագրում սահմանված են քոլեջի առաքելությունը, տեսլականը, նպատակն ու խնդիրները, գործառույթները, իրականացվող ծրագրերը, շահակիցների շրջանակը և կառավարման մարմինները: ՌԾ-ում կարողությունների զարգացման պլանը ներկայացված է 10 կետով, որտեղ տարբերակված չեն ուսումնամեթոդական, հետազոտական, նյութատեխնիկական, որակի ապահովման և այլ ոլորտներ: Սահմանված կետերից 5-ը վերաբերում են նյութատեխնիկական բազայի բարելավմանը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ նաև, որ քոլեջի 2020-2025 թթ. Ռազմավարական ծրագիրը նույնությամբ կրկնում է 2015-2020թթ ՌԾ-ն: Օրինակ՝ 2020-2025թթ . ՌԾ-ում ներառված է ինովացիոն ծրագրերի մշակման և քաղաքականության նոր բաժին ստեղծելու նպատակը, որն արդեն իսկ իրականացվել է 2019թ-ին: Բացի այդ առկա է նաև 2017-2021թթ Ռազմավարական ծրագիր: 2017-2021 թթ. ՌԾ-ի հետ գործող ՌԾ-ի համեմատությունը ցույց է տալիս, որ փոփոխության է ենթարկվել միայն զարգացման պլանի բաժինը, որտեղ դրույթների մի մասը փոփոխված է և գործող ՌԾ-ում մասնավորեցված են հատկապես նյութատեխնիկական բազայի բարելավմանը վերաբերող կետերը: Պետք է նշել նաև, որ տնօրենի ընտրության համար ներկայացված զարգացման պլանում գործող տնօրենը մատնանշել է քոլեջի թույլ և ուժեղ կողմերը, հնարավորություններն ու արտաքին վտանգները: Ներկայացված են քոլեջի գործառույթների շրջանակում հիմնախնդիրներն ու լուծման ուղիները: Այդուհանդերձ, տնօրենի կողմից ներկայացված զարգացման ծրագրի ոչ բոլոր դրույթներն են արտացոլված քոլեջի ՌԾ գործողությունների իրականացման պլանում: Ներկայացված զարգացման ծրագիրը շատ ավելի ընդգրկուն է, այնտեղ շեշտադրվում են նաև միջազգայնացման, ինքնուրույն ֆոնդահայթաթման, դրամաշնորհային ծրագրերին դիմելու

հնարավորությունները, որոնք գործողությունների պլանում տեղ չեն գտել: Զարգացման ծրագրում ներկայացված քոլեջի տեսլականը ավելի շատ միտված է ապագային՝ կարողությունների զարգացմանը միտված ծրագրերի ապահովում, մասնագիտական միջավայրի հետ հաղորդակցության և սոցիալական գործընկերության միջավայրի ընդլայնում և այլն, ի տարբերություն ՌԾ-ի, որտեղ կարևորվում է միայն որակյալ կրթության ապահովումը:

2020-2025թթ ՌԾ իրականացման գործողությունների պլան-ժամանակացույցը ընդգրկում է 6 նպատակ և զարգացման ուղղություն, որոնք էլ իրենց հերթին բաղկացած են միջոցառումներից, գործողություններից, ակնկալվող արդյունքից, ժամկետից, ներդրումներից և հնարավոր ռիսկերից: Ի տարբերություն ՌԾ-ի, գործողությունների պլան-ժամանակացույցում առկա է ոլորտների տարանջատում, ավելին, գործողությունների պլանը և ՌԾ-ում նշված 10 կետերը չեն համընկնում: Գործողությունների պլանում սահմանված ակնկալվող արդյունքները չունեն թվային ցուցիչներ, իսկ ֆինանսական հատկացումները հիմնականում նախատեսված է իրականացնել ներքին ռեսուրսներից, ինքնաֆինանսավորմամբ, պետական միջոցներից, արտաբյուջեից կամ դրամաշնորհներից: Հստակեցված չեն ներքին ռեսուրսների, ինքնաֆինասավորման և արտաբյուջեի աղբյուրները:

Ըստ ինքնավերլուծության՝ ներքին և արտաքին շահակիցների կարիքները վերհանվում են հարցումների, կլոր սեղան քննարկումների և ծնողների, գործատուների հետ հանդիպումների միջոցով: Կարիերայի կենտրոնի և որակի ներքին ապահովման պատասխանատուները շահակիցների՝ ուսանողների և դասախոսների կարիքների վերհանման նպատակով մշակել են հարցաշարեր: Հարցումներն իրականացվում են քոլեջ նոր ընդունված, ավարտական կուրսերի ուսանողների և շրջանավարտների, ինչպես նաև դասախոսների շրջանում:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հարցումներն իրականացվում են միայն առաջին կուրսի ուսանողների շրջանում, չկան հարցումների վերլուծություններ, որոնք կարող են ընկած լինել ՌԾ-ի կամ գործողությունների պլան-ժամանակացույցի հիմքում: Այդուհանդերձ, նշենք, որ երկու փաստաթղթերում էլ կարևորված է ուսխորհրդի ու ուսանողների հետ աշխատանքը և դասախոսների վերապատրաստումները խթանելու նպատակը:

Ինքնավերլուծության համաձայն՝ ընթացքի մեջ է «Չափորոշիչների համապատասխանեցում գործատուների պահանջների հետ» ծրագիրը, որի նպատակն է վերհանել գործատուների կարիքները մասնագետներ պատրաստելու ուղղությամբ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կազմվել են հնարավոր գործատուների ցանկ, սակայն հարցումները դեռևս չեն իրականացվել: Գործատուների հետ համատեղ ծրագրերի ու միջոցառումների իրականացումը կարևորված է ՌԾ գործողությունների պլան-ժամանակացույցով և քոլեջը որոշակի քայլեր է արել այդ ուղղությամբ, մասնավորապես դուալ կրթության և քոլեջում իրականացվող բոլոր կրթական ծրագրերի պրակտիկայի շրջանակում:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջում առկա են տնօրենի ու ստորաբաժանումների ղեկավարների տարեկան հաշվետվությունների կազմման և վերլուծության մեխանիզմներ:

Տարեկան հաշվետվությունները ներկայացվում են ռազմավարական ծրագրի իրականացման տեսանկյունից: Ինքնավերլուծությունում նշվում է նաև, որ քոլեջը յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին իր աշխատակիցներին ներկայացնում է հաշվետվություն՝ ըստ գնահատման առանցքային ցուցանիշների: Փորձագիտական այցի ընթացքում ներկայացված փաստաթղթերի վերլուծությունից պարզ դարձավ, որ տարեկան հաշվետվությունները հիմնված չեն ՌԾ-ի գործողությունների պլան-ժամանակացույցի իրականացման վրա: Դրանք ամփոփում են տվյալ ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքները: Բացառությամբ կարիերայի կենտրոնի հաշվետվությունից, որտեղ ներկայացված են շրջանավարտների զբաղվածության վիճակագրական տվյալներ, մյուս ստորաբաժանումների հաշվետվություններում բացակայում են վիճակագրական վերլուծությունները և արդյունքների ամփոփումը: Հատկանշական է նշել, որ ՌԾ գործողությունների պլանում սահմանված ակնկալվող արդյունքները ևս ընդհանրական բնույթի են (օրինակ՝ մանկավարժական թիմը կարողանում է նախագծել և առաջարկել լրացուցիչ կրթական ծրագրեր՝ ապահովելով լրացուցիչ, արտաբյուջետային միջոցներ, քոլեջի թիմը տեղեկացված է ոլորտային զարգացումների և հնարավոր աշխատատեղերի մասին և այլն) և ոչ չափելի: Քոլեջի տնօրենի վերջին երկու տարեկան հաշվետվությունները բոլոր ստորաբաժանումների հաշվետվությունների փաթեթն է: Սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ 2018 և 2019 թվականների տարեկան հաշվետվությունները ավելի համակարգված կառուցվածք ունեն: Դրանցում ներկայացված են հետևյալ բաժինները՝ Տնօրենի գրասենյակ (փաստաթղթային ապահովում, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի վերանայում, կարճաժամկետ դասընթացների մոդուլային ծրագրերի մշակում, կրթաթոշակ, ուսումնական վճարի մասնակի փոխհատուցում և այլն), Ուսումնական մաս (ըստ 4 առարկայական հանձնաժողովների հաշվետվությունների և պետական ամփոփիչ քննությունների), այնուհետև տնտեսական մասը, կարիերայի ստորաբաժանումը, գրադարանը և որակի ապահովման ստորաբաժանումը:

Նշենք նաև, որ 2022թ-ին տնօրենի կողմից ներկայացվել է ՌԾ-ի կատարողականի վերաբերյալ հաշվետություն: Հաշվետվությունը անդրադառնում է գործողությունների պլանի իրականացմանը՝ ըստ նպատակների: Հաշվետվությունը ևս նկարագրողական բնույթ ունի: Այն անդրադառնում է իրականացված մի շարք կոնկրետ միջոցառումների, սակայն առկա չեն թվային տվյալներ, վերլուծություն կամ գործողությունների պլանով նախանշված կոնկրետ արդյունքների հիշատակում:

Այդուհանդերձ, քոլեջի կառավարման խորհրդի հետ հանդիպումից պարզ դարձավ, որ ներկայացված տարեկան հաշվետվությունների ներկայացման և բյուջեի հաստատման ժամանակ տեղի են ունենում ակտիվ քննարկումներ և առաջարկվում խնդիրների լուծման ուղիներ: Կառավարման և մանկավարժական խորհուրդներում տեղի ունեցած քննարկումները համապատասխան արձանագրություններում մանրամասնված չեն:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը փորձում է հիմքեր ստեղծել ռազմավարական կառավարման և պլանավորման համար: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը կարևորում է, որ այս ճանապարհին հստակեցվեն ռազմավարական ծրագրերի դրույթները և համապատասխանեցվեն գործողությունների ծրագրին, ինչը կնպաստի համակարգված աշխատանքին:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանում հիմնականում արտացոլված են քոլեջի բնականոն գործունեության համար անհրաժեշտ գերակա ուղղություններով աշխատանքները, որը նպաստում է շահակիցների կողմից հիմնական նպատակների ընկալմանը և դրանց իրագործման մեջ նրանց ներգրավվածությանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ գործողությունների պլանի հիման վրա ՌԾ զարգացման պլանի լրամշակումն, ըստ քոլեջի գործունեության ոլորտների՝ ներկայացնելով նպատակներն ու խնդիրները, հնարավություն կստեղծի քոլեջում համահունչ առաջընթաց ապահովելու և նպատակներին հասնելու համար: Բացի այդ, փորձագիտական խմբի դիտարկմամբ ՌԾ-ում որպես նպատակ կոնկրետ խնդիրների սահմանումը (վարսավիրանոցի կամ խոհանոցի վերանորոգումը) կխոչընդոտի հիմնական նպատակների սահմանմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՌԾ գործողությունների պլան-ժամանակացույի իրատեսականությունը: Մասնավորապես գովելի է, որ քոլեջը կարևորում է ուսանողական ներուժի օգտագործումը կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով և մանկավարժական անձնակազմի մասնագիտական հմտությունների կատարելագործումը վերապատրաստումների միջոցով: Ընդհանուր առմամբ, ներքին շահակիցների կարիքները որոշակիորեն արտացոլված են գործողությունների պլանում: Փորձագիտական խումբը գտնում է, որ ՌԾ-ն և դրա գործողությունների պլանը առավել համապարփակ կլինեն, եթե հիմնված լինեն նախօրոք իրականացված վերլուծությունների վրա:

Փորձագիտական խումբը գտնում է, որ գործողությունների պլանում սահմանված ընդհանրական արդյունքները չափելի չեն, ինչը սահմանափակում է ստորաբաժանումների աշխատանքի գնահատումը և ներկայացված տարեկան հաշվետվությունները հստակ գնահատելու հնարավորությունը: Առկա չեն նաև հաշվետվությունների ձևաչափեր, որոնք հիմնված կլինեն գործողությունների պլանի իրականացման և արդյունքների թվային վերլուծության վրա, ինչը թույլ չի տալիս գնահատել նպատակադրումների հաջողությունը, պարզ դարձնել պլանավորված գործողությունների որոշակիությունը ինչպես առաջանցիկ, այնպես էլ հետահայաց կերպով:

Փորձագիտական խումբը գտնում է, որ հաշվետվությունների քննարկման արդյունքների ավելի մանրամասն ներկայացումը կառավարման և մանկավարժական խորհուրդների արձանագրություններում, ինչպես նաև դրանց վերլուծությունները, հնարավորություն կտան դրանք որպես հիմք ընդունել հաջորդ տարվա աշխատանքային

պլանների մշակման և անհրաժեշտության դեպքում նաև ՌԾ-ի ու դրա գործողությունների պլանի լրամշակման գործընթացում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջում իրականացվող գործընթացները բխում են ռազմավարական գործողությունների պլանից, քոլեջն ունի իր նպատակներն ու խնդիրները արտացոլող ՌԾ և գործողությունների պլան-ժամանակացույց, ներկայացված է արտաքին ու ներքին շահակիցների կարիքները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը համապատասխանում է Չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի կառավարումը իրականացվում է ՀՀ Սահմանադրության, Օրենսդրության և քոլեջի կանոնադրության համաձայն: Քոլեջն ունի մշակված ներքին կարգապահական կանոններ, որտեղ սահմանված են քոլեջի տնօրենի կողմից ընդունվող իրավական ակտերի տեսակը, բնույթը, աշխատողներին իրազեկելու կարգը, աշխատողներին աշխատանքի ընդունումը, այլ աշխատանքի փոխադրումը և աշխատանքից ազատումը, աշխատանքային պայմանագրի տեսակները, աշխատանքային ռեժիմը, քոլեջի աշխատողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցները, քոլեջի ուսանողների հիմնական իրավունքներն ու պարտականությունները և այլն:

Քոլեջի կառավարման մարմիններն են՝ հիմնադիրը և ՀՀ կառավարության որոշմամբ լիազոր մարմինը՝ ՀՀ ԿԳՄՄՆ, քոլեջի կառավարման խորհուրդը (5 տարի ժամկետով) և քոլեջի գործադիր մարմինը՝ քոլեջի տնօրենը:

Կառավարման խորհուրդը կազմված է 12 անդամից, որոնցից 7-ը պետական պաշտոն զբաղեցնող, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ, սոցիալական գործընկերներ և տարածքային զբաղվածության ծառայության ներկայացուցիչներ են, իսկ 5-ը՝ քոլեջի ներկայացուցիչներ (2 դասախոս և 3 ուսանող):

Քոլեջում գործում են մի շարք խորհուրդներ, որոնք ունեն իրենց հաստատված գործունեության կարգերը: Քոլեջում գործում է տնօրինական խորհուրդ, որը խորհրդակցական մարմին է (խորհրդում ի պաշտոնե ընդգրկվում են քոլեջի կառուցվածքային բոլոր

ստորաբաժանումների ղեկավարները, 2 դասախոս և 1 ուսխորհրդի ներկայացուցիչ՝ ընդհանուր 13 անդամ): Նիստերն անց են կացվում բաց՝ 2 ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում նաև արտահերթ:

Գործում է նաև մանկավարժական խորհուրդ, որը քոլեջի բոլոր մանկավարժներից բաղկացած խորհրդակցական մարմին է քոլեջի տնօրենի նախագահությամբ: Նիստերն անցկացվում են՝ 2 ամիսը մեկ անգամ, կարող են հրավիրվել նաև արտահերթ նիստեր: Մանկավարժական խորհրդի նիստերը բաց են, դրանց կարող են մասնակցել ծնողները և ուսանողները:

Քոլեջում մեթոդիստի նախագահությամբ գործում է ուսումնամեթոդական խորհուրդ, որի գործառույթներն են առարկայական ծրագրերի և թեմատիկ պլանների կազմման աշխատանքներին աջակցությունը, դասախոսների մանկավարժամեթոդական հմտությունների բարելավման նպատակով մեթոդական նիստերի կազմակերպումը, դասալսումների անցկացումը և արդյունքների վերլուծությունը, սկսնակ դասախոսներին մեթոդական աջակցությունը, կրթական չափորոշիչներին ուսումնամեթոդական գրականության համապատասխանության ապահովումը և այլն:

Չորս առարկայական հանձնաժողովները՝ Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, Հաշվապահական հաշվառման և տնտեսագիտության, Հանրակրթական առարկաների և Լեզուների առարկաների, նիստեր են գումարում ամիսը մեկ անգամ: Ըստ պաշտոնի նկարագրի՝ առարկայական հանձնաժողովների նախագահները իրականացնում են ուսումնակազմակերպչական և մեթոդական աշխատանքներ ուսման որակի բարձրացման նպատակով, վերահսկում են առարկայական ծրագրերի կազմումը և դասավանդվող նյութի բովանդակությունը՝ ապահովելու դրանց համապատասխանությունը կրթական չափորոշիչներին, վերահասկում են մոդուլային ուսուցման համար անհրաժեշտ փաստաթղթավարությունը, կազմակերպում փոխադարձ դասալսումներ և այլն:

Վերոնշյալ խորհուրդների և հանձնաժողովների կանոնադրությունների, փոխտնօրենների և ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնի անձնագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ որոշ դեպքերում նրանց գործառույթները համընկնում են և հաճախ մեկ ստորաբաժանմանը, օրինակ՝ առարկայական հանձնաժողովներին, վերահսկում է մի քանի օղակ՝ ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, ուսումնական մասի ղեկավար, մեթոդիստ, հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերի համակարգողներ:

Համընկնում են տնօրինական և մանկավարժական խորհուրդներում քննարկվող հարցերի շրջանակը, օրինակ՝ զարգացման ծրագիր, ուսումնական և առարկայական ծրագրեր: Որոշակի համընկնում է դիտվում ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի և ուսումնական մասի ղեկավարի գործառույթներում, մասնավորապես՝ կրթական գործընթացի վերահսկման և կազմակերպման մասով, թեև ներկայումս փոխտնօրենի ֆիզիոլոգիական արձակուրդում գտնվելու կապակցությամբ նրա պարտականություններն իրականացնում է ուսումնական մասի ղեկավարը: Մանկավարժական անձնակազմի մեթոդական պատրաստաձության և վերապատրաստման

համար պատասխանատու են և՛ առարկայական հանձնաժողովների ղեկավարները, և՛ մեթոդիստը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նրանք գործում են փոխհամագործակցության սկզբունքով՝ փորձելով լրացնել և աջակցել միմյանց: Օրինակ՝ դասալսումներ են անցկացնում կրթական ծրագրերի համակարգողները, առարկայական հանձնաժողովների ղեկավարները, մեթոդիստը և որակի ապահովման մասնագետը: Դասալսումների արդյունքները քննարկվում են համատեղ, սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն կոնկրետ փաստեր, թե նման քննարկումների հիման վրա ինչ որոշումներ են կայացվել և ինչպես են գնահատել նման մոտեցման արդյունավետությունը:

Նմանատիպ մոտեցում է ցուցաբերվում նաև պրակտիկաների կազմակերպման հարցում: Քոլեջն ունի պրակտիկայի պատասխանատու, որը զբաղվում է կազմակերպչական հարցերով, սակայն գործատուների մոտ ուսանողների պրակտիկայի տեղավորմամբ զբաղվում են նաև առարկայական հանձնաժողովների ղեկավարները, կարիերայի կենտրոնի պատասխանատուները՝ օգտագործելով նաև անձնական կապերը: Մի կողմից, օգտագործելով բոլոր միջոցները, քոլեջը փորձում է ապահովել ուսանողների պրակտիկան, մյուս կողմից, բացառությամբ մի քանի օրինակի, առկա չէ կոնկրետ կազմակերպությունների շրջանակ, որոնց հետ տևական համագործակցություն կապահովվեր, ինչը մասնավորապես կարևոր է դուալ կրթության արդյունավետ իրականացման համար: Քոլեջի ղեկավար կազմը սա բացատրում է այն հանգամանքով, որ գործատուները հակված չեն քոլեջի ուսանողներին և շրջանավարտներին աշխատանքի ընդունել կամ ապահովել մեծ թվով ուսանողների պրակտիկան: Թեև նաև նշում են, որ վերջին տարիներին գործատուները ակտիվացել են, քանի որ առկա է կադրերի մեծ հոսունություն և ըստ նոր օրենսդրությամբ իրավունք ունեն անչափահասներին ընդունել որպես փորձնակ: Այս ամենի արդյունքում, սակայն, չի պահպանվում համակարգված հետադարձ կապ գործատուների հետ՝ նրանց դիտողություններն ու առաջարկությունները ստանալու և վերլուծելու նպատակով:

Վերջին տարիներին կառուցվածքային մեծ փոփոխություններ քոլեջում չեն իրականացվել: 2019թ-ին հիմնվել է Գիտահինովացիոն բաժինը, որը դեռևս կայացման փուլում է և հիմնականում զբաղվում է տեղեկատվական և իրազեկման գործունեությամբ, քան նախաձեռնողական, ինչպես ենթադրվում էր քոլեջի ՌԾ-ով: Ինչ վերաբերում է Որակի ապահովման բաժնին, ապա փաստաթղթերի մի մասում, այդ թվում նաև ինքնավերլուծության մեջ այն նշվում է որպես բաժին, իսկ ըստ ներկայացված կառուցվածքի՝ առանձին ստորաբաժանում չէ, այլ որակի ապահովման մասնագետի հաստիք, որը հաշվետու է տնօրենին: Բացի այդ, տնօրենի որոշմամբ նշանակվել են նաև կրթական ծրագրերի երկու համակարգողներ, որոնք ունեն վերահսկողական գործառույթ, սակայն, ինչպես վերը նշվեց, մասնակցում են նաև կրթական ծրագրերի բովանդակային քննարկումներին:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ կառավարման տարբեր խորհուրդների և հանձնաժողովների նիստերի արձանագրությունները հնարավորություն չեն տալիս պատկերացում կազմել նիստերի ընթացքում տեղի ունեցած բովանդակային քննարկումների, ընդունված որոշումների հետագա իրականացման մասին, քանի որ

սահմանափակվում են «լսեցին» և «որոշեցին» բաժիններով, իսկ «ելույթ ունեցան» բաժնում միայն նշվում է ելույթ ունեցողների անունները և կրկնվում քննարկման դրված հարցը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումների, դրանց փոխվերահսկողական գործառույթների արդյունավետության վերլուծություն չի իրականացվել, այնուամենայնիվ, փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջը մատնանշում է պաշտոնների անձնագրերում գործառույթների վերանայման անհրաժեշտության մասին:

Քոլեջն ունի ֆինանսավորման երկու աղբյուր՝ պետությունից և մատուցած վճարովի ծառայություններից: Տարեկան ծախսերի նախահաշիվը տնօրինությունը ներկայացնում է կառավարման խորհրդի հաստատմանը: Նախքան բյուջեն հաստատելը, ԿԽ-ում մանրամասն քննարկվում է և առաջարկություններ են արվում: Այդուհանդերձ, անհրաժեշտ է նշել, որ բյուջեն հիմնականում ներառում է ընթացիկ պարտադիր ծախսերը՝ աշխատավարձ և առաջին անհրաժեշտության նյութատեխնիկական գնումներ, փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այն հիմնված չէ ՌԾ-ի գործողությունների պլանով նախատեսված միջոցառումների վրա: Այսպես օրինակ՝ գործողությունների պլանով նախատեսված են որոշակի ռեսուրսներ տրամադրել ուսխորհրդի միջոցառումներին, կամ դասախոսների վերապատրաստումներին, ինչը արտացոլված չէ բյուջեում: Ներքին կարգապահական կանոնների համաձայն ունեն նաև դասախոսների խրախուսման կարգ, որը սակայն չի իրականացվում և բյուջեում էլ համապատասխան հատկացումներ նախատեսված չեն: Քոլեջը եկամուտներ է ստանում հանրությանը մատուցված վճարովի ծառայություններից՝ վարսավիրանոց, սպորտդահլիճներ, սակայն դրանց 80% դարձյալ ուղղվում է աշխատավարձների վճարմանը: Վերջին տարիներին, սակայն, լրացուցիչ դասընթացներ քիչ են կազմակերպվում: Երկու տարվա ընթացքում մեկ դասընթաց է կազմակերպվել: Քոլեջի ղեկավար կազմի դիտարկմամբ քոլեջը կարող է ընդլայնել եկամուտները ձեռնարկատիրական գործունեությամբ, ինչը, սակայն, մասնակիորեն սահմանափակված է օրենսդրությամբ:

Քոլեջի ուսանողները և դասախոսները, որպես ներքին շահակիցներ, ընդգրկված են կառավարման և տնօրինական խորհրդում: Ինչպես վերը նշվեց, կառավարման խորհրդում ընդգրկված են 2 դասախոս և 3 ուսանող, իսկ տնօրինական խորհրդում՝ 2 դասախոս և 1 ուսանող: Բոլոր դասախոսները ընդգրկված են նաև մանկավարժական խորհրդում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները մեծ ակտիվություն չեն ցուցաբերում կառավարման կամ տնօրինական խորհրդում իրենց խնդիրների բարձրաձայնման ուղղությամբ: Նրանք գերադասում են խնդիրները լուծել ուսանողական խորհրդի միջոցով, կամ դիմելով կուրսղեկներին, տնօրենի տեղակալներին կամ տնօրենին: Ուսանողները հարցերի դեպքում առաջին հերթին դիմում են կարիերայի կենտրոնի պատասխանատուներին: Փորձագիտական այցի շրջանակում պարզ դարձավ նաև, որ մեծ կարևորություն է տրվում ուսանողների նախաձեռնողականությանը: Այդ հարցը սահմանված է նաև քոլեջի ՌԾ-ի գործողությունների պլանի «Կառավարման համակարգի արդյունավետություն՝ ուսանողական ներուժի միջոցով» նպատակի ներքո: Նշենք, որ տվյալ նպատակի շրջանակում միայն այդ խնդիրն է դրված՝ «երիտասարդական

նախաձեռնությունների աջակցություն, այդ թվում ուսանողական խորհրդի դերի բարձրացում»: Կառավարման համակարգի բարեփոխման կամ լավարկման այլ միջոցառումներ նախատեսված չեն: Մինչ այժմ ուսանողները բարձրաձայնել են քոլեջի ճաշարանի վերագործարկման պահանջը (ճաշարանը փակվել է քովիդի համաճարակից հետո՝ ԿԳՄՍ նախարարության հրամանով) և ուսխորհրդի որոշումը ներկայացրել են տնօրենին: Վերջինս դիմել է ԿԳՄՍ նախարարություն՝ համապատասխան թույլտվություն ստանալու նպատակով:

Ինչ վերաբերում է մանկավարժական անձնակազմին, նրանք ևս խնդիրների լուծումը գտնում են ցածր օղակներում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ամենամեծ կարիքը մոդուլային դասընթացների դասախոսների մասնագիտական վերապատրաստումների անհրաժեշտությունն է: Քոլեջը հիմնականում ներքին ռեսուրսներով կազմակերպում է մեթոդական վերապատրաստումներ, իսկ մոդուլային և մեթոդական վերապատրաստումները իրականացնում է ՄԿՈՒԶԱԿ-ը: Դասախոսները վերապատրաստում են անցնում նաև այլ կազմակերպություններում սեփական նախաձեռնությամբ:

Քոլեջը Ռազմավարական ծրագիրը դիտարկում է որպես երկարաժամկետ պլանավորում, իսկ միջնաժամկետ պլանավորում են համարում 2020-2025 ՌԾ գործողությունների պլանի որոշ դրույթներ, ինչպես օրինակ՝ շենքային, լսարանային, ուսումնաարտադրական, օժանդակ տարածքների բարելավումը, մանկավարժական անձնակազմի կարիքների բացահայտումը, մասնագիտական կողմնորոշման ծառայության կատարելագործումը և այլն: Ստորաբաժանումների տարեկան պլանները համարվում են կարճաժամկետ պլանավորում: Ըստ ինքնավերլուծության՝ կարճաժամկետ պլանավորում է նաև բոլոր մասնագիտությունների գծով կարճաժամկետ դասընթացների իրականացումը:

2020-2025 թթ ռազմավարական ծրագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն կրկնում է 2015-2020թթ ՌԾ-ն և ներկայացված կարողությունների զարգացման պլանում սահմանված են նեղ նպատակներ, ինչպես օրինակ՝ օֆսեթ տպագրական սարքի ձեռքբերում, խոհանոցային գույքի նորացում, աթոռ սեղանների թվի մեծացում, որոնք երկարաժամկետ պլանավորման մաս չեն կարող կազմել: Գործողությունների պլանում քիչ տեղ է հատկացված կառավարման համակարգի բարեփոխումներին, արտաքին կապերի ստեղծման համակարգված միջոցառումներին, որակի ներքին ապահովման գործընթացների բարելավմանը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը որոշակի աշխատանքներ է իրականացրել նյութատեխնիկական ռեսուրսների բարելավման, մանկավարժական կազմի վերապատրաստման և շրջանավարտների հետ հետադարձ կապի ամրապնդման ուղղությամբ: Մյուս կողմից, օրինակ՝ հետընթաց է ապրել լրացուցիչ դասընթացների կազմակերպումը: Դա որոշ չափով պայմանավորված է քովիդի համաճարակից հետո դրանց դադարեցումով, սակայն քոլեջը ակտիվ քայլեր չի ձեռնարկում դրանք վերսկսելու ուղղությամբ, ինչը պլանավորված է ՌԾ գործողությունների պլանով:

Ինչ վերաբերում է կարճաժամկետ ծրագրերին՝ տարեկան աշխատանքային պլաններին, դրանք հիմնականում տարեցտարի կրկնվում են և ընդգրկում են պարտադիր ընթացիկ աշխատանքները և չեն բխում ՌԾ գործողությունների պլանից:

Ըստ ինքնավերլուծության՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանների գնահատումը քոլեջն իրականացնում է հաշվետվությունների միջոցով: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, ինչպես և տարեկան պլանները, դրանք ներկայացնում են տարեկան աշխատանքների նկարագրությունը ու թվարկումը, և առկա չէ գործողությունների պլանով նախատեսված միջոցառումների վերլուծությունը՝ ըստ գնահատման որակական և քանակական ցուցիչների:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջն ուսումնասիրում է աշխատաշուկան, կատարում վերլուծություններ և հիմնվելով դրա վրա կատարում կրթական ծրագրերի փոփոխություններ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ առկա է նման վերլուծության մեկ դեպք, երբ հարցումների միջոցով ուսունասիրվել է «Հանրային սննդի տեխնոլոգիա» կրթական ծրագրի շրջանավարտների՝ իրենց մասնագիտությամբ զբաղվածության ցուցանիշները: Արդյունքում պարզվել է, որ 2017-2022թթ. շրջանավարտները չեն աշխատում իրենց մասնագիտությամբ, և աշխատանքի են ընդունվում որպես խոհարար: Քոլեջը որոշում է կայացրել 2023թ-ից «Հանրային սննդի տեխնոլոգիա» մասնագիտության փոխարեն ներդնել «Խոհարարական գործ» նախնական մասնագիտական ծրագիրը: Նշենք, սակայն, որ արտադրական ոլորտում սննդի տեխնոլոգների անհրաժեշտության ուսումնասիրություն չի կատարվել և հաշվի է առնվել միայն ռեստորանների պահանջարկը: Բացի այդ, քոլեջը չի նախանշում մեծ փոփոխություններ տվյալ կրթական ծրագրում և դեռևս չունի համապատասխան նյութատեխնիկական ռեսուրսներ՝ վերազինված խոհանոց: Ուտեստների համար անհրաժեշտ հումքը, ըստ ուսանողի հետ կնքված պայմանագրի, պետք է ապահովի ուսանողը՝ վճարելով տարեկան 4000 դրամ:

Վերջին երեք տարիներին ներդրվել են երեք նոր կրթական ծրագրեր՝ «Սառնարանային տնտեսություն», «Կոսմետոլոգիա և դիմահարդարման արվեստ», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում»: Այնուամենայնիվ, նշված ծրագրերի ներդրմանը չի նախորդել աշխատաշուկայի պահանջարկի խորը վերլուծություն, քոլեջը առաջնորդվել է պետության ներկայացրած պահանջով (Սառնարանային տնտեսություն կրթական ծրագիրը ներդրվել է Բնապահպանության նախարարության Օզոնային շերտի պահպանման ծրագրի շրջանակում և նյութատեխնիկական ռեսուրսների մի մասը ապահովել է Ջեռուցման, սառեցման և օդափոխության ինժեներական հայկական ասոցիացիա Հ.Կ-ն): Նոր կրթական ծրագրեր ներդնելիս քոլեջի տնօրինությունը առաջնորդվում է նաև ժամանակակից միտումներով, ինչպես, օրինակ՝ «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» արհեստագործական կրթական ծրագրի ներդրման դեպքում: Քոլեջը սեփական միջոցներով տեղադրել է փոքր արևային կայան՝ ուսուցողական նպատակով: Այդուհանդերձ, նշված կրթական ծրագրի մեկնարկից առաջ քոլեջը չի կազմակերպել նյութատեխնիկական և

մարդկային ռեսուրսների ամբողջական ապահովում: Մասնավորապես մեծ է մոդուլային դասընթացների խնդիրը: Օրինակ՝ «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» կրթական ծրագրի շրջանակում ունեն մասնագիտական դասընթացներ վարող միայն մեկ դասախոս: Մոդուլային դասընթացներ դասավանդողների խնդիր կա նաև «Սառնարանային տնտեսություն» կրթական ծրագրի շրջանակում: Քոլեջը չունի կադրերի բանկ, որին կարող է դիմել արտակարգ իրավիճակների դեպքում:

Ընդհանուր առմամբ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որոշումների կայացումից առաջ տնօրինությունը ստորաբաժանումներին չի հանձնարարում վերլուծություններ իրականացնել:

Ներկայացված ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջի կառավարման քաղաքականությունն ու վարչարարությունը իրականացվում է որակի կառավարման սկզբունքով, ինչը, սակայն, հիմանավորված չէ փաստաթղթերով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ուսումնական և վարչարարական գործընթացների գնահատումը հատվածական բնույթ է կրում: Ժամանակ առ ժամանակ անցկացվում են հարցումներ, ֆոկուս խմբեր, սակայն պարզ չէ, թե ովքեր են այդ հարցումների արդյունքների շահառուները: Այսպես, առաջին կուրսերի շրջանում իրականացված հարցումների արդյունքները տրվում են միայն կարիերայի կենտրոնին, սակայն դրա շահառուն կարող են լինել նաև առարկայական հանձնաժողովները: Հիմնական խնդրի հետ բախվում են բարելավման փուլում և դրա իրականացումը դանդաղում է ներքին կամ արտաքին գործոնների պատճառով, օրինակ՝ ներքին շահակիցների՝ փոփոխությունների պատրաստ չլինելու պատճառաբանվածությամբ: Նման խնդրի օրինակ է դասալսումների արդյունքների վերլուծությունը որակի ապահովման մասնագետի կողմից, որը վեր է հանել մի շարք խնդիրներ կապված կիրառվող մեթոդաբանության հետ, սակայն այն հետագա ընթացք չի ստացել, քանի որ դասախոսների մի մասը պատրաստ չէ հրաժարվել դասավանդման ավանդական մեթոդներից:

Քոլեջում գնահատման մեխանիզմներ են համարվում հարցումները, անանուն առաջարկությունները, կլոր սեղան-քննարկումները: Նշված հարցումների, կլոր սեղանների և ֆոկուս-խմբերի քննարկումների մասին արձանագրություններ և վերլուծություններ առկա չեն: Մոդուլային դասընթացների բովանդակությունը քննարկվում է նաև գործատու դասախոսների հետ: Ընդհանուր առմամբ ՄԿԾ-ների, ինչպես նաև այլ ուսումնական և վարչական գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը համակարգված բնույթ չի կրում և առկա չեն դրանք գնահատող մեխանիզմներ:

Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը արձանագրվում է պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի արձանագրությունների մատյանում, հրամանում և դիպլոմներում: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները հաշվետվություն են ներկայացնում ԿԳՄՍ նախարարություն: Քոլեջի պաշտոնական կայքում տեղադրվում է կիսամյակային և

տարեկան ռոտացիոն համակարգի արդյունքները: Շնորհվող որակավորումների մասին այլ քանակական կամ որակական տեղեկատվություն չի տարածվում և քոլեջում առկա չեն այդ տեղեկատվությունը գնահատող մեխանիզմներ:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի կառավարումն իրականացվում է կոլեգիալ և միանձնյա սկզբունքների համակցմամբ, ինչը ապահովում է որոշումների կայացման օբյեկտիվությունը և իրատեսականությունը: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ կառավարման խորհրդի անդամները շահագրգիռ են ներդրում ունենալու քոլեջի բնականոն աշխատանքի և զարգացման գործում և ակտիվ մասնակցում են կրթական ծրագրերին և բյուջեին առնչվող քննարկումներին: Գովելի է նաև այն փաստը, որ քոլեջում գործում են մի շարք այլ խորհուրդներ՝ տնօրինական, մանկավարժական և ուսումնամեթոդական, որոնց մի մասում ընդգրկված են նաև ուսանողներ: Դա հնարավորություն է ստեղծում խնդիրները քննարկել մի քանի օղակներում: Միևնույն ժամանակ այս խորհուրդների գործառույթների հստակեցումը և դրանց կրկնությունների բացառումը կնպաստի տարբեր խնդիրների վերաբերյալ արդյունավետ որոշումների կայացմանը:

Փորձագիտական խումբը նաև խնդրահարույց է համարում տարբեր խորհուրդների, ստորաբաժանումների և պաշտոնների գործառույթների ոչ հստակ տարանջատումը և դրանց կրկնությունը: Չժխտելով այն փաստը, որ աշխատանքի նման կազմակերպումը կարող է ստեղծել փոխհամագործակցային հարաբերություններ, փորձագիտական խումբը գտնում է, որ այն կարող է հանգեցնել նաև աշխատանքների համակարգվածության և աշխատանքների հստակ բաշխման բացակայության, ինչպես նաև կոնկրետ առաջադրանքի համար պատասխանատվության գիտակցության բացակայության: Կառավարման համակարգի նման մոտեցման արդյունքում գործընթացները կարող են ավարտին չհասցվել, ինչի արդյունքում էլ չի գործում որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլը: Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի դեպքում շրջափուլը չի գործում կրթական ծրագրերի բովանդակության լրամշակման, պրակտիկանների արդյունքների վերլուծության, արտաքին կապերի համակարգման, դասալսումների շնորհիվ մեթոդական աշխատանքների բարելավման և այլ հարցերում: Փորձագիտական խումբը գտնում է, որ պաշտոնների գործառույթների հստակ տարանջատումը կնպաստի կառավարման համակարգի բարելավմանը:

Դրական գնահատելով այն փաստը, որ քոլեջի տնօրինությունը կարևորում է ուսանողների մասնակցությունը կառավարման գործընթացում և համարում է դա կառավարման արդյունավետության էական բաղադրիչ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի ՌԾ-ի գործողությունների պլանում նախատեսելով կառավարման համակարգի բարելավման այլ մեխանիզմների մշակում ևս հնարավոր կլիներ բարելավել կառավարման

գործընթացները: Վերոնշյալը փաստում է, որ գործողությունների պլան-ժամանակացույցի մշակմանը չի նախորդել կառավարման և վարչարարական գործընթացների վերլուծություն և թույլ կողմերի վերհանում: 2020-2025 թթ. Ռազմավարական ծրագրի զարգացման պլանում ընդհանրապես անդրադարձ չի կատարվում կառավարման համակարգի բարելավմանը: Ավելին ՌԾ-ի և դրա գործողությունների պլան-ժամանակացույցի վերլուծությունը ցույց է տալիս, որ քոլեջը շեշտադրում է միայն իր ընթացիկ խնդիրները և չի ներկայացնում հեռահար երկարաժամկետ պլանավորում: Գործողությունների պլանում քոլեջը ներկայացնում է ռիսկերի գնահատում, սակայն չի առաջարկում ռիսկերի կառավարման լուծումներ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև լրացուցիչ եկամուտներ ստանալու ուղղությամբ աշխատանքները, մասնավորապես հանրությանը մատուցվող ծառայությունների միջոցով: Մինչդեռ, լրացուցիչ դասընթացների կազմակերպումը քոլեջի առաքելության մաս է և ամրագրված է նաև ՌԾ գործողությունների պլանում: Դրամաշնորհային ծրագրերը ևս կարող են հավելյալ հնարավորություններ ընձեռել՝ հատկապես նյութատեխնիկական բազան բարելավելու հարցում:

Բյուջեի պլանավորումը ևս չի իրականացվում ըստ ՌԾ գործողությունների պլանի, թեև փաստաթղթում առանձնացված է ներդրում, ֆինասական միջոցներ բաժինը, առանց թվային տվյալների: Դատելով գործողությունների պլանում նախանշված միջոցառումների բնույթից՝ դրանց մի մասը մեծ ֆինանսական միջոցներ չեն պահանջում, և դրանք բյուջեում ներառելով քոլեջը կարող է ապահովել այդ միջոցառումների արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ քոլեջը առաջնահերթություն է համարում մանկավարժական անձնակազմի վերապատրաստումները և ներառել է այն իր երկարաժամկետ պլանավորման մեջ, քանի որ դա մշտական գործընթաց է: Այդուհանդերձ, մասնագիտական վերապատրաստումների առումով քոլեջը նախաձեռնողականություն չի ցուցաբերում և ֆինանսական միջոցներ չի նախատեսում:

Գովելի է այն փաստը, որ քոլեջը փորձում է որոշակի հարցումների միջոցով պարզել որոշ գործընթացների կամ կրթական ծրագրերի արդյունավետությունը: Այնուամենայնիվ, նման ուսումնասիրությունները հատվածական բնույթ են կրում, հաճախ չունեն կոնկրետ շահառուներ և չկան փաստական տվյալներ, թե ինչպես են դրանց արդյունքներն օգտագործվում և օգնում լավարկելու աշխատանքները: Ավելի հաճախ քոլեջն առաջնորդվում է ընթացիկ խնդիրներին իրավիճակային լուծումներ տալու, տվյալ ժամանակաշրջանի միտումներին հետևելու սկզբունքով, ինչը դարձյալ թույլ չի տալիս խորը վերլուծությունների և ռիսկերի գնահատման հիման վրա երկարաժամկետ պլանավորում իրականացնել:

Աշխատանքների համակարգված կազմակերպման խնդիրների պատճառով քոլեջում իրականացվող գործընթացները չեն անցնում որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլն ամբողջությամբ: Այն ավարտվում է իրականացման կամ գնահատման փուլում և բարելավման միջոցառումները թերի են մնում պայմանավորված հիմնականում ներքին, երբեմն նաև այլ գործոններով՝ ֆինանսական միջոցների սղություն, քովիդ համաճարակ, պատերազմ, ուսանողների սոցիալական խնդիրներ և այլն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը չի իրականացրել կառավարման համակարգի արդյունավետության վերլուծություն և ըստ այդմ չի ներառել հնարավոր խնդիրների շտկումը իր ռազմավարական պլանավորման մեջ, հիմնականում առաջնորդվում է ընթացիկ խնդիրների լուծմամբ՝ առանց երկարաժամկետ զարգացման պլանի, կառավարման համակարգում առկա է մի շարք մարմինների, ստորաբաժանումների և պաշտոնների գործառույթների համընկնում և գործընթացների համակարգվածության և աշխատանքների հստակ բաշխման թերացումներ, ինչը խոչընդոտում է որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք գործարկմանը, ռազմավարական պլանավորումը չի տեղայնացվում ստորաբաժանումների ու անհատ պատասխանատուների գործունեության մեջ և տարեկան հաշվետվությունները չեն բխում ՌԾ գործողությունների պլանից, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջում իրականացվում են 8 միջին մասնագիտական՝ «Հաշվապահական հաշվառում», «Կառավարում(մենեջմենթ)», «Շուկայաբանություն(Մարքեթինգ)», «Սառնարանային տնտեսություն», «Կոսմետիկա և դիմահարդարում», «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում», «Հանրային սննդի տեխնոլոգիա», «Ապահովագրական գործ» և 1 նախնական մասնագիտական՝ «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» կրթական ծրագրեր: «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» ՄԿԾ-ն ներդրվել է 2021 թվականին և քոլեջը դեռ շրջանավարտ չունի: «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիներում» ՄԿԾ-ն 2019-2020 ուստարվանից իրականացվում է դուալ ձևաչափով՝ գործնական դասաժամերի որոշ քանակը իրականացվում է գործատուի մոտ: Բոլոր կրթական ծրագրերն իրականացվում են առկա ձևաչափով: 2023 թվականի հունիսի 26-ի դրությամբ 9 կրթական ծրագրերով քոլեջում ուսումնառում են 619 ուսանող:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի շրջանավարտներից ամենաշատը իրենց մասնագիտությամբ աշխատում են հաշվապահները («Հավապահական հաշվառում» ՄԿԾ) և սպասարկման մենեջերները («Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» ՄԿԾ), իսկ սննդի տեխնոլոգները («Հանրային սննդի տեխնոլոգիա» ՄԿԾ) իրենց մասնագիտությամբ աշխատանք չեն գտնում, հիմնականում աշխատում են որպես խոհարար: Պարզվեց, որ քոլեջը 2022-2023 ուստարում «Հանրային սննդի տեխնոլոգիա» մասնագիտության գծով ընդունելություն չի իրականացրել, իսկ 2023-2024 ուստարվա համար լիցենզավորել է նախնական մասնագիտական կրթության հիմքով «Խոհարարական գործ» մասնագիտությունը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ իրականացվող 9 կրթական ծրագրերը համահունչ են քոլեջի առաքելությանը և համապատասխանում են ՊԿՉ-ներին: Չափորոշիչները քննարկվում են առարկայական հանձնաժողովներում և մանկավարժական խորհրդում, որոշ դեպքերում առաջարկները ուղարկվում են ՄԿՈՒԶԱԿ:Մոդուլային ծրագրերը վավերացված են, ընդհանուր ժամերը բաշխված են տեսական և գործնական պարապմունքների մեջ, իսկ «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» դուալ կրթական ծրագրում առանձնացված է նաև գործատուի մոտ կազմակերպվող ժամերը: Ուսումնասիրված մոդուլային ծրագրերում առկա են ծրագրային մանրամասներ, գնահատման միջոց, մեթոդաբանություն և ռեսուրսներ, «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության մոդուլային ծրագրերում նկարագրված է գործատուի մոտ իրականացվող պարապմունքների համար անհրաժեշտ ռեսուրսը, դասընթացների իրականացման համար նախատեսված ստորաբաժանումները:

Ուսումնասիրվող 3 մասնագիտությունների ուսումնական պլաններում կան նախասիրական առարկաներ՝ «Շուկայաբանություն» ՄԿԾ-ում «Հոգեբանություն և գեղագիտություն», «Վարվեցողություն և արարողակարգ», «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ում «Մշակույթի պատմություն», «Վարվելակերպի հիմունքներ», «Գործարար խաղեր», իսկ «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» ՄԿԾ-ում՝ «Վարվելակերպի հիմունքներ» և «Ընտանեկան կյանքի նախապատրաստման հիմունքներ»: Բոլոր երեք ՄԿԾ-ների ուսպլաններում հատկացված է որոշակի ժամեր ընտրովի առարկաների համար, մասնավորապես՝ «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» ՄԿԾ-ում «Ռուսաց լեզու», «Շուկայաբանություն» ՄԿԾ-ում՝ «Ծառայությունների ոլորտի մենեջմենթ», իսկ «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ում՝ «Հայկական ծրագրեր»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ընտրովի առարկաների ներդրման ժամանակ բանավոր ձևով հաշվի են առել ուսանողների կարծիքը:

ՄԾԿ-ների ուսպլաններում առկա են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական պրակտիկա՝ տեսական ուսուցմամբ և առանց տեսական ուսուցման, արտադրական պրակտիկա և նախաավարտական պրակտիկա: Ուսումնական պրակտիկաները հիմնականում անցկացվում են քոլեջում, իսկ արտադրական և նախաավարտական պրակտիկաները՝ գործատուի մոտ: Փորձագիտական այցից և

փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ոչ բոլոր կրթական ծրագրերի արտադրական պրակտիկան կազմակերպելու համար քոլեջն ունի մշտական գործընկերներ, մասնավորապես՝ «Շուկայաբանություն» և «Կառավարում» մասնագիտությունների շրջանակում:

«Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության դուալ-գործնական պարապմունքները իրականացվում են հյուրանոցներում և զբոսաշրջային ծառայություններ մատուցող կազմակերպություններում՝ դասացուցակով հաստատված շաբաթական 1-ից 2 օր: Իսկ «Հաշվապահական հաշվառում» և «Շուկայաբանություն» ՄԿԾ-ների պրակտիկաները ըստ ուսպլանով նախատեսված ժամանակացույցի ոլորտի գործատուների մոտ:

Առկա են դուալ կրթական ծրագրի համար պրակտիկայի օրագրեր, որոնք պարունակում են տեղեկատվություն ուսանողի վերաբերյալ, գործնական ուսուցման ծրագրի իրականացնողի և գործնական ուսուցման ծրագրում ներառված մոդուլների վերաբերյալ, առանձնացված չեն դուալի ընթացքում ուսանողի ձեռքբերած հմտություններն ու կարողությունները, պարզ չէ , թե օրինակ՝ «Հիմնական ծառայությունները հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մոդուլից ուսանողը ինչ կարողություն և հմտություն է ձեռքբերել հյուրանոցում՝ դրանք միայն գնահատված են: Նույն պատկերն է «Շուկայաբանություն» և «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության պրակտիկայի օրագրերում՝ առկա չեն ուսանողի ձեռքբերած հմտությունները, առկա են միայն թեմաները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի մեծ մասը կիրառում է ուսումնառության և դասավանդման ինտերակտիվ մեթոդներ՝ ապահովելով ուսանողակենտրոն ուսուցում: Դասապրոցեսի ընթացքում դասախոսները հաճախ հանձնարարում են խմբային և անհատական աշխատանքներ, կիրառում են դերային խաղեր: Այսպես՝ մասնագիտական անգրերենի դասաժամին հյուրանոցում հաճախորդի ամրագրման գործընթացի բեմականացում, համեմատություն՝ տարբեր տարածաշրջանների հաճախորդների յուրահատկությունների, խաղ՝ կռահիր բառը, խմբային աշխատանք և այլն: «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության «Հիմնական ծառայությունները հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մոդուլի շրջանակներում հանձնարարվում է ուսումնասիրել հասարակական սննդի օբյեկտների, հյուրանոցների տեսակները, ընտրել ամենահետաքրքիր և չկրկնվող օբյեկտները, պատրաստել պլակատներ և սահիկաշարի միջոցով ներկայացնել առաջադրանքները, գործնական դասաժամի ընթացքում դերային խաղի միջոցով բեմականացվում են հաճախորդի սպասարկման ժամանակ ծագած կոնֆլիկտային իրավիճակներ, մտածում դրանց լուծման ուղիները և այլն:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ օրինակ՝ «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության «Հիմնական միջոցների հաշվառում» մոդուլի ուսումնառության նյութերը, բացի տեսական գիտելիքից, պարունակում են առաջադրանքներ, որոնք հնարավորություն են տալիս ուսանողների մոտ զարգացնել տարբեր գործառնությունների հաշվապահական ձևակերպումները տալու գործնական հմտություններ:

Այդուհանդերձ, փորձաքննությունից պարզ դարձավ, որ թեև դասախոսները դասապրոցեսի ընթացքում կիրառում են ինտերակտիվ մեթոդներ, սակայն ուսումնառության պլաններում դրանց բազմազանությունը ներկայացված չէ, երբեմն բոլոր դասերի ուսումնառության պլանները մեթոդական մասով կրկնվում են: Նշենք նաև, որ քոլեջում իրականացվում են օրինակելի Բաց-դասեր, որոք լավագույն փորձի օրինակներ են, սակայն ոչ բոլոր ՄԿԾ-ներում են դրանք ընդունված՝ հիմնականում հանրակրթական առարկաների, «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության մասնագիտական մոդուլների, «Շուկայաբանություն» մասնագիտության մասնագիտական մոդուլների և այլն:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսումնասիրած բոլոր ՄԿԾ-ների մոդուլային փաթեթներում առկա են ուսումնառության նյութեր, բացի այդ մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսները տպագրել են իրենց ուսումնառության նյութերը, ստեղծել ժողովածու, որոնք տրամադրվում են ուսանողներին:

Փորձաքննության ընթացքում պարզվեց նաև, որ քոլեջի բոլոր ՄԿԾ-ների ուսպլաններում ամրագրված չէ կուրսային և դիպլոմային աշխատանքներ իրականացնելը, սակայն քոլեջը նախատեսել է 2023-2024 ուստարվանից որպես ավարտական քննություն ընտրովի ձևով բոլոր մասնագիտություններում ներդնել դիպլոմային աշխատանք: Փորձագիտական խմբին չներկայացվեցին վերլուծություններ, թե ինչն է հանդիսացել դիպլոմային և կուրսային աշխատանքները հանելու և նոր ուսումնական տարում նորից ներդնելու հիմքը: Նախորդ տարիների դիպլոմային աշխատանքները և կուրսայինները «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» ՄԿԾ-ից էին:

Քոլեջում ընթացիկ գնահատումն իրականացվում է 10 բալային համակարգով, առկա է գնահատման ուղեցույց, որտեղ նկարագրված է գնահատման միավորային սանդղակի բացատրությունը: Արդյունքների գնահատումն իրականացվում է հիմնականում գնահատման թերթիկների միջոցով, որտեղ ներկայացվում են և՛ տեսական գիտելիքներ ստուգող և՛ գործնական, իրավիճակային խնդիրներ պարունակող առաջադրանքներ: Գնահատման թերթիկները բալային գնահատում չեն պարունակում՝ առկա է «անցել է» կամ «չի անցել» նշումը: Գնահատման թերթիկների ուսումնասիրությունը ցույց տվեց նաև, որ դրանց մեջ ներառված գործնական առաջադրանքները դասախոսություններում ներառված կոնկրետ օրինակների վրա են, և հնարավորություն չեն տալիս ստուգելու, օրինակ՝ արդյոք ուսանողները կարող են տվյալ օրինակը պրոյեկտել այլ նմանատիպ օրինակների վրա կամ հղում կատարել իրենց անհատական կամ թիմային հետազոտության ընթացքում քննարկված օրինակներին: Բացի այդ դրանց մի մասում չկան դասախոսի կողմից արված նշումներ, ինչից կարելի է ենթադրել, որ արդյունքները չեն քննարկվում ուսանողների հետ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ դասախոսները կիրառում են գործընկերային գնահատման մեթոդը, երբ ուսանողներն են գնահատում միմյանց, ընդունված է մոտեցում, որ դասախոսը գնահատելիս մեկնաբանում է գնահատման մոտեցումը: Ուսանողները գնահատվում են նաև պրակտիկայի վայրերում: Դուալի օրագրերում

գնահատված են ուսանողների գործնական կարողությունները 10 բալային համակարգով, մնացած օրագրերում կան և՛ որակական՝ լավ, գերազանց, բավարար, և՛ բալային (10 բալային) գնահատում:

Ըստ «Ակադեմիական ազնվության պահպանման քաղաքականության»՝ գնահատվող առաջադրանքների կատարման ժամանակ խախտումներ արձանագրելիս կատարվում է հանձնարարության վերակատարում, հանձնարարված նյութի վերահանձնում կամ կարգապահական տույժի կիրառում: Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսներն այս ուղղությամբ ունեն սեփական մոտեցումները՝ արդյունքի գնահատման ժամանակ պատրաստում են գնահատման առաջադրանքների առնվազն 4 տարբերակ, հաշվարկներ տարբեր տվյալներով, հանձնարարում են այնպիսի ինքնուրույն թեմաներ, որոնց պատրաստման համար պետք է օգտվել մի շարք աղբյուրներից, այդ թվում նաև այլալեզու կայքերից:

Քոլեջում ամփոփիչ ատեստավորումը իրականացվում է բանավոր տարբերակով: Հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում հիմնականում ներառված են տեսական հարցեր, միայն «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ի պետական քննական տոմսերում երրորդ հարցը խնդիր է, «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության օտար լեզուների պետական քննության տոմսերում առկա են երեք լեզվից տեքստային թարգմանություններ, ելակետային բառերի և արտահայտությունների թարգմանություններ:

«Շուկայաբանություն(Մարքեթինգ)» մասնագիտության ամփոփիչ ատեստավորման քննության ընթացքը ցույց տվեց, որ ուսանողները դժվարանում են գործնական հարցերին արագ արձագանքել և ճիշտ կողմնորոշվել:

Քոլեջի կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են ՀՀ-ի քոլեջներում առկա նույն կրթական ծրագրերին և դրա արդյունքում էլ հնարավոր է դառնում ապահովել քոլեջից քոլեջ շարժունությունը: Չնայած այն հանգամանքին, որ Քոլեջը ինստիտուցիոնալ ձևաչափով հայաստանյան նմանատիպ ուսումնական հաստատությունների ՄԿԾ-ների բենչմարքինգ չի իրականացրել, սակայն պարզ դարձավ, որ դուալ կրթական ծրագիրը ներդնելիս ծրագրի պատասխանատուները ուսումնասիրել են Երևանի պետական հումանիտար քոլեջի և Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի դուալ կրթական ծրագերը, իրականացման գործընթացը, մոտեցումները, մեթոդաբանությունը: Ուսումնասիրության արդյունքում որոշվել է ընդհանուր գնահատման մեջ կարևորել ոչ թե գործատուի դրած բալային գնահատականը, այլ այն, թե ուսանողը ունի այդ հմտությունը, թե՝ ոչ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջում իրականացվող կրթական ծրագրերի մի մասը, օրինակ՝ «Շուկայաբանություն», «Կառավարում», միտված են շարունակական կրթության ապահովմանը, քանի որ շրջանավարտները հիմնականում իրենց կրթությունը շարունակում են բուհում՝ հեռակա ուսուցմամբ: Նշված կրթական ծրագրերի ՊԿՉ-ների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք սահմանում են շրջանավարտի կարողունակությունների և հնարավոր գործառույթների

շատ լայն շրջանակ, որը իրատեսական կարող է չլինել միջին մասնագիտական կրթության համար: Այս առումով, քոլեջը կոնկրետ քայլեր չի ձեռնարկել այդ կարողունակությունների ավելի հստակ և իրագործելի շրջանակի սահմանման ուղղությամբ և առաջնորդվում է ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից առաջադրված չափանիշներով: Փորձագիտական այցից պարզ դարցավ, որ քոլեջը չի փորձում համագործակցել այն բուհերի հետ, որտեղ իր շրջանավարտները շարունակում են կրթությունը՝ դասընթացների բովանդակությունը քննարկելու և դրանց կրկնությունից խուսափելու նպատակով: Համագործակցությունը սահմանափակվում է միայն ամփոփիչ ատեստավորման քննության հանձնաժողովում այդ բուհերից ներկայացուցիչների ապահովմամբ:

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը մշակել է «Չափորոշիչների համապատասխանեցում գործատուների պահանջներին գործատուների կարիքի վերհանման» հարցաթերթիկներ 3 ՄԿԾ-ների՝ «Վերականգնվող էներգիայի, էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում», «Սառնարանային գործ» և «Հաշվապահական հաշվառում» գծով, որի նպատակն է, ներգրավելով ոլորտի առնվազն 100 գործատու, վերհանել աշխատակցից պահանջվող մասնագիտական գիտելիքների ու հմտությունների այն ուղղվածությունն ու չափը, որը քոլեջը պետք է ապահովի: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ գործընթացը դեռ չի մեկնարկել, սակայն նախատեսում են բոլոր ՄԿԾ-ների մասով ներդնել այս մոտեցումը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ իրականացվող «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության ՄԿԾ-ն դուալ ձևաչափով իրականացնելու համար ուսումնական պլանում և մոդուլային ծրագրերում կատարվել են փոփոխություններ, մասնավորապես՝ պրակտիկաների համար նախատեսված ժամերը բաշխվել են դուալ ձևաչափով կազմակերպվող ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների միջև: Աշխատանքների իրականացմանը մասնակցել են քոլեջի դասախոսները և ոլորտի գործատուները: Փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ մնացած ՄԿԾ-ներում իրականացված մշտադիտարկման և բարելավման եզակի օրինակները(ընտրովի առարկաներ, տեսական և գործնական ժամերի բաշխում և այլն) իրականացվում են առարկայական հանձնաժողովների որոշումներով, ներքին շահակիցներից բանավոր տարբերակով հաշվի են առնվում ուսանողների կարծիքը, իսկ արտաքին շահակիցների, մասնավորապես, գործատուների առաջարկները չեն ներառվել ՄԿԾ-ների բարելավումներում:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջում իրականացվող 8 միջին մասնագիտական և 1 նախնական մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են ՈԱՇ-ին, քոլեջի առաքելությանը, ՊԿՉ-ներին: Հատկանշական է, որ քոլեջում ներդրվել է դուալ կրթական ծրագիր («Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիներում»),

որն անմիջականորեն կապ ունի գործատուների հետ և միտված է աշխատաշուկայի կարիքները բավարարելուն: Փորձագիտական խումբը դրականորեն արձանագրում է, որ քոլեջի շրջանավարտ հաշվապահները և սպասարկման մենեջերները պահանջված են աշխատաշուկայում, սակայն միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ սննդի տեխնոլոգները աշխատում են ոչ իրենց մասնագիտությամբ: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը գնահատում է այս ուղղությամբ քոլեջի իրականացրած քայլերը, այն է՝ նոր «Խոհարարական գործ» ՄԿԾ-ի ներդրումը, որի արդյունքում կպատրաստի այնպիսի մասնագետներ, որոնք կունենան իրենց որակավորմանը համապատասխան հմտություններ և կաշխատեն մասնագիտությամբ:

Դրական է այն փաստը, որ դուալի ՄԿԾ-ն կազմելիս քոլեջը հստակ սահմանում է գործատուի մոտ պահանջվող ռեսուրսը, տալիս է գործնական ուսուցման միջավայրի նկարագրություն, ինչն ապահովում է մոդուլի վերջնարդյունքը:

Գովելի է, որ մասնագիտությունների ուսպլաններում առկա են ուսանողների ընդհանուր զարգացվածությունն ապահովող նախասիրական և ընտրովի առարկաներ, հատկանշական է , որ ընտրովի առարկաների ներդրման համար, թեկուզ բանավոր ձևով, հաշվի է առնվել ուսանողների կարծիքը: Փորձագիտական խումբը գտնում է, որ դրանք ավելի թիրախային դարձնելու համար, կարևոր է նաև հաշվի առնել գործատուների կարծիքը:

Դրական է, որ քոլեջի ՄԿԾ-ների պրակտիկաների բազաները բազմազան են, միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ կան ՄԿԾ-ներ («Շուկայաբանություն» և «Կառավարում»), որոնց հետ կապված քոլեջը չունի մշտական գործընկերներ, ինչը կարող է վտանգել այդ մասնագիտությունների ուսանողների գործնական հմտությունների ձեռքբերումը:

Մտահոգիչ է, որ դիտարկվող ՄԿԾ-ների պրակտիկայի օրագրերում մատնանշված չեն գործնական պարապմունքների ժամանակ ուսանողների ձեռքբերած հմտություններն ու կարողությունները, որոնք հնարավորություն կտային պատկերացում կազմել պրակտիկաների արդյունավետության վերաբերյալ: Փորձագիտական խումբը գտնում է, որ օրագրերի նման ձևաչափը արդյունավետ չէ պրակտիկ հմտությունների գնահատման տեսանկյունից:

Փորձագիտական խումբը նշում է, որ դասապրոցեսի ընթացքում դասախոսի կողմից կիրառվող մեթոդների մեծ մասը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը, որի արդյունքում հնարավոր է դառնում հասնել ուսումնառության պլանով նախատեսված նպատակադրումներին: Միևնույն ժամանակ դասապրոցի պլանավորման փաստաթղթային հենքը երբեմն չի համապատասխանում իրականացմանը, կան տարբեր թեմաներ, որոնց պլանավորումը մեթոդապես նույնական է, ինչի արդյունքում կարող է վտանգվել մեթոդի կիրառումը և դրա արդյունավետությունը: Գովելի է, որ ուսումնասիրվող ՄԿԾ-ների մասնագիտական մոդուլերից տրվող հանձնարարականները կարող են ձևավորել մասնագիտության զբաղմունքի նկարագրով սահմանված կարողություններն ու հմտությունները, ուսանողների մոտ զարգացնել ինքնուրույն հետազոտական միտքը: Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ մասնագիտական մոդուլներ դասավանդող

դասախոսները տպագրում և նախապես ուսանողներին են տրամադրում իրենց դասավանդած մոդուլների ուսումնառության նյութերը, որը նույնպես ուսանողակենտրոն մոտեցում է:

Դրական է, որ քոլեջը նախատեսել է 2023-2024 ուստարվանից ընտրովի ձևով բոլոր մասնագիտություններում որպես ամփոփիչ ատեստավորում ներդնել դիպլոմային աշխատանքը, սակայն, միևնույն ժամանակ, ըստ ՄԿԾ-ների չի վերլուծել դիպլոմային աշխատանքների կատարման անհրաժեշտությունը և հնարավոր ռիսկերը, ինչը կարող է վտանգել դրա արդյունավետությունը:

Փորձագիտական խմբի կողմից դրական է համարում, որ գնահատման գործընթացը համակարգվում է ըստ ուղեցույցի, հատկանշական է, որ գնահատման թերթիկներում առկա առաջադրանքները հիմնականում ստուգում են դասապրոցեսի ընթացքում ուսանողների ձեռքբերած հմտությունները, դրանց ստուգման համար առկա են գործնական առաջադրանքներ, հաշվարկներ, սակայն միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ շատ գնահատման թերթիկներ ստուգված չեն, ինչի արդյունքում վտանգվում է գնահատման արժանահավատությունը: Հատկանշական է, որ ուսանողները գնահատվում են պրակտիկաների և դուալ կրթական ծրագրի գործնական պարապմունքների վայրերում, սակայն բացակայում է գնահատման միասնական մոտեցումը, որը հնարավորություն կտար պահպանել փաստաթղթավորման միատարրությունը և տարբեր ՄԿԾ-ների միջև կապը: Գովելի է, որ դասախոսները տալիս են այնպիսի հանձնարարականներ, որոնք ոչ միայն զարգացնում են ուսանողների հետազոտական, վերլուծական հմտությունները, այլև հնարավորություն են տալիս խուսափել արտագրություններից՝ պահպանելով ակադեմիական ազնվությունը:

Չնայած այն հանգամանքին, որ քոլեջը միջազգային հաստատությունների հետ ծրագրային բենչմարքինգի փորձեր չի արել, սակայն փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիներում» մասնագիտության դուալ ձևաչափով ներդրման ժամանակ ուսումնասիրել է նման կրթական ծրագիր ունեցող հայաստանյան այլ քոլեջների դրական փորձը, ինչի արդյունքում լավարկել է գնահատան մոտեցումը:

Մտահոգիչ է, որ քոլեջում կան մասնագիտություններ («Շուկայաբանություն» և «Կառավարում»), որոնց ՄԾ-ներում ներառված թեմաները ավելի նեղ են և տեսական՝ զբաղմունքի նկարագրով սահմանված գործառույթների լայն շրջանակը ապահովելու համար, առհասարակ հասկանալի չէ, թե կոնկրետ քոլեջի շրջանավարտը ավարտելուց նախանշված գործառույթներից որոնք է կարողանում կատարել: Գովելի է, որ քոլեջի բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտները հնարավորություն ունեն իրենց կրթությունը շարունակել բուհերում, այդուհանդերձ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջ-բուհ ինստիտուցիոնալ համագործակցությունը թույլ կտա ապահովել նմանատիպ կրթական ծրագրերի տրամաբանական շարունակությունը՝ խուսափելով կրկնություններից:

Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ քոլեջը ՄԿԾ-ների բարելավման, աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցման համար նպատակադրել է իրականացնել լայնածավալ ուսումնասիրություն՝ ներգրավելով բազմաթիվ արտաքին

շահակիցների: Փորձագիտական խումբը գտնում է, որ նշյալ գործընթացի արդյունավետ կազմակերպման արդյունքում քոլեջը կունենա արդիական, շուկայամետ ՄԿԾ-ներ, կպատրաստի պահանջված և որակյալ մասնագետներ:

Գովելի է, որ քոլեջում իրականացվել են ՄԿԾ-ների որոշ բարելավումներ՝ կապված ընտրովի առարկաների, դուալ կրթական ծրագրի ներդրման հետ, որոնց մասնակցել են արտաքին և ներքին շահակիցներ: Այդուհանդերձ, ոչ բոլոր մասնագիտությունների գծով է առկա նման դրական փորձ, ինչի արդյունքում որոշ ՄԿԾ-ների բարելավումները կարող են հապաղել: Փորձագիտական խումբը նշում է, որ բարելավումների դրական փորձը տարածելի դարձնելու պարագայում կապահովվի ՄԿԾ-ների արդյունավետ կառավարումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իրականացնում է իր առաքելությանն ու աշխատաշուկայի պահանջներին համահունչ ՄԿԾ-ներ, ակնկալվող վերջնարդյունքներն ընդհանուր առմամբ համապատասխանում են ՈԱՇ-ին, պրակտիկաների բազաները ըստ մասնագիտությունների բազմազանեցված են, առկա են ՄԿԾ-ների բարելավման օրինակներ, շրջանավարտների մեծ մասն աշխատում են իրենց մասնագիտությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջում ընդունելությունն իրականացվում է ՀՀ ԿԳՄՍՆ 2012թ. ապրիլի 5-ի N254-Ն հրամանի և 2022թ քոլեջի կողմից վերանայված և վերահաստատված ընդունելության կարգի համաձայն: Վերջին տարիներին ընդունելությունն իրականացվում է առցանց տարբերակով, դիմում հայտը լրացվում է էլեկտրոնային եղանակով dimord.emis.am կայքով՝ կրթության մասին ավարտական փաստաթղթի հիման վրա: Ինքնավերլուծության համաձայն՝ ընդունելության թափանցիկությունն ապահովելու համար ընդունելության արդյունքները հրապարակվում են քոլեջի կայքէջում և սոցցանցերում, ինչպես նաև փակցվում են քոլեջի մուտքի մոտ՝ տեսանելի վայրում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը իր ճանաչելիությունն ապահովելու նպատակով իրականացնում է տարատեսակ էքսպոներ, միջոցառումներ, բաց դռների օրեր, կատարում է շրջայցեր դպրոցներում, որի ժամանակ դիմորդները հնարավորություն են ունենում տեղեկանալ քոլեջի պատմությանը, ներքին կյանքին, մասնագիտություններին, հանդիպել դասախոսների և ուսանողների հետ:

Ինքնավերլուծության համաձայն, տարեցտարի ավելանում է քոլեջի ուսանողների թիվը, պայմանավորված իրականացվող մասնագիտական կողմնորոշման և տեղեկատվության տարածման գործիքների հետ: Այդուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների մեծամասնությունը քոլեջի մասին տեղեկացել են իրենց հարազատներից, ծանոթներից կամ ընտրել են քոլեջը տարածաշրջանային առումով հարմարավետ լինելու համար: Այս պահին քոլեջում սովորում է 661 ուսանող:

Կարիերայի պատասխանատուների կողմից, նախքան ընդունելությունը և ընդունելությունից հետո իրականացվում է մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներին՝ իրենց իրավունքների և պարտականությունների մասին ծանոթացնումն իրականացվում է Կարիերայի կենտրոնի և ՈւԽ-ի միջոցով:

Ըստ ինքնավերլուծության՝ ՄՈՒՀ-ի որակի ապահովման մասնագետն ուսանողների հմտությունները, գիտելիքները, կրթական ակնկալիքները, ապագայի տեսլականն ու կրթական կարիքների վերհանման նպատակով հարցում է անցկացնում: Այնուհանդերձ, փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հարցման բովանդակությունը մասամբ է համապասխանում հարցման նպատակներին, որոնցից են օրինակ՝ կրթական կաիրքների վերհանումը, հասկանալ քոլեջ դիմելու շարժառիթը և այլն: Հարցաթերթիկը ներառում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են ինչ կանեիք, եթե դասախոսը ուշանար և այլն: Որոշ դեպքերում, հարցումը օգնել է Կարիերայի կենտրոնի պատասխանատուներին ուղղորդել ուսանողին փոխելու մասնագիտությունը:

Ըստ ինքավերլուծության՝ իրականացվում են ֆոկուս խմբային քննարկումներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումները և ֆոկուս խմբային քննարկումները պարբերական բնույթ չունեն, և առկա չեն դրանց արդյունքների վերլուծություններ, իրականացման քաղաքականություն և ընթացակարգեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջում գործում է կուրսղեկների ինստիտուտը: Առաջին կուրսում ուսանողները դիմում են կուրսղեկներին, վերջիններիս պարտավորություններն են՝ ապահովել ուսանողների սոցիալիզացիան-ադապտացիան, զբաղվել ուսումնադաստիարակչական աշխատանքներով, հասարակական գործունեությամբ և մշակութային դաստիարակությամբ: Երկրորդ կուրսից սկսած կուրսղեկներին փոխարինում են կարգավարները. քոլեջում առկա է կարգավարի երկու հաստիք: Կարգավարները հետևում են ուսանողների հաճախմանը և կապ պահպանում նրանց ծնողների հետ: Կարիերային և պրակտիկային վերաբերող հարցերով ուսանողները դիմում են կարիերային կենտրոնին և պրակտիկայի պատասխանատուին օժանդակություն ստանալու նպատակով:

Ուսանողները որպես իրենց կրթական կարիքների բարձրաձայնման կառույց դիտակում են նաև ՈւԽ-ին:

Ինքնավերլուծության համաձայն՝ Քոլեջը տրամադրում է նախաքննական խորհրդատվություններ, նախաավարտական պետական ամփոփիչ ատեստավորումից առաջ կոնսուլտացիաներ, հանրակրթական ուսուցման ավարտին նախատեսված ընթացիկ քննությունների նախապատրաստական աշխատանքներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պետական քննություններից առաջ կազմակերպվում են պարտադիր խորհրդատվություններ: Ընթացիկ քննություններից առաջ ևս կարող են տրամադրվել խորհրդատվություններ դասախոսի նախաձեռնությամբ: Նախկինում նման խորհրդատվությունները ներառված են եղել դասախոսների ծանրաբեռնվածության մեջ: Քոլեջի կարիերայի կենտրոնը կազմակերպում է մասնագիտական կողմնորոշման անհատական և խմբային խորհրդատվություններ, շարունակական կրթության վերաբերյալ խորհրդատվություն և աշխատաշուկա մուտք գործելու վերաբերյալ լրացուցիչ խորհրդատվական ծառայությունները:

Մինչ քովիդի համաճարակը քոլեջում գործել են ակումբ-խմբակներ (անգլերենի ակումբ, ընթերցանության ակումբ, ֆիլմի դիտման ակումբ, հոգեբանական ակումբ, աշխատանքային իրավունք և այլն), այժմ միայն անգլերենի խմբակն է գործում, որտեղ հիմանկանում ֆիլմերի ցուցադրություն է կազմակերպվում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ ժամանակացույց չի գործում, քանի որ վարչական աշխատակազմը ցանկացած ժամի հասանելի է: Այս առումով ամենից ակտիվ գործունեությունը ծավալում է Կարիերայի կենտրոնը:

Քոլեջում կարիերայի կենտրոնը գործում է 2012 թվականից ի վեր և ունի երկու աշխատակից: Պատասխանատուներից մեկը ներկայումս ներքին համատեղությամբ զբաղեցնում է նաև որակի ապահովման մասնագետի պաշտոնը: Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջում յուրաքանչյուր ուստարվա սկզբում կարիերայի կենտրոնի պատասխանատուները հանդիպում են առաջին կուրսի ուսանողների հետ (մինչ այդ հանդիպում են նաև ընդունելության ընթացքում՝ մասնագիտական կողմնորոշման շրջանակներում), ներկայացնում կենտրոնի գործունեությունը, խորհրդատվության տեսակները, և ներկայացնում են կարիերայի կենտրոնի ու հանդիպումների սենյակի գտնվելու վայրը: Երկրորդ, երրորդ և չորրորդ կուրսերում կարիերայի կենտրոնի պատասխանատուները ուսանողների հետ հանդիպում են յուրաքանչյուր եռամսյակում: Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ քոլեջում՝ տեսանելի վայրում առկա է հայտարարությունների ցուցատախտակ, որտեղ փակցվում են պարբերաբար թարմացվող հայտարարություններ, գործատուների կողմից ներկայացված թափուր հաստիքների մասին հայտարարություններ, տեղեկություն սեմինարների, հանդիպումների, էքսպոների և այլ միջոցառումների մասին:

Կարիերայի կենտրոնը ստեղծել է ուսանողների և գործատուների բազա: Կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ ստեղծվել է շրջանավարտների փակ ֆեսբուքյան խումբ, որտեղ պատասխանատուների կողմից տեղադրվում են մասնագիտական թափուր հաստիքները, հայտարարությունները, ինչպես նաև կարիերայի կենտրոնի միջոցով կապ է պահպանվում շրջանավարտների հետ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարիերայի կենտրոնը հետևողական է շրջանավարտների հետազծին:

Կարիերայի կենտրոնը ուսանողների համար կազմակերպում է դասընթացներ (օրինակ՝ «ինչպես գրել աշխատանքային ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ», «ինչպես ներկայանալ աշխատանքային հարցազրույցի», «ինքնագահատում և SWOT վերլուծություն», «Աշխատանքային իրավունքներ», «Մուտք աշխատաշուկա» և այլ թեմաներով)։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նման դասընթացները օգնում են ուսանողների աշխատանքի տեղավորմանը, ինչպես նաև բացակայությունների նվազեցմանը, քանի որ աշխատանքային իրավունքներին ծանոթանալով ուսանողները թողնում են լրիվ դրույքով իրենց աշխատանքը և կարիերայի կենտրոնի ու դուալ կրթաձևի օգնությամբ գտնում ավելի քիչ ժամերով, առավել շահեկան պայմաններով և մեծամասամբ իրենց մասնագիտությամբ աշխատանք։ Այդուհանդերձ, ուսանողների բացակության խնդիրը դեռևս լիարժեք լուծում չի գտել։

Յուրաքանչյուր տարվա ավարտին կարիերայի կենտրոնը կատարում է շրջանավարտների զբաղվածության ուսումնասիրություն՝ պարզելու ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետությունը։ Այնուամենայնիվ, ծառայությունների արդյունավետության մանրամասն վիճակագրական վերլուծություն չի իրականացվում։ Կարիերայի կենտրոնը նաև սերտորեն համագործակցում է շրջանավարտների հետ և պարբերաբար հրավիրում նրանց ուսանողներին ներկայացնելու իրենց հաջողված փորձը։

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը չունի հստակ քաղաքականություն հետազոտության ոլորտում և առկա չեն դասախոսների և ուսանողների հետազոտական աշխատանքները խթանելու ընթացակարգեր։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախկինում քոլեջի ուսանողները կուրսային աշխատանքներ են գրել։ Քոլեջը նախատեսում է հաջորդ տարում փոփոխություններ իրականացնել ամփոփիչ ատեստավորման քննության ձևաչափում և ներդնել դիպլոմային աշխատանքներ գրելու հնարավորությունը։

Այնուամենայնիվ պետք է փաստել, որ հետազոտական աշխատանքները քոլեջում իրականացվում են ինքնուրույն ու խմբային աշխատանքների և իրավիճակային խնդիրների միջոցով։

Քոլեջում 2019 թվականից գործում է «Գիտաիննովացիոն բաժին»-ը, որը, ըստ քոլեջի ՌԾ-ի պետք է միտված լինի խթանելու հետազոտական աշխատանքները, սակայն դեռևս հստակ քայլեր այդ ուղղությամբ չի իրականացվել և սահմանափակվում է տեղեկատվական գործունեությամբ, օրինակ՝ ապահովում են ուսանողների մասնակցությունը այլ ուսումնական հաստատություններում կազմակերպվող միջոցառումներին, կազմակերպում այցելություններ թանգարաններ և այլն։

Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջն ունի ուսանողների հիմնական իրավունքներն ու պարտականությունները ներկայացնող փաստաթուղթ, որը ամրագրված է ՀՀ

օրենսդրությամբ, քոլեջի կանոնադրությունում, ուսանողի հետ կնքվող պայմանագրում և ներքին կարգապահական կանոններում:

Քոլեջի ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվում է Ուսանողական խորհուրդը՝ սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին, որի գործունեության հիմնական սկզբունքներն են կամավորությունը, սովորողների իրավահավասարությունը, կառավարման կոլեգիալությունը և հրապարակայնությունը: ՈւԽ-ն հաշվետու է դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենին: ՈւԽ-ն առաջնորդվում է իր կանոնադրությամբ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈւԽ անդամ կարող են լինել բոլոր ցանկացություն հայտնող ուսանողները և ավագները: ՈւԽ նիստերը տեղի են ունենում ամիսը մեկ անգամ և անդամները նիստերին մեկից ավելի անգամ բացակայելու դեպքում, ավտոմատ կերպով հեռացվում են խորհրդից: Կուրսերին տեղեկատվության փոխանցումը տեղի է ունենում ավագների և անդամ ուսանողների միջոցով: Կառույցը զբաղվում է ուսանողների իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքներով, օրինակ՝ բարձրացվել է սննդի կետի վերաբացման հարցը, որը սեպտեմբերից կգործարկվի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները մի շարք հարցերով, ինչպես օրինակ՝ քննության գնահատականի բողոքարկում, կամ քննության վերահանձնում, սոցիալական խնդիր և այլն, դիմում են ՈւԽ նախագահին, որը փորձում է օգնել՝ դիմելով համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝ անհրաժեշտության դեպքում պահպանելով նաև անձնական կյանքի գաղտնիությունը:

Ըստ ինքնավերլուծության, քոլեջն իրականացնում է ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման համար աշխատանքներ (կլոր սեղան քննարկումներ, դիտարկումներ, բանավոր և գրավոր հարցումներ): Աշխատանքներն իրականացվում են ներքին որակի մասնագետը Կարիերայի կենտրոնի հետ սերտ համագործակցության շրջանակներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, սակայն, որ ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմներ քոլեջում հիմնականում չեն գործում:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում առկա է ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ: Գովելի է նաև այն, որ քոլեջն իր ճանաչելիությունն ապահովելու նպատակով կազմակերպում է տարատեսակ էքսպոներ, միջոցառումներ, բաց դռների օրեր և այլն, ինչի արդյունքում տարեցտարի աճում է ուսանողերի թիվը: Ողջունելի նաև այն, որ Կարիերայի կենտրոնի կողմից մինչ ընդունելությունը և ընդունելությունից հետո իրականացվում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներ, որոնք նույնպես նպաստում են քոլեջի տեսանելիության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում գործում է կուրսղեկների և կարգավարների ինստիտուտը, որը միտված է ուսանողների կարիքների վերհանմանն ու դրանց արագ արձագանքմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ բոլոր ուսանողների շրջանում կարիքների վերհանման նպատակով իրականացվող նպատակադրված և համակարգված հարցումները և դրանց վերլուծությունները կնպաստեն ուսանողների կրթական կարիքների վերհանմանը և լուծմանը: Կարիքների վերհանումը հնարավորություն կտա կազմակերպել այլ լրացուցիչ պարապմունքներ՝ չսահմանափակվելով միայն նախաքննական խորհրդատվություններով կամ Կարիերայի կենտրոնի կազմակերպած դասընթացներով:

Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ ակումբ-խմբակների վերաբացումը կնպաստի ուսանողների մոտ այլ հմտությունների և կարողությունների ձևավորմանը:

Փորձագիտական խումբը հատկապես կարևորում է քոլեջում կարիերայի կենտրոնի ակտիվ գործունեությունը, այդ թվում նաև շրջանավարտների հետ հետադարձ կապի գործուն մեխանիզմների կիրառումը: Գովելի է նաև այն, որ կարիերայի կենտրոնը կատարում է շրջանավարտների զբաղվածության վերլուծություն, ապահովում է կարիերայի կենտրոն-ուսանող, կարիերայի կենտրոն-շրջանավարտ և ուսանող-գործատու փոխհամագործակցությունը: Դրական է նաև այն, որ կարիերայի կենտրոնը ուսանողների համար կազմակերպում է դասընթացներ, որոնց շնորհիվ ուսանողները ծանոթանում են իրենց աշխատանքային իրավունքներին և աշխատավայրում կարողանում են իրենց իրավունքները պաշտպանել:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որը քոլեջը կարևորում է հետազոտական և ինովացիոն աշխատանքների անհրաժեշտությունը և հիմնել է «Գիտաինովացիոն բաժին»: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ բաժնի կողմից բոլոր կրթական ծրագրերի ուսանողներին իր միջոցառումներում ընդգրկումը կնպաստի քոլեջի ուսանողների ոչ միայն ստեղծագործական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, այլև կստեղծի միջմասնագիտական համագործակցության հնարավորություն:

Գովելի է, որ Ուսանողական խորհուրդը ներգրավված է քոլեջում առկա կառավարման օղակներում, և ուսանողների կրթական կարիքների բարձրաձայնումը և լուծման ուղիների ապահովումը դրա առաջնահերթությունն է:

Չնայած քոլեջը ուսանողներին տրամադրվում է կրթական, խորհրդատվական և այլ ծառայություններ, այդուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ տրամադրվող ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմների ներդրումը հնարավորություն կտա քոլեջին բարելավելու իրականացվող գործընթացները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջն ունի ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ, Կարիերայի կենտրոնի կողմից արդյունավետորեն իրականացվում են կրթական կարիքների վերհանմանը և կարիերային նպաստող միջոցառումներ, ապահովվում է հետադարձ կապը շրջանավարտների հետ, քոլեջում գործում է ուսանողների իրավունքները պաշտպանող մարմին՝ Ուսանողական խորհուրդ, որի

անդամները ներգրավված են կառավարման խորհրդում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը դասախոսների ընտրության և աշխատանքի ընդունման համար առաջնորդվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված մրցութային կարգով, ինչին համապատասխան տրվում է հայտարարություն թերթում և քոլեջի կայքէջում, որտեղ նշվում է թափուր հաստիքի համար անհրաժեշտ որակավորումը և պահանջները: 2022 և 2023 թվականներին մրցութային կարգով աշխատանքի է ընդունվել 22 դասախոս:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսի մրցույթն իրականացվում է բանավոր տարբերակով, հարցատոմսերում ներառվում են 5 հարց, որոնք հետևյալ թեմաներով են՝ «Ներառական կրթության ռազմավարություն», «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար կրթության կազմակերպում», կան հարցեր նաև «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում ռեսուրս» գրքույկից, «Բռնության և զոհերի հոգեբանություն» ուսումնամեթոդական ձեռնարկից, «Կրթության մասին օրենք»-ից և այլն:

Արձանագրությունների ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դիմողին տրվող հարցերի մեջ առկա չեն մրցութային կարգի 29-րդ կետով պահանջվող դասավանդվելիք առարկայի (մոդուլի) վերաբերյալ հարցերը: 2022-2023 ուստարում քոլեջում իրականացվել է 2 մրցույթ՝ օտար լեզվի և «Սառնարանային տնտեսություն» ՄԿԾ-ի «Ղեկավարման հմտություններ, հոգեբանություն և էթիկետ», «Նյութական ֆինանսական հոսքերի կառավարում (լոգիստիկա)» մոդուլներ դասավանդող մասնագետների թափուր տեղի համար: 4 դիմորդներից 3-ը հաղթահարել է մրցույթը՝ մեկը «Սառնարանային տնտեսություն», երկուսը՝ օտար լեզու մասնագիտությամբ: Արձանագրությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ նաև, որ քոլեջում անցկացվել են մրցույթներ, որոնց մասնակցել են մեկից ավելի դիմորդներ, եղել են նաև դեպքեր, երբ մրցույթին մասնակցած երեք մասնակցից ոչ ոք չի հաղթահարել մրցութային փուլը:

Վարչական և ուսումնաօժանդակ կազմն աշխատանքի է ընդունվում առանց մրցույթի՝ թափուր հաստիք առաջանալու դեպքում, որի համար նույնպես հայտարարություն է տեղադրվում համացանցում: Այս գործընթացի իրականացման համար չկան հստակ ընթացակարգեր, այն իրականացվում է տնօրենի հրամանի հիման վրա: Աշխատանքից ազատումը իրականացվում է ՀՀ ԱՕ-ի հոդվածներին համապատասխան տնօրենի հրամանով:

Դասախոսական անձնակազմին ներկայացվող պահանջներն ամրագրված են յուրաքանչյուր մասնագիտական ՊԿՉ-ի 5-րդ գլխում, մշակվել են դասախոսի պաշտոնի նկարագրեր: Սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ պաշտոնի նկարագրում դասախոսին ներկայացվող պաշտոնական պարտականությունները, պահանջները և կարողությունները ընդհանրական բնույթի են, կոնկրետ մոդուլների կամ մասնագիտական ուղղվածության վերաբերյալ հստակ պահանջներ առկա չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսի ընտրության ժամանակ քոլեջը կարևորում է մասնագետի բարձրագույն կրթությունը, իսկ հատուկ մասնագիտական մոդուլներ դասավանդելու պարագայում՝ համապատասխան աշխատանքային փորձը: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ քոլեջում աշխատում են դասախոսներ, որոնց որակավորումը չի համապատասխանում նրանց կողմից դասավանդվող մոդուլներին/առարկաներին, մասնավորապես՝ ինժեներ-էլեկտրոմեխանիկի որակավորում ունեցող մասնագետը դասավանդում է «Մենեջմենթ» մոդուլը, մաթեմատիկը՝ «Սառնարանային տնտեսություն» ՄԿԾ-ի մասնագիտական մոդուլները: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ «Սառնարանային տնտեսություն» ՄԿԾ-ում դասավանդող դասախոսը մասնակցել է մասնագիտական դասընթացների և վերապատրաստումների:

Դասախոսական անձնակազմի գնահատման համար որպես մեխանիզմ քոլեջում կիրառվում են դասալսումները, փոխադարձ դասալսումները և հարցումները: Դասալսումներն իրականացվում են նախապես հաստատված ժամանակացույցով: Դրանք համակարգում են ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը, համապատասխան առարկայական հանձնաժողովի նախագահը և մեթոդիստը: Առկա են դասալսման թերթիկներ, որոնցում ներկայացված են դասախոսի ընտրած մեթոդները, դասի ընթացքը և առաջարկությունները դասապրոցեսը կազմակերպելու վերաբերյալ: Դասախոսը ծանոթանում է դասալսողի կողմից լրացված թերթին և գրում իր կարծիքը՝ համաձայնվելով կամ չհամաձայնվելով դասալսողի կարծիքի հետ: Դասալսման թերթերում դասալսողների կողմից հիմնականում առաջարկվել է դասապրոցեսի ընթացքում կիրառել լինգաֆոնային կաբինետի հնարավորությունները, ավելի շատ կիրառել ակտիվ ուսումնառության մեթոդներ, ստեղծել միջառարկայական կապ, ակտիվացնել պասիվ ուսանողներին և այլն:

Դասալսումներ են իրականացվել նաև ՈՆԱ պատասխանատուի կողմից մեկ անգամ, որի հիման վրա ներկայացվել է հաշվետվություն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՆԱ պատասխանատուի կողմից իրականացված դասալսումների արդյունքում վեր են հանվել խնդիրներ, մասնավորապես՝ գործնական առաջադրանքների պակաս, թեմայի

հիմնավորման, արդիականացման հիմնավորման պակաս, թեմա-մասնագիտություն-աշխատաշուկա կապի պակաս, ուսանողների ինքնուրույն աշխատանքի պակաս և այլն:

Բացի վերհանված խնդիրները ՈՆԱ պատասխանատուն ներկայացրել է որոշակի առաջարկություններ, օրինակ՝ մեկանգամյա դասալսման ցածր արդյունավետության, դասալսման օրը դասախոսին նախապես հայտնելու, դասախոսի ընտրած կուրսում դասալսումն իրականացնելու վերաբերյալ և այլն, սակայն վերոնշյալ գործընթացը շարունակություն չի ունեցել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումները բանավոր կերպով քննարկվում են առարկայական հանձնաժողովներում, սակայն հանձնաժողովների արձանագրություններում գնահատման երկարաժամկետ ազդեցություն չի նախատեսվում:

Որոշ դասախոսներ իրենց դասավանդման որակի, մեթոդների և գնահատման մոտեցումների արդյունավետության վերահսկման համար ուսանողներին առաջարկում են անանուն գնահատման թերթիկներ: Ուսանողների արած առաջարկությունների արդյունքում դասախոսները ցուցաբերում են այլ դասավանդման մոտեցում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողի կողմից դասախոսի գնահատման համար մշակվել են հարցաթերթեր, որոնք որպես գործիք պարբերական կիրառում չունեն քոլեջում, իսկ իրականացված հարցումները վերլուծված չեն: 2018 թվականին մշակել են «Վարչական աշխատողների և դասախոսների գնահատման, նրանց խրախուսման, շահադրդման կամ պատասխանատվության ենթարկելու ընթացակարգ», որի որոշ կետեր, ինչպես օրինակ՝ դասախոսների գնահատումը, քոլեջում իրականացվել են:

Ըստ 2020-2025 թթ. զարգացման ծրագրի՝ քոլեջն իր զարգացմանը նպաստող հիմնախնդիրներից է համարում դասավանդողների մասնագիտական կարողությունների զարգացումը և այդ ուղղությամբ մասնագիտական վերապատրաստումների իրականացումը: Կարիքի գնահատման գործիք է դասալսումը, որի արդյունքում դասախոսին տրվում է խորհրդատվություն և նրան ընդգրկում են վերապատրաստվողների ցուցակում:

Դասախոսները մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից ամեն տարի իրականացվող մեթոդական և ՊԿՉ-ներին վերաբերող վերապատրաստումներին, բացի դա քոլեջն իրականացնում է մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների կատարելագործմանը նպաստող ներքին վերապատրաստումներ, որոնք իրականացնում են քոլեջի հմուտ դասախոսները: Վերջին մոդուլային վերապատրաստումը իրականացվել է 2022-2023 ուսումնական տարվա սկզբին մեթոդիստի կողմից, որին մասնակցել են սկսնակ դասախոսները: Մասնագիտական վերապատրաստումները սակավ են, օրինակ «Սառնարանային տնտեսություն» մասնագիտության դասավանդողները մասնակցել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող մասնագիտական վերապատրաստումներին:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Քոլեջը 2022, 2023 թվականներին դասախոսների վերապատրաստման համար իր տարեկան նախահաշվով գումար չի հատկացրել: Քիչ թվով դասախոսներ իրենց նախաձեռնությամբ մասնակցել են

մասնագիտական վերապատրաստումների, մասնավորապես՝ ֆրանսերենի դասախոսը, «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության մասնագիտական մոդուլների դասավանդողը, «Շուկայաբանություն» ՄԿԾ-ն դասավանդողները SMM են վերապատրաստվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նման դրական դեպքերը եզակի են և տարածված չեն շատ դասախոսների շրջանում:

Նոր դասախոսների գնահատման համար քոլեջում մշակվել է «Նոր աշխատակցի հարմարման» ծրագիրը, ըստ որի նոր ընդունված աշխատակցի համար սահմանվում է 30-օրյա ադապտացիայի շրջան, որից հետո իրականացվում է 360 աստիճանի բազմակողմանի գնահատում: Գնահատումն իրականացնում է 3 տարբեր հարցաթերթերի միջոցով՝ վերադասի և ուսանողների կողմից գնահատման և ինքնագնահատման համար: Հարցաթերթերը տարբեր են և գնահատվում են 5 բալային համակարգով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերոնշյալ ծրագիրը գործարկվել է 2022-2023 ուստարվանից և նոր դասախոսները աշխատանքի են անցել տվյալ ընթացակարգով:

2022-2023 ուստարում քոլեջում աշխատում է 53 հիմնական, 21 համատեղող դասախոս, վերջիններիս մեջ մեծ թիվ են կազմում երիտասարդ կադրերը: Հատկանշական է, որ հիմնական աշխատողների թիվը գերակշռում է համատեղությամբ աշխատողների թվին, ինչը քոլեջի համար կայունության երաշխիք է: Քոլեջը ներգրավել է գործատու 4 դասավանդողներ «Հանրային սննդի տեխնոլոգիա», «Հաշվապահական հաշվառում», «Ապահովագրական գործ» և հյուրանոցային սպասարկման ոլորտներից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն ունի «Սառնարանային տնտեսություն» ՄԿԾ-ի դասավանդող մասնագետի կարիք: Քոլեջում առկա է «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» ՄԿԾ-ի մասնագիտական մոդուլների 1 դասավանդող: Մեկ դրույքով ծանրաբեռնված վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմը, որպես դասախոս ծանրաբեռնվում է 320 ժամով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում առկա են մասնագիտական աճի դրական օրինակներ, երբ աշխատակիցները դասախոսից դարձել են ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, առարկայական հանձնաժողովի նախագահ, բացի այդ պարզ դարձավ, որ հանրակրթական բաժնում կան դասախոսներ, ովքեր պլանավորում են մասնակցել կամավոր ատեստավորմանը: Փորձագիտական այցից պարզվեց նաև, որ 2022-2023 ուստարում մրցութային կարգով քոլեջ ընդունված դասախոսների մեջ կան գիտական աստիճան ունեցողներ: Ինչպես նաև պարզ դարձավ, որ դասախոսները խրախուսվել են պատվոգրերով, իսկ դեկտեմբեր ամսին ստացել են համահավասար լրավճար:

Քոլեջում 2022-2023 ուստարվա հաստիքացուցակով աշխատում է 31 վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմ: Հաստիքների համալրումը կախված է ուսանողների թվից:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բոլոր վարչական և ուսումնաօժանդակ աշխատողները ունեն պաշտոնի նկարագրեր, որոնցում սահմանված են գործողությունների բնագավառը, պարտականություններն ու իրավունքները և այլն, սակայն կան աշխատողներ (օրինակ՝ մեխանիկ–էլեկտրիկ, բանվոր, հավաքարար, համակարգչային տեխնիկան սպասարկող տեխնիկ, գանձապահ, արխիվավար, տնտեսվար, պահակ,

մեթոդիստ, լաբորանտ, պահակ), որոնց համար նախատեսված պաշտոնի նկարագրերում սահմանված են միայն գործառույթները: Բացի այդ փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հաստիքացուցակով կան հաստիքներ (տնօրենի տեղակալ ուսումնաարտադրական աշխատանքների գծով, նախնական կրթական ծրագրերի համակարգող, բաժնի վարիչ ուսումնական աշխատանքների գծով/ ուսումնական մասի պատասխանատու, մանկավարժ -հոգեբան), որոնք չեն համալրվել:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ դասախոսական անձնակազմի համալրման նպատակով քոլեջն առաջնորդվում է մրցութային կարգով և մրցույթներին դիմած 1-ից ավել մասնակիցների առկայությունը հնարավորություն է տալիս կատարել ընտրություն՝ ուսումնական պրոցեսում ներգրավելով ավելի պատրաստված մասնագետների: Այդուհանդերձ մտահոգիչ է, որ մրցույթի հարցատոմսերում ներառված չեն դիմորդի մասնագիտական գիտելիքներին վերաբերող հարցեր, այլ միայն մանկավարժական, օրենսդրական և այլ բնույթի: Փորձագիտական խումբը գտնում է, որ դասավանդվող մոդուլի/առարկայի վերաբերյալ հարցատոմսերում հարցեր ներառելը հնարավորություն կտա մրցութային հանձնաժողովին ընտրություն կատարելիս հիմնվել դիմորդի մասնագիտական կարողությունների, հմտությունների վրա:

Գովելի է, որ բացի մրցութային կարգից և ՊԿՉ-ներում ամրագրված պահանջներից, քոլեջը մշակել է դասախոսի պաշտոնի նկարագիր, այդուհանդերձ փորձագիտական խումբը գտնում է, որ պաշտոնի նկարագրերում հատուկ մասնագիտական պահանջներ ներառելը հնարավորություն կտա տարանջատել դասախոսական պաշտոնները ըստ ՄԿԾ-ների: Արդյունքում հնարավոր կդառնա ներգրավել առավել մրցունակ կադրեր: Փորձագիտական խումբը մտահոգված է, որ որոշ ՄԿԾ-ներում դասավանդում են համապատասխան որակավորում չունեցող մասնագետներ, ինչի արդյունքում կարող է վտանգվել դասընթացների արդյունավետությունը: Միևնույն ժամանակ կարևորվում է, որ այդ դասախոսները մասնակցում են մասնագիտական դասընթացների, որը հնարավորություն է տալիս ծանոթանալ ոլորտի նորություններին և մասնագիտական նրբություններին:

Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ քոլեջը դասախոսների գնահատման կարևոր մեխանիզմ է համարում դասալսումները և փոխադարձ դասալսումները, որոնց իրականացման համար ձևավորվել է գործընկերային մոտեցում, սակայն մտահոգիչ է, որ դասալսումների ժամանակ վերհանված խնդրների լուծման հետագիծը ակնառու չէ, դրանք սահմանափակվում են առարկայական հանձնաժողովներում իրականացվող քննարկումներով: Փորձագիտական խումբը գտնում է, որ դասալսումների վերլուծության և հետադարձ կապի ապահովման գործընթացները դեռևս լիարժեք չեն իրականացվում, բացի այդ դրանք չեն պարունակում գնահատման տարր: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ դասալսումները կարող են ծառայել որպես արդյունավետ գնահատման միջոց, եթե ստանան համարժեք արձագանք և դրանց հետևի համապատասխան գործողությունների շղթան:

Փորձագիտական խումբը որպես գնահատման գործիք կարևորում է ուսանողների շրջանում իրականացվող հարցումները, սակայն հարկ է ընդգծել, որ դրանք պարբերաբար չեն իրականացվում և վերլուծվում, հետևաբար ընկած չեն դասախոսի գնահատման հիմքում: Կարևոր է, որ կան դեպքեր, երբ դասախոսի կողմից իր վարած դասի գնահատման նպատակով իրականացված հարցումների արդյունքում լավարկվում են դասավանդման մեթոդները, սակայն նման մոտեցումը տարածված չէ դասախոսների լայն շրջանում: Այդ մեթոդի լայն կիրառումը հնարավորություն կտա դասախոսներին բացահայտել ուսանողների կարիքները, սպասումները և դասապրոցեսի արդյունավետ պլանավորման հիմքում օգտագործել դրանք:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջն ունեցել է դասախոսների գնահատման գործընթացի կազմակերպման դրական փորձ, որին հետևել է խրախուսումը, սակայն մտահոգիչ է, որ այդ գործընթացը չի ունեցել շարունակություն: Փորձագիտական խումբը որպես աշխատակցի մոտիվացիա կարևորում է խրախուսման մոտեցումները, որոնք հիմնված կլինեն գնահատման արդյունքների վրա:

Թեև քոլեջը կարևորում է դասավանդողների մասնագիտական կարողությունների զարգացումը և այդ ուղղությամբ մասնագիտական վերապատրաստումների դերը, սակայն մտահոգիչ է, որ դասախոսների համար մասնագիտական վերապատրաստումները սակավ են, կան որոշ դրական օրինակներ, սակայն դրանք հիմնականում դասախոսների նախաձեռնությամբ են տեղի ունենում: Դրական է, որ դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստումներին, բացի այդ քոլեջը, օգտագործելով իր ներքին ռեսուրսը, իրականացնում է մեթոդական ներքին վերապատրաստումներ, ինչի արդյունքում մեթոդական աջակցություն է ցուցաբերվում սկսնակ դասախոսներին:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում ներդրվել է նոր աշխատակցի հարմարման ծրագիր, որի ամբողջական գործարկումը հնարավորություն կտա հետագա գործընթացները իրականացնել հստակ վերլուծությունների վրա հիմնվելով: Արդյունքում հնարավոր կդառնա իրականացնել աշխատակցի կարիքի բացահայտում, գնահատում և օժանդակում:

Դրական է, որ դասախոսական անձնակազմի մեծ մասն հիմնական աշխատողներ են, հատկանշական է, որ քոլեջը ներգրավել է պրակտիկ մասնագետներ և նպատակ ունի ավելացնել նրանց թիվը: Գնահատելի է, որ վերջին տարիներին աշխատանքի են ընդունվել մեծ թվով երիտասարդ դասախոսներ, ովքեր դասապրոցեսի ընթացքում ցուցաբերում են նորարարական մոտեցումներ: Միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ քոլեջը «Սառնարանային տնտեսություն» ՄԿԾ-ում մասնագետ-դասավանդողի կարիք ունի, «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» ՄԿԾ-ում ունի մեկ դասավանդող, չունի կադրային ռեզերվ, ինչի արդյունքում կարող է վտանգվել դասընթացների անընդհատությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում առկա են դասախոսական անձնակազմի առաջընթացի լավ օրինակներ, ներգրավվել են գիտական աստիճան ունեցող մասնագետներ, սակայն մնացյալ շահադրդման, խրախուսման

մեխանիզմներ տարբերակված չեն, ուստի հասցեական խրախուսման մոտեցումները կարող են մոտիվացնել դասախոսներին և աշխատակիցներին:

Փորձագիտական խումբը կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում կարևորում է ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմով քոլեջի ապահովվածությունը, գնահատում է, որ առկա են պաշտոնի նկարագրեր և պարտականությունների հստակեցում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջն իր մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար ունի համապատասխան որակավորում ունեցող դասախոսական անձնակազմ, ընտրության մրցութային կարգ, վերջին տարիներին ներգրավել է գիտական կոչում ունեցող երիտասարդ կադրեր, պրակտիկ ոլորտի մասնագետներ, ունի կայուն դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, մասնագիտական ներուժ, կազմակերպում է մեթոդական վերապատրաստումներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

2020-2025 թթ. զարգացման ծրագրում ներառված չեն հետազոտության ոլորտում քոլեջի հետաքրքրություններն ու հավակնությունները, քոլեջն այս ուղղությամբ չունի հատուկ նպատակադրումներ: Հստակեցված չեն այն քայլերը և միջոցառումները, որոնցով քոլեջը պլանավորում է հետագայում զարգացնել ուսումնական գործընթացում հետազոտական բաղադրիչը: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ իրականացվող կրթական ծրագրերի ՄԾ-ներում, թեմատիկ պլաններում հստակեցված չեն, թե ինչն է քոլեջը համարում հետազոտություն կամ ինչ ինքնուրույն հետազոտական աշխատանքներ են պլանավորում իրականացնել ըստ առանձին մասնագիտությունների և մոդուլների:

Քոլեջը որպես պետական ամփոփիչ ատեստավորման ձև ընտրել է պետական քննությունը: Դիպլոմային աշխատանքների պաշտպանություն, կուրսային աշխատանքներ ըստ ուսպլանի չեն իրականացվում, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տարիներ առաջ «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային

համալիրներում» մասնագիտության ուսանողները գրել են կուրսային աշխատանքներ հետևյալ թեմաներով՝ «Հյուրանոցներ, հյուրանոցային նորություններ», «Հյուրանոցային ծառայություններ», «Զանազան տեսակի մաքրման աշխատանքներ», «Հյուրանոցային ինդուստրիա», «Միջազգային հյուրանոցներ» և այլն, որոնց ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վերջիններս պարունակում են հետազոտական բաղադրիչ, առկա են ոլորտի վերլուծություններ, այլ երկրների զբոսաշրջային ոլորտի ուսումնասիրություններ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ նախատեսվում է 2023-2024 ուստարվանից ընտրովի կարգով որպես պետական ամփոփիչ ատեստավորում ներդնել դիպլոմային աշխատանքը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն իրենք են առաջարկում հետաքրքիր թեմաների ուսումնասիրություններ, հանդես գալիս ներկայացումներով, բացի այդ հնարավորություն են ունենում ուսումնասիրել շուկան, իրականացնել մարքեթինգային վերլուծություն՝ ստեղծելով պատրաստի արտադրանք՝ բիզնես-պլան, տարբեր լեզուներով գովազդային բուկլետներ:

Հետազոտության զարգացման ուղղությամբ առաջին քայլերից կարելի է համարել 2019թ-ին Գիտաիննովացիոն բաժնի ստեղծումը, որը հիմնականում զբաղվում է ուսանողներին գիտության, տեխնոլոգիական նորարարություններին ծանոթացնելու միջացառումների կազմակերպմամբ: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բաժինը կազմակերպել է ուսանողների այցեր տարբեր կազմակերպություններ, ցուցահանդեսներ և թանգարաններ, «Ինովացիայից դեպի ձեռներեցություն և բիզնես» և այլ թեմաներով սեմինարներ, հրավիրել է Ֆրանսիական համալսարանի «Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ» ֆակուլտետի ուսանողներին՝ իրականացնելու «Ինովացիոն լուծումները կրթական համակարգում» թեմայով շնորհանդես-քննարկում: Ուսանողները մասնակցել են նաև Ֆրանսիական համալսարանում կազմակերպված մի շարք միջոցառումների: Բրիտանական խորհրդի կողմից ֆինասավորվող «Ստեղծարար միտք (Creative Spark)» դրամաշնորհային ծրագրի շրջանակում մասնակցել են ՀԱՊՀ-ում կազմակերպված «Ինչպես սկսել ձեր սեփական բիզնեսը և ստարտափը» անվճար դասընթացների շարքին և առաջարկելով ստորջրյա ռեստորանի գաղափար՝ ճանաչվել հաղթող: Պետք է նշել, որ Գիտաիննովացիոն բաժինը աշխատում է հիմնականում «Շուկայաբանություն» և« Կառավարում» մասնագիտությունների ուսանողների հետ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ բաժնի գործունեության հիմնական ուղղություններից է քոլեջի դերի բարձրացումը որպես կրթական, հետազոտական և ձեռնարկատիրության զարգացման կենտրոն, որի շրջանակում դեռ կոնկրետ քայլեր չեն արվել: Հետազոտական աշխատանքների պլանավորման և իրականացման հետ կապված բաժինը իր աշխատանքային պլանում չի ներառել նպատակադրումներ, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախատեսում են ուշադրություն դարձնել նաև այդ ուղղությանը, մասնավորապես՝ ուսանողներին սովորեցնել իրականացնել հետազոտություններ, գրել հոդվածներ, աջակցել դասախոսներին

հետազոտական գործունեությունը իրականացնելիս, նաև նախատեսում են ստեղծել նման աշխատանքների իրականացման համար տեխնիկական պահանջների հստակ չափանիշներ։

Չնայած քոլեջը հետազոտական գործունեությունը կարգավորող ընթացակարգեր և քաղաքականություն չունի, այնուամենայնիվ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի դասախոսների մի մասը զբաղվում են հետազոտական գործունեությամբ և ունեն տպագրված գիտական հոդվածներ։ Նրանց մի մասը, սակայն, համատեղող դասախոսներ են։ Վերջին երկու տարվա ընթացքում քոլեջում աշխատանքի են անցել գիտական աստիճան ունեցող երկու դասախոս։

Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ մոդուլների շրջանակում տրված առաջադրանքները և հանձնարարականները հիմնականում զարգացնում են ուսանողի հետազոտական և ստեղծագործական կարողությունները, բացի այդ դասախոսները հանձնարարում են այնպիսի թեմաներ, որոնց հայերեն կամ պատրաստի տարբերակը չկա համացանցում, օրինակ՝ «Տուրիզմի ինդուստրիա» մոդուլի շրջանակներում «Սպասարկման կազմակերպումը հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողները դասախոսի հետ իրականացրել են հետազոտական աշխատանք «Ճամփորդեք մեզ հետ» թեմայով։ Հետազոտական աշխատանքի նպատակն է եղել ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքները վերածել պրակտիկայի և ունենալ դաշտային աշխատանք։ Վերջում ուսանողները ներկայացրել են մի քանի պատրաստի զբոսաշրջային փաթեթ։

Նույն մասնագիտության ուսանողները կամավորության սկզբունքով կատարել են հետազոտական աշխատանք, որի թեման եղել է՝ Արաբական երկրների տեսարժան վայրերի ուսումնասիրությունը, զբոսաշրջային առանձնահատկությունները և հյուրանոցում մատուցվող հետաքրքիր ծառայությունները ։

«Մարքեթինգ» մոդուլի շրջանակներում հանձնարարվել է ստեղծել ուսանողական գործարար ծրագիր, որի նպատակն է ուսանողներին տալ հնարավորություն հիմնելու գործարար ընկերություն և զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, բացի այդ ծանոթանալ բաժնետիրական ընկերության հիմնադրման և լուծարման գործընթացին, վարել մարքեթինգային հետազոտություններ, կազմել բիզնես- պլան, կազմակերպել ապրանքների և ծառայությունների արտադրություն, մշակել մարքեթինգային ռազմավարությունը և այլն։

Ընդհանուր առմամբ, ՄԾ-ների և դասերի պլանների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանց միայն որոշ դասախոսների պլաններում են նշված կոնկրետ հանձնարարականների տեսակները և թեմաները։ Պետք է նշել նաև, որ ուսանողների ստեղծագործական և վերլուծական հմտությունների զարգացմանը միտված առաջադրանքներ տրվում են նաև հանրակրթական առարկաների՝ պատմություն, հայոց լեզու և գրականություն, աշխարհագրություն, շրջանակում։ Օրինակ՝ «Աշխարհագրություն» առարկայի շրջանակներում ուսանողներին հանձնարարվել է ուսումնասիրել Հյուսիսային Ամերիկայի բնիկների բնաջնջման, հրեաների հոլոքոստի և հայերի ցեղասպանության նմանությունները, ուսանողները հանդես են եկել զեկույցներով և սեփական հետազոտական բացահայտումներով։

Ֆրանսերենի դասախոսը հանձնարարում է ուսումնասիրել ֆրանսիական հեռուստատեսություններով հաճախ կիրառվող ժարգոնային բառերը, ներկայացնել դրանց կիրառության ոլորտները, ուսումնասիրել ֆրանսիական խոհանոցը՝ հիմնականում ազգային հացաբուլկեղենը: Ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով բուկլետներ են պատրաստում այս կամ այն հյուրանոցային ծառայությունը գովազդելու վերաբերյալ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ անգլերենի դասախոսի կողմից ստեղծվել է ժամանցային և ուսուցողական «Բլիբում» խաղը, որի ստեղծմանը մասնակցել են քոլեջի մի շարք ուսանողներ, ովքեր հետաքրքրված են անգլերենի ուսուցմամբ: Խաղը կիրառվում է դասապրոցեսի ընթացքում:

Քոլեջի դասախոսները տպագրել և գործածության մեջ են դրել իրենց ուսումնառության նյութերը, մասնավորապես՝ «Մասնագիտական հաղորդակցում օտար լեզվով 1», «Մասնագիտական հաղորդակցում ֆրանսերենով «Խոհանոց 1» և «Խոհանոց 2», «Մասնագիտական հաղորդակցում օտար լեզվով՝ ռուսաց լեզու», «Մասնագիտական հաղոորդակցում օտար լեզվով -2 ֆրանսերեն», մեթոդական ուղեցույց «Ընդհանուր մանկավարժություն, ուսուցում, դաստիարակություն», «Հայոց լեզու և խոսքի մշակույթի հիմունքներ»,«Ֆրանսերենի ձեռնարկ», «Հայոց լեզվի ձեռնարկ», «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության մասնագիտական մոդուլների ուսումնառության նյութեր և այլն, որոնց շրջանակներում դասախոսները կատարել են ուսումնասիրություններ:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը նշում է, որ Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը իր 2020-2025 զարգացման ծրագրում և զարգացման ծրագրի պլան-ժամանակացույցում չի ներառել հետազոտական գործունեությամբ զբաղվելու նպատակադրումները, հետազոտական գործունեությունը ռազմավարական առաջնահերթություն չէ, այդուհանդերձ տարբեր ՄԿԾ-ներում, տարբեր մոդուլների և առարկաների դասախոսները կարևորում են ուսանողի կողմից իրականացվող ինքնուրույն հետազոտական աշխատանքները, որոնք տարաբնույթ են, պարունակում են հետազոտական բաղադրիչ և ապահովում են վերջնարդյունքով պահանջվող հմտությունների և կարողությունների ձևավորումը: Գովելի է, որ դասախոսները հանձնարարում են այնպիսի թեմաներ, որոնք ազատ տեղադրված չեն համացանցում՝ բացառելով գրագողությունը: Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ նման մոտեցման արդյունքում հնարավորություն կստեղծվի պատրաստել ինքնուրույն մտածողությամբ, հետազոտական հմտություններով օժտված մասնագետներ:

Գնահատելի է, որ 2023-2024 ուստարվանից քոլեջում որպես ավարտական աշխատանք ընտրովի կարգով կներդրվի դիպլոմայինը: Բացի այդ փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում գործող Գիտաինովացիոն բաժինը նախատեսում է իր աշխատանքային պլանում ներառել հետազոտական աշխատանքը ուսանողների և

դասախոսների շրջանում տարածելու, խրախուսելու գործողությունների շղթա և նախատեսում է դա իրականացնել 2023-2024 ուստարվանից՝ օժանդակելով նոր ներդրվող դիպլոմային աշխատանքների իրականացման գործընթացին՝ ստեղծելով ուղղորդիչ տեխնիկական պահանջներ: Արդյունքում քոլեջում իրականացվող հետազոտական աշխատանքները կունենան փաստաթղթային հենք և կանոնակարգված ընթացք: Գնահատելի է բաժնի կողմից քոլեջի ուսանողների համար կազմակերպված տարատեսակ հանդիպումները, արդիական սեմինարները, ցուցահանդեսները, դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունը, որոնք ուսանողներին հնարավորություն են տալիս քայլել ժամանակին համընթաց, զարգացնում են հետազոտական հմտությունները և բիզնես գաղափարները: Փորձագիտական խումբը գտնում է, որ նման ծրագրերին ավելի շատ ուսանողներ ներգրավելը կնպաստի քոլեջում հետազոտական և վերլուծական հմտությունների համընդհանուր զարգացմանն ու տարածմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում համատեղությամբ աշխատող, գիտական աստիճան ունեցող դասախոսները հետազոտական գործունեությամբ զբաղվելու փորձ ունեն, ինչը նույնպես կարող է մեծ օժանդակություն դառնալ մնացյալ դասախոսների համար: Արդյունքում հետազոտական բաղադրիչը քոլեջում կդառնա առաջնային և կտարածվի բոլոր ՄԿԾ-ներում:

Փորձագիտական խումբը դրականորեն արձանագրում է, որ քոլեջի դասախոսները մասնագիտական ձեռնարկների, ուսումնաօժանդակ նյութերի, մեթոդական ուղեցույցների, անգլերեն լեզվով զարգացնող խաղի հեղինակներ են: Փորձագիտական խմբի դիտարկմամբ, հետազոտության ոլորտում խրախուսման մեխանիզմների ներդրումը կարող է դասախոսներին մոտիվացնել ավելի շատ զբաղվելու հետազոտությամբ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի Ն. Աճեմյանի անվան թիվ 2 տարածաշրջանային պետական քոլեջը նպատակադրված է հետազոտական բաղադրիչը դարձնել պանավորման կարևոր մաս, դասախոսները գիտական հոդվածների, մասնագիտական ձեռնարկների, ուսումնաօժանդակ նյութերի, մեթոդական ուղեցույցների հեղինակներ են, ուսանողներին տրվող հանձնարարականները պարունակում են հետազոտական բաղադրիչ և զարգացում են ուսանողների ինքնուրույն մտածողությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը բավարարում է չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի շենքի տարածքը կազմում է՝ 5800 քմ, որտեղ կա 22 լսարան, 8 առարկայական կաբինետ (4-ը անշարժ պրոյեկտորներով և 1-ը շարժական), 3 լաբորատորիա (ֆիզիկա, քիմիա և սառնարանային տնտեսություն), 1 սմարթ կաբինետ, 5 համակարգչային կաբինետ, 2 մարզադահլիճ, մարզասարքերով հագեցված սրահ, մարզահրապարակ, գրադարան, ընթերցասրահ, բուժկետ, արխիվ և հանդիսությունների դահլիճ:

Համակարգչային 5 լսարաններում առկա են 62 համակարգիչ, լսարաններից մեկը միշտ հասանելի է ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների համար: Քոլեջն ապահովված է Wi-Fi կապով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ն ունի «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրի համար նախատեսված ՀԾ ծրագիր, որը ներբռնած է 2 համակարգչային լսարաններում: «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» կրթական ծրագրի համար նախատեսված ամրագրման ծրագրեր չկան, ինչը բացատրվում է ֆինանսապես դրա ոչ նպատակահարմարությանբ: Ներկայումս, տվյալ կրթական ծրագրի ուսանողները պրակտիկա են անցնում տարբեր կազմակերպություններում, որտեղ տարբեր ծրագրակազմեր են կիրառվում և ուսանողներից երկու շաբաթ է պահանջվում դրանց տիրապետելու համար:

Ֆիզիկայի լաբորատորիան հագեցված է սարքավորումներով գործնական աշխատանքներ կատարելու համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քիմիայի լաբորատորիայում չկան սարքավորումներ, ինչպես նաև բացակայում են պայմաններ, օրինակ՝ գործնական աշխատանքներ կատարելու համար ջրի ծորակը: «Սառնարանային տնտեսություն» ծրագրի իրականացման համար ՄՈՒՀ-ը տրամադրել է 3 լսարան, որոնցից մեկը նախատեսված է գործնական աշխատանքների համար, հագեցված է գույքով (հիմնականում շարժական):

ՄՈՒՀ-ն ունի արևային ֆոտովոլտային կայան, որը նախատեսված է «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության գործնական աշխատանքների համար:

Քոլեջն ունի սննդի կետի համար նախատեսված տարածք, որը COVID համավարակից հետո չի օգտագործվում, ԿԳՄՍ նախարարության որոշման համաձայն: ՈՒԽ-ի պահանջով քոլեջը դիմել է նախարարություն և շուտով նախատեսվում է դրա վերաբացումը:

ՄՈՒՀ-ում առկա է նաև վարսավիրանոց («Կոսմետոլոգիա և դիմահարդարման արվեստ»), խոհանոց «Հանրային սննդի տեխնոլոգիա» հետագայում՝ «Խոհարարական գործ» մասնագիտությամբ սովորող ուսանողների համար (խոհանոցը դեռևս հագեցած չէ ժամանակակից սարքավորումներով), նախատեսվում է նորոգել և կահավորել 2

հյուրանոցային սենյակ «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում» մասնագիտության ուսանողների գործնական աշխատանքների համար։

Քոլեջի գրադարանը նոր է վերանորոգվել։ Գրադարանի ընդհանուր ֆոնդը կազմում է 7600 անուն գիրք, որից մասնագիտական գրականությունը կազմում է 2400 անուն գիրք, ծրագրային գեղարվեստական գրականությունը՝ 3500 անուն գիրք, դասագրքերը՝ 1500 անուն գիրք, ինչպես նաև առկա են 110 անուն ուսումնամեթոդական ձեռնարկներ և 9 անուն էլեկտրոնային տեղեկատվական գրականություն։ 9 անուն ձեռնարկներ, բրոշյուրներ և դասագրքեր քոլեջի դասախոսների կողմից մշակվել և հրատարակվել են։ Քոլեջի բոլոր ուսանողները գրանցված են գրադարանում և ունեն քարտեր։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գրադարանն ունի մասնագիտական գրականության պակաս, որը լրացնում են դասախոսություններով։ Քոլեջում համակարգչային լսարան է հատկացված ընթերցասրահի համար և դրանից ուսանողներն օգտվում են նաև ինքնուրույն աշխատանքներն իրականացնելիս։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բյուջեի բաշխման քննարկումն իրականացվում է կառավարման մարմիններում և հաստատվում՝ Կառավարման խորհրդում։

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի ֆինանսատնտեսական գործունեության դրամական միջոցների մուտքերի մոտ 75% ֆինանսավորվում է պետության կողմից, մնացած մուտքերը կատարվում են ուսանողների վարձավճարներից (23%) և այլ ծառայությունների մատուցումից (1-2%)։ Ըստ ինքնավերլուծության՝ ֆինանսական այլ հոսքերի (ձեռնարկատիրական գործունեությունից, վարձակալությունից) կառավարումն իրականացվում է համապատասխան կանոնակարգերով և ուղեցույցներով՝ ելնելով նպատակից, տրամադրման պահանջներից և պայմաններից։

ՄՈՒՀ-ի բյուջեի հիմնական ծախսումները իրականացվում են աշխատողների աշխատավարձի վարձատրության, կոմունալ և ընթացիկ աշխատանքային գործընթացը կազմակերպելու նպատակով ներկայացված պահանջագրերի հիման վրա։ Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այլ բյուջետային հատկացումներ հիմնականում չի իրականացվում և քոլեջը չի մասնակցում որևէ պետական կամ այլ դրամաշնորհային ծրագրի։ Քոլեջում վերանորոգման աշխատանքները հիմնականում իրականացվում են ներքին ռեսուրսներով։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի բյուջեով նախատեսված չեն ծախսեր ,ըստ կրթական ծրագրերի, քանի որ իրականացված չէ առանձին կրթական ծրագրերի կարիքների վերհանում։ Քոլեջը հնարավորինս օգտագործում է ոչ միայն ներքին, այլև արտաքին՝ գործատուների ռեսուրսները գործնական աշխատանքներ իրականացնելու համար, մասնավորապես «Սառնարանային տնտեսություն», «Հանրային սննդի տեխնոլոգիա» և «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» և «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» (դուալ) ՄԿԾ-ների շրջանակներում։ Քոլեջը կնքել է համագործակցության հուշագրեր և պայմանագրեր։ Օրինակ՝ «Սառնարանային տնտեսություն» մասնագիտության ուսանողները

իրենց գործնական պարապմունքներն կարող են անցնել «Ուրբան Լոջիստիք Սերվիս» ՓԲԸ-ում սկսած 2019թ-ից։ 2022թ. համագործակցության հուշագիր է ստորագրվել «ՍՈԼԱՐՈՆ» արևային վահանակների արտադրող ընկերության հետ, որտեղ «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու գործնական պարապմունքների։

«Հանրային սննդի տեխնոլոգիա» (խոհարար) և «Կոսմետոլոգիա և դիմահարդարման արվեստ» ՄԿԾ-ների գործնական աշխատանքների անցկացման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման նպատակով ուսանողների հետ կնքվող պայմանագրերում առանձին կետով նշվում է, որ տարեկան 4000-5000 դրամ պետք է ուսանողը վճարի։

Ինքնավերլուծության համաձայն՝ որակի շարունակական բարելավումն ու կայունությունն ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան ենթարկվում է ուսումնասիրման, գնահատման, թարմացման և հարստացման։ Վերոգրյալ գործընթացի ընթացքում 2019–2020թթ.-ին Քոլեջը ձեռք է բերել գրատախտակ (5 հատ), համակարգիչ (8 հատ), իսկ 2022-2023թթ.-ին՝ անցակետ, միաձույլ աշակերտական սեղան (9 հատ), գրատախտակ (6 հատ)։

Ինչպես արդեն վերը նշվել է քոլեջի բյուջեն չի ձևավորվում ըստ ռազմավարական պլանի, սակայն փորձում են առկա միջոցներով ապահովել կրթական ծրագրերի իրականացումը՝ ներգրավելով արտաքին շահակիցների։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նոր կրթական ծրագրեր մեկնարկելիս քոլեջը միշտ չէ, որ ունի ամբողջական նյութատեխնիկական ապահովվածություն, սակայն փորձում է այն բարելավել տարիների ընթացքում։

Քոլեջում տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարումն իրականացվում է առկա տեղեկատվական հարթակների միջոցով։ Արտաքին փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է MULBERRY էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով։ Քոլեջի ներքին տեղեկատվությունն ու փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է քոլեջի կայքի միջոցով, էլեկտրոնային փոստով և ոչ էլեկտրոնային՝ թղթային եղանակով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին փաստաթղթաշրջանառությունը կատարվում է հիմնականում թղթային տարբերակով։ Ստորաբաժանումների ներսում արձանագրությունները գրվում են ձեռագրով՝ մատյանների մեջ։ Այնուամենայնիվ, կառավարման խորհրդի, մանկավարժական խորհրդի և տնօրինական խորհրդի արձանագրությունները կազմվում են էլեկտրոնային տարբերակով։

Քոլեջն ապահովում է դիմումների, պաշտոնական նամակների, գրությունների պահպանումը, ելից և մտից թղթակցության ձևակերպումը, փաստաթղթերի պահպանումը՝ գործավարության ընդունված կարգով։ Քոլեջն ունի նաև պաշտոնական կայքէջ, սակայն տեղեկատվությունը դեռևս մեկ լեզվով է հասանելի։

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի անվտանգության աշխատակիցներ (պահակներ), տարածքում գործում է 14 տեսախցիկ և 8 ելք։ Քոլեջի ամբողջ տարածքով անցկացված է հակահրդեհային ավտոմատացված համակարգ, սակայն ձեռքի կրակմարիչներ առկա չեն, քոլեջի երկրորդ հարկում փակցված է տարհանման պլան։

Մուտքում տեղադրված է անցակետ, որը նախատեսված է քոլեջի աշխատակազմի մուտք ու ելքի համար, իսկ սեպտեմբեր ամսից գործարկելու է նաև ուսանողների համար: Քոլեջում առկա են հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար պայմաններ (թեքահարթակ, սահանգույց): Ներկայումս Քոլեջն ունի առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 9 ուսանող, որոնք հենաշարժողական խնդիրներ չունեն: Քոլեջն ունի նաև կահավորված բուժկետ, որտեղ աշխատում է բժիշկ-թերապևտ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չունի ռեսուրսներից բավարվածության հարցումներ կատարելու հստակ քաղաքականություն և մեխանիզմներ: Ինքնավերլուծության նպատակով երբեմն անցկացվել են հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում: Ուսանողների հարցումների ընթացքում հիմնական դժգոհությունները եղել են սննդի ծառայության բացակայության վերաբերյալ, որոնք որ քննարկվել են մի քանի օղակներում (օրինակ ՈՒԽ-ում) և գրավոր փոխանցվել են տնօրենին: Ուսանողները նաև ակնկալում են ավելի մեծ թվով համակարգչային լսարաններ ունենալ:

Այնուամենայինիվ փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ դասախոսները և ուսանողները ունեն հասանելիություն նյութատեխնիկական բազային:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի ռեսուրսների համապատասխանությունը կրթական նպատակներին և ուսումնական գործընթացի իրականացմանը: Քոլեջում առկա են ռեսուրսներով հագեցված լսարաններ, լաբորատորիաներ, մարզադահլիճներ, մարզասրահ, վարսավիրանոց, գրադարան, բուժկետ: Գովելի է, որ քոլեջի որոշ մասնագիտությունները ապահովված են ռեսուրսներով և որոշ մասնագիտությունների համար քոլեջը շարունակում է պայմաններ ստեղծել՝ օգտագործելով ներքին և արտաքին ռեսուրսներ. համագործակցության և պրակտիկայի պայմանագրերի կնքման և իրականացման շնորհիվ ապահովում են ՄԿԾ-ների արդյունքների իրականացման համար անհրաժեշտ ռսումնական միջավայր:

Փորձագիտական խումբը կարևորում է այն հանգամանքը, որ Քոլեջը ֆինանսական միջոցների բաշխումը քննարկվում է կառավարման մի քանի օղակներում, այդուհանդերձ քոլեջի ֆինանսական միջոցների մեծամասնությունը ուղղված է աշխատավարձի վճարմանը և ֆինանսական քիչ միջոցներ են մնում նյութատեխնիկական բազան ավելացնելու համար: Եվ այս ուղղությամբ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը կկարողանա իր առջև դրված մարտահրավերները հաղթահարել և երկարաժամկետ պլանավորում իրականացնել միայն ֆինանսական այլ աղբյուրների հայթայթման միջոցով:

Դրական է համարվում նաև, որ Քոլեջում արտաքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է Մալբերի համակարգով, սակայն փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում ներքին փաստաթղթաշրջանառության համակարգի բացակայությունը, էլեկտրոնային հարթակների կիրառումը, ինչպես նաև փաստաթղթավորման թվայնացումը

թվայնացումը կնպաստեն քոլեջում ընթացող գործընթացների առավել համակարգմանը և գործընթացների դյուրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ քոլեջը կարևորում է ուսանողների առողջության պահպանմանն ու անվտանգ միջավայրի ձևավորման ուղղված քայլերը: Գովելի է նաև հատուկ կարիք ունեցող ուսանողների համար պայմանների ստեղծումը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջում դասախոսների և ուսանողների կարիքների վերհանման, մասնավորապես՝ հարցումների իրականացման հստակ քաղաքականության ներդրումը կարող է նպաստել ռեսուրսների արդյունավետ պլանավորմանը և շարունակական բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը կրթական ծրագրերի իրականացման համար ունի անհրաժեշտ ռեսուրսներ և քայլեր է ձեռնակում դրանց շարունակական բարելավման և ընդլայնման ուղղությամբ, ստեղծել է և ապահովում է ուսանողների և դասախոսների համար ապահով միջավայր, պայմաններ՝ հատուկ կարիք ունեցող ուսանողների համար, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7- ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը սահմանված կարգով ներկայացնում է հաշվետվություններ ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, Պետական եկամուտների կոմիտեին, Վիճակագրական կոմիտեին և այլ պետական գերատեսչությունների: Քոլեջի Կարիերայի կենտրոնը եռամսյակային հաշվետվություն է ներկայացնում ՄԿՄԿ-ին: Քոլեջի բոլոր ստորաբաժանումները տալիս են տարեկան հաշվետվություններ, որոնց հիման վրա ձևավորվում է տնօրենի ամփոփիչ հաշվետվությունը, որը ներկայացվում է ԿԽ-ին: Այդուհանդերձ, ամփոփիչ հաշվետվությունը վերլուծական փաստաթուղթ չէ և հնարավորություն չի ընձեռում գնահատելու քոլեջում կատարված աշխատանքների արդյունավետությունը՝ ըստ գործունեության ոլորտների:

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջն ունի միալեզու (հայերեն) վեբ-կայք https://www.n2college.am/: Կայքէջում ոչ բոլոր էջերն են լրացված, միևնույն ժամանակ կայքում առկա են մասնագիտություններն ու դրանց նկարագրերը,

կայքէջին առցանց բաժանորդագրվելու հնարավորություն, վերջին տեղեկությունները լրացուցիչ կրթական ծրագրերի (ԼԿԾ) մասին, ԼԿԾ մասնագիտություններին առցանց գրանցման հայտ ուղարկելու հնարավորություն, ուս.խորհրդի մասին տեղեկատվություն: Հայտարարությունների բաժնում առկա է թափուր տեղերի վերաբերյալ տեղեկատվություն: Կայքն ունի նաև «Կապը մեզ հետ» պատուհան: Կայքում տեղադրվում են նաև ընդունելության, ուսանողների ռոտացիայի արդյունքները:

Քոլեջի ֆեյսբուքյան էջը շատ հաճախ է թարմացվում: Լուսաբանվում են քոլեջում տեղի ունեցող նորություններն ու միջոցառումները:

Քոլեջը պահպանում է իր թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, անցկացնելով կառավարման խորհդի և տնօրինական խորհդի բաց նիստեր: Պետք է նշել, սակայն, որ հաշվետվությունները և նիստերի արձանագրությունները բացակայում են կայքէջում: Չնայած,որ կայքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ փաստաթղթեր պատուհանում առկա են 2022թ. քոլեջի ներքին կարգապահական կանոնները և ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված կարգեր (պետական ամփոփիչ կարգ, խորհրդի ձևավորման կարգ, ընդունելության կարգ և այլն):

Քոլեջն ունի կայքի պատասխանատու, որը արագ հետադարձ կապ է ապահովում: Արագ հետադարձ կապ է ապահովվում նաև ֆեյսբուքյան էջը: Պետք է նշել, որ Ֆեյսբուքյան և Ինստագրամյան էջերը վարում են ուսանողները: Առկա է նաև Կարիերայի կենտրոնի կողմից հատուկ քոլեջի շրջանավարտների համար ստեղծված փակ խումբ, որի միջոցով հաջողություն ունեցած ուսանողները հրավիրվում են սեմինարների և թրեյնինգների: Ինչպես նաև տեղադրվում են մասնագիտական թափուր հաստիքները:

Գործատուների հետ հետադարձ կապի պահպանման տեսանկյունից ակտիվ գործունեություն են ծավալում կարիերայի պատասխանատուները, դուալ ծրագրի պատասխանատուն և պրակտիկայի պատասխանատուն: Գործատուները, որպես ավարտական քննությունների հանձնաժողովների նախագահներ, մասնակցում են քննություններին և լավագույն ուսանողներին աշխատանքի հրավիրում:

Ինքնավերլուծության համաձայն՝ Քոլեջի ուսանողները գործընկեր կազմակերպությունների, ՀԿ-ների միջոցառումներին մշտապես հանդես են գալիս որպես կամավորներ: Օրինակ՝ ՄԿՄԿ-ի կողմից կազմակերպված ամենամյա կարիերայի օրերի միջոցառումներին, աշխատանքային տոնավաճառներին, Եվրոպայի օրվա միջոցառումներին և այլն: Քոլեջը կատարում է նաև կամավորական աշխատանքների խթանում: Ինչպես օրինակ՝ Գիտահինովացիոն բաժինը կնքել էր համագործակցության պայմանագիր «ԱՅԷՍԷՍԴԻ» կազմակերպության հետ: Այդ համագործակցության արդյունքում քոլեջում ձևավորվել է թափոնների տեսակավորման և վերամշակման մշակույթ, որը նպաստել է համայնքներում թափոնների ինովացիոն նախաձեռնության իրազեկման բարձրացմանը:

Ծնողների հետ կապը պահպանվում է՝ առաջին կուրսերում՝ կուրսղեկների միջոցով, երկրորդ կուրսից սկսած՝ կարգավարների միջոցով: Յուրաքանչյուր կուրսի համար բացվում են հարթակներ, որտեղ կարգավարները ուսանողների ծնողների հետ կապ են հաստատում՝ բացակաների և այլ խնդիրների վերաբերյալ:

Բացի երկարաժամկետ ծրագրերից քոլեջը մշակել է մոդուլային ուսուցման կարճաժամկետ ծրագրեր՝ «Եռակցող», «Վարսահարդար», «Հաշվապահ», «Մատնահարդար», «Խոհարար», «Գանձապահ», «Դիմահարդար», «Դիզայներ(տորթերի ձևավորող)», «Մենեջեր առևտրի», «JAVASCRIPT ծրագրավորման լեզու», «FRAMEWORK LARAVEL ծրագրավորման լեզու», «WEB տեխնոլոգիաների կիրառումը» և «WEB ծրագրավորում»: Փորձագիտական այցի ընացքում պարցվեց, որ 2022-2023 ուստարում ոչ մի կարճաժամկետ ծրագիր չի իրականացրել՝ տենդեր չլինելու և ունկնդիր չունենալու պատճառով:

Բոլոր մշակված ծրագրերի վերաբերյալ կայքում պարբերաբար թարմացումներ են կատարվում, ինչը հնարավորություն է տալիս պայմաններին ծանոթանալու և առցանց հայտագրվելու:

Ըստ ինքնավերլուծության՝ կարիերայի կենտրոնի պատասխանատուները անհրաժեշտության դեպքում մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն են իրականացնում հասարակության տարբեր շերտերի հետ:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջում գործում է ներքևից վերև-վերևից ներքև հաշվետվողականության գործընթաց, միևնույն ժամանակ գտնում, որ ներքին հաշվետվողականությունը ունի բարելավման և առավել վերլուծական դարձնելու կարիք: Փորձագիտական խումբը կարևորում է, որ հաշվետվությունները, դառնան տվյալահեն ու բխեն ռազմավարական պլանավորումներից, ինչը հնարավորություն կտա բացահայտելու տարվա ընթացքում առաջացած խնդիրները և լուծման ուղիները:

Դրական է համարվում քոլեջի գործունեությունը կայքէջի և ֆեյսբուքյան էջի հարթակներում, որոնց միջոցով քոլեջը հասանելի է ներքին և արտաքին շահակիցների, ինչպես նաև լայն հանրության համար: Ներկայումս կայքէջը միալեզու է, փորձագիտական խումբը գտնում է, որ երկլեզու կամ եռալեզու կայքի գործարկումը կնպաստի քոլեջի հասանելիության և արտաքին կապերի, նաև հետագայում միջազգայնացման հնարավորությունների ընդլայնմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ առկա են հետադարձ կապի մեխամիզմներ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին շահակիցների շրջանում, որոնք հնարավորություն են տալիս մշտապես կապի մեջ լինել:

Փորձագիտական խումբեր դրական է գնահատում այն, որ առկա են հետադարձ կապի մեխանիզներ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին շահակիցների շրջանում, որոնք հնարավորություն են տալիս մշտապես կապի մեջ լինել:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև լրացուցիչ ծրագրերի իրականացումը ը, սակայն քոլեջը համապատասխան քայլեր չի ձեռնարկում լրացուցիչ ծրագրերի իրականացման ուղղությամբ, ինչը կնպաստի քոլեջի լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրների հայթհայթմանը: Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ հասարակության

լայն շերտերին քոլեջի դասախոսների և ուսանողների կողմից իրենց ստացած գիտելիքի անվճար փոխանցման մեխանիզմների ներդրումը մեծապես կնպաստի քոլեջի վարկանիշի բարձրացմանը և քոլեջի մասին տեղեկատվության տարածմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջում գործում է ներքից վերև հաշվետվողականության համակարգ, իր տրամադրած կրթության և օգտագործած ռեսուրսների համար այն հաշվետու է պետությանը, ներքին և արտաքին շահակիցներին, քոլեջը հասանելի է էլեկտրոնային և սոցիալական հարթակներում, որոնք ստեղծում են հետադարձ կապ հասարակության հետ և ապահովվում են քոլեջի գործընթացների թափանցիկությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է Չափանիշի 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8- ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի Ռազմավարական ծրագրում որպես առաքելություն ամրագրված է, որ այն ձգտում է տարածաշրջանային և միջազգային համագործակցության, իսկ ՌԾ-ում սահմանված նպատակներից է մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում նորարարությունների, ինչպես նաև տեղայնացված առաջավոր միջազգային փորձի ներդրումը, զարգացումն ու տարածումը, կրթության գլոբալ համակարգերի ինտեգրումը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, սակայն, որ ՌԾ-ի զարգացման պլանում, ինչպես նաև գործողությունների պլանում նախատեսված չեն արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականության, ընթացակարգերի և մեխանիզմների մշակումներ, ինչպես նաև միջազգայնացման ուղղությամբ միջոցառումներ: ՌԾ-ի գործողությունների պլանում շեշտադրված է միայն գործատուների հետ կապերի ստեղծումը: Փրձագիտական այցը ցույց տվեց, որ Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջն ունի տեղական մակարդակով գործընկերների լայն շրջանակ (օրինակ՝ «Սառեցման, օդորակման և ջեռուցման ինժեներական Հայկական ասոցիացիա», Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարան և այլն), որոնք ամրագրված են համագործակցության հուշագրերով և պայմանագրերով: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ բուհերի հետ հուշագրերի և պայմանագրերի շրջանակում հիմնականում համագործագրությունը իրականացվում է

կարիերայի օրերի միջոցառումներին մասնակցության, իսկ այլ կազմակերպությունների հետ՝ պրակտիկայի կազմակերպման նպատակով: Փաստաթղթերի ուսումնասիրությունեց և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կարիերայի կենտրոնի, առարկայական հանձնաժողովների նախագահների և պրակտիկայի ղեկավարի հիմնական նպատակն է գործընկերային կապեր հաստատել Քոլեջի ուսանողներին պրակտիկայի ապահովման նպատակով: Թույլատրվում է ուսանողներին կազմակերպել իրենց պրակտիկան սեփական նախաձեռնությամբ: Քոլեջն օգտագործում է նաև գործատու-դասախոսների և կառավարման խորհրդում ներկայացուցիչ ունեցող կազմակերպությունների ռեսուրսները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ արտաքին կապերի հաստատումը վերջին շրջանում հիմնականում միտված է դուալ կրթության, «Սառնարանային տնտեսություն» և «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» կրթական ծրագրերի ռեսուրսների ապահովմանը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի կարիերայի կենտրոնը համագործակցում է նաև այլ քոլեջների կարիերայի կենտրոնների (օրինակ՝ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի, Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայհունական պետական քոլեջի) հետ տարբեր միջոցառումներին մասնակցելու գործում:

Քոլեջը չունի արտաքին կապերի զարգացման գործառույթ իրականացնող ստորաբաժանում կամ հաստիք, և այդ աշխատանքը բաշխված է մի քանի օղակների միջև՝ տնօրեն, կարիերայի կենտրոն, պրակտիկայի պատասխանատու, առարկայական հանձնաժողովների նախագահներ և դուալ կրթական ծրագրի պատասխանատու: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ նրանց աշխատանքի արդյունքում Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում ունի կնքված 19 համագործակցության պայմանագիր՝ «Իմպերիալ պալաս հոթել» ՍՊԸ, «Էլ Սի Սի» ընկերություն ՍՊԸ,«Ֆինանս Ափ» ՍՊԸ, «Նոր Զովք», «Չ և Գ Տելեմատիկ» ՍՊԸ, «Էկլեկտիկա» ՍՊԸ, «Նորայր-Ավետիք» ՍՊԸ և այլն: Փորձաքննությունից պարզ դարձավ, որ որոշ ՄԿԾ-ների շրջանակում քոլեջն ունի մի քանի կազմակերպություններում պրակտիկա կազմակերպելու հնարավորություն, իսկ օրինակ՝ «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությանբ մեկ կոնկրետ ՝ «Էլ Սի Սի» կազմակերպությունում:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը համագործակցել է Save the Children կազմակերպության հետ, որի հետ համատեղ հիմնվել էր «Սառնարանային տնտեսություն» կրթական ծրագիրը, որտեղ աշխատել են հատուկ կարիք ունեցող՝ քոլեջի կարճաժամկետ դասընթացների մասնակցած ուսանողներ և շրջանավարտներ: Համագործակցել է նաև ԳԻԶԱ ՍՊԸ-ի հետ դուալ կրթական ծրագրի ներդրման և իրականացման հարցում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջում «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության ուսանողները

սովորում են 3 օտար լեզու: Ներկայումս կարևորվում է ռուսերենի դասավանդումը, քանի որ գործատուները նշում են, որ քոլեջի ուսանողները դժվարանում են ռուսերեն հաղորդակցվել: Տվյալ ՄԿԾ-ով, բացի մասնագիտական քննությունից, նախատեսված է ամփոփիչ ատեստավորման երկրորդ քննությունը, որը ստուգում է երեք օտար լեզուների իմացությունը: Մյուս մասնագիտությունների ուսանողները առաջին կուրսում անցնում են 1 օտար լեզու(անգլերեն կամ ֆրանսերեն՝ ուսանողի ընտրությամբ), երկրորդ կուրսից անցնում են ևս մեկ օտար լեզու, իսկ երրորդ կուրսում՝ մասնագիտական անգլերեն:

Հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ում գործել են ուսանողների համար անգլերենի խմբակներ, որոնք COVID-ից հետո նույն ակտիվությամբ չեն գործում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Քոլեջի գրադարանում անց է կացվում անգլերեն լեզվով ֆիլմերի դիտում, ինչը նպաստում է ուսանողների՝ անգլերեն լեզվի իմացությանը և խորացմանը:

Անգլերենի դասեր կազմակերպվում են նաև դասախոսների համար, սակայն, դրանք մշտական բնույթ չունեն: Ըստ ինքնավերլուծության՝ վերջին երեք տարիների ընթացքում աշխատակիցների՝ օտար լեզվի իմացությունը բարելավել է. 2021 թ.-ին 50 դասախոսների՝ 80-85% , իսկ 2023թ-ի տվյալներով՝ 71 դասախոսների 90-95% տիրապետում է օտար լեզվի, սակայն մասնավորեցված չէ, թե որ օտար լեզվին:

Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջը միջքոլեջային համագործակցության գործընթաց է սկսել Ղազախստանի քոլեջներից մեկի հետ (այս պահին նամակագրության փուլում է):

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի քայլերը համագործակցելու տեղական գործընկերների հետ, ինչպես նաև գործատու-դասախոսների ռեսուրսների կիրառումը, ինչը նպաստում է ԴՈՒԱԼ ձևաչափով ծրագրի և ՄԿԾ-ների գործնական մասի արդյունավետ իրականացմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ քայլերի պլանավորումը և ամրագրումը ռազմավարական ծրագրում կնպաստի աշխատանքների համակարգվածությանը և կրթական գործընթացների բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ կողմից կնքված համագործակցության 19 պայմանագրերի առկայությունը տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում: Գովելի է նաև, տարբեր ստորաբաժանումների առջև դրված նպատակադրումը գործընկերային պայմանագրեր կնքելու և կապեր հաստատելու տեսանկյունից: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը համարում է, որ անհրաժեշտ է համակարգվածություն հաղորդել արտաքին կապերի ստեղծման աշխատանքներին՝ նպաստելու կնքված պայմանագրերի շրջանակում ստեղծված հնարավորությունների լիարժեք իրականացմանը, դրանց

արդյունավետության վերլուծությանը և յուրաքանչյուր ՄԿԾ-ի շրջանակում կայուն համագործակցությունների ստեղծմանը: Վերջինս էական է կրթական ծրագրի շարունակականության և որակի ապահովման տեսանկյունից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջիում 3 օտար լեզուների ուսուցումը, որը կնպաստի աշխատաշուկայում ուսանողների մրցունակության բարձրացմանը: Դրական է գնահատվում նաև դասախոսների կողմից կատարված աշխատանքը՝ մասնագիտական գրականության դասագրքերի մշակման և հրապարակման գործում: Փորձագիտական խումբը դրական է գնահատում Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջում անգլերեն խմբակների բացման նախաձեռնությունը: Այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ անգլերենի դասընթացներին դասախոսների և ուսանողների ինտենսիվ մասնակցությունը կարող է ստեղծել բավարար ներուժ միջազգայնացման ուղղությամբ ռազմավարական պլանավորում իրականացնելու համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը ակտիվ աշխատանքներ է իրականացնում տեղական կազմակերպությունների հետ համագործակցությունների շրջանակի ընդլայնման և ամրապնդման ուղղությամբ, կարողանում է արտաքին կապերի օգտագործմամբ ապահովել ՄԿԾ-ների, մասնավորապես դուալ կրթական ծրագրի արդյունավետ իրականացումը, կարևորում է ներքին շահակիցների օտար լեզուների իմացության ապահովումը հատկացված դասաժամերի, ինչպես նաև լրացուցիչ միջոցառումների շնորհիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը համապատասխանում է Չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9- ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը 2021 թ-ին հաստատել է «Ներքին որակի կառավարման հայեցակարգ»-ը, ըստ որի ներքին որակի

կառավարման համակարգի առաքելությունն է քոլեջում ներքին մեխանիզմների, գնահատող գործիքակազմի ներդրումը և ընթացակարգերի սահմանումը, որոնք կապահովեն կրթության որակի շարունակական բարելավումը՝ այն համապատասխանեցնելով միջազգային կրթական չափանիշներին, մասնագիտական փոփոխվող տենդենցներին և աշխատաշուկայի պահանջներին: Հայեցակարգում ամրագրված են մի շարք գործընթացներ, ինչպես օրինակ՝

- մշակել և ներդնել ներքին որակի կառավարման համակարգ, որը կապահովի կրթության շարունակական բարելավումը,
- մշտադիտարկում՝ առկա թերությունների վերհանում, առաջարկությունների մշակում և համաձայնեցում,
- ուսանողների կրթական բավարարվածության բարձրացմանն ուղղված հստակ գործողությունների պլանավորում կրթական հաստատության կողմից մատուցվող ծառայություններից, և այլն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում տարբեր ոլորտների՝ կրթական ծրագրեր և դասընթացներ, դասավանդում և ուսումնառություն, դասախոսական կազմ, ուսանողների գնահատում, ռեսուրսներ և ենթակառուցվածքներ, համակարգված մշտադիտարկում չի արվում, և տնօրենի, տնօրենի տեղակալների և առարկայական հանձնաժողովների նախագահների կողմից որակի ապահովման մասնագետին հստակ հանձնարարականներ չեն տրվում: Վերջինս հիմնականում համագործակցում է միայն կարիերայի կենտրոնի պատասխանատուների հետ:

Որակի ապահովման մասնագետն իրականացրել է որոշ ուսումնասիրություններ, օրինակ՝ «Հանրային սննդի տեխնոլոգիա» կրթական ծրագրի 2017-2022 թթ. շրջանավարտների զբաղվածության շուրջ, որի արդյունքում պարզվել է, որ նրանք չեն աշխատում իրենց մասնագիտությամբ և աշխատանքի են ընդունվում որպես խոհարար: Այդուհանդերձ, վերոնշյալը եզակի օրինակ է:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ նաև, որ 2021թ-ին որակի ապահովման մասնագետը մանրամասն վերլուծել է նաև դասալսումների արդյունքները և ներկայացրել է հաշվետվություն: Թեև հաշվետվությունը շատ ընդհանրական բնույթի է, հասկանալի չէ քանի դասալսում է իրականացվել և քանի դասախոս է մասնակցել, այն ամփոփվում է համապատասխան առաջարկներով: Այդուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործողությունների հետագա համաձայնեցում տեղի չի ունեցել և գործընթացը ավարտին չի հասել դասախոսական կազմի դիմադրության պատճառով:

Ըստ հայեցակարգի՝ որակի ապահովման համակարգի խնդիրներից պետք է լինի նաև ուսանողների կրթական բավարարվածության բարձրացմանն ուղղված հստակ գործողությունների պլանավորումը, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում չկան հստակ ընթացակարգեր, որոնք միտված են ուսանողների խնդիրների պարբերաբար վերհանմանը և հետագա գործողությունների պլանավորմանը:

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության մեջ նշվում է որակի ապահովման բաժնի մասին, սակայն փորձագիտական այցից, ինչպես նաև կառուցվածքի

ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջում չի գործում որակի ապահովման առանձին ստորաբաժանում, այլ առկա է որակի ապահովման մասնագետի հաստիք:

Որակի ապահովման մասնագետը հաշվետու է տնօրենին: Մշակված և հաստատված է որակի ապահովման բաժնի մասնագետի պաշտոնի անձնագիրը, որտեղ 16 կետով սահմանված են նրա պարտականությունները (դրանք սահմանված են նաև Որակի ապահովման հայեցակարգում), ինչպես օրինակ՝ քոլեջի կազմակերպչական խնդիրների և գնահատումների իրականացման նպատակով ստեղծված տարբեր աշխատանքային խմբերի ձևավորում, համակարգում ու ընթացիկ առաջարկությունների տրամադրում, կրթական ծառայությունների արդյունավետության գնահատում, քոլեջի գործունեության վերլուծություն և գնահատում, հաստատության զարգացմանը նպաստող առաջարկությունների ներկայացում և այլն:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, սակայն, որ որակի ապահովման մասնագետի գործառույթները ընդգրկում են այնպիսի դրույթներ, որոնք չեն կարող լինել նրա իրավասության շրջանակում, ինչես օրինակ՝ սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման գնահատում, քննությունների բողոքարկման և վերահանձնման կազմակերպում, քոլեջի մանկավարժների՝ տնօրինական, առարկայական հանձնաժողովների կողմից իրականացվող դասալսումների ժամանակացույցերի կազմում, սոցիալական գործընկերության աշխատանքների կազմակերպում, ուսանողների համար լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների կազմակերպում, ուսանողների դիմումների քննարկում: Վերոնշյալ գործառույթները կարող են իրականացվել մեթոդիստի, կրթական ծրագրերի համակարգողների, առարկայական հանձնաժողովների նախագահների կողմից:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը տվյալ պաշտոնում ունի կադրերի հոսունություն. որակի մասնագետը փոխվել է փորձագիտական այցից առաջ, իսկ նախորդ աշխատակիցը պաշտոնը զբաղեցրել է 2 տարի:

Քոլեջի որակի ապահովման մասնագետին տեղ է հատկացված կարիերայի կենտրոնի կաբինետում: Դրանով կարելի է բացատրել նաև այն փաստը, որ նա սերտորեն համագործակցում է կարիերայի կենտրոնի հետ՝ կազմակերպելով համատեղ հարցումներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բացի կարիերայի կենտրոնից, քոլեջի մյուս ստորաբաժանումները դեռևս պատրաստ չեն ակտիվորեն ներգրավվելու որակի ապահովման գործընթացներում: Այդ մասին նշված է նաև ինքնավերլուծության SWOT բաժնում, ըստ որի՝ *որակի ապահովման համակարգի հանդեպ առկա է շահակիցների կողմից սուբյեկտիվ ընկալում:* Օրինակ՝ դասախոսների մի մասը օբյեկտիվ չի համարում ուսանողների շրջանում հարցումների արդյունքները կամ դասալսումների արդյունքների վերլուծությունը: Արդյունքում՝ որակի ապահովման մասնագետը դասալսումների մասին հաշվետվություն ներկայացրել է միայն 2021թ-ին: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն որակի ապահովման մասնագետի տարեկան աշխատանքային պլանը և հաշվետվությունը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջը բացի որակի ապահովման մասնագետի աշխատավարձի վճարումից, որակի ապահովման մշակույթը տարածելու

և գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով այլ ֆինանսական ներդրումներ չի իրականացնում:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջում որակի ապահովման գործընթացներում առավելապես ներգրավված են ներքին շահակիցները՝ ուսանողները և աշխատակիցները, որոնց շրջանում անցկացվում են անանուն հարցումներ: Ներքին որակի կառավարման հայեցակարգում սահմանված են կիրառվող որակական և քանակական մեթոդները: Փաստաթղթերի ուսումնասիրությունը, սակայն, ցույց տվեց, որ վերոշյալ մեթոդների հետևողական և համակարգված կիրառում չի իրականացվում: Եթե անգամ, օրինակ, հարցումներ անցկացվում են, առկա չեն դրանց արդյունքների վերլուծություններ, կամ դրանց հիման վրա ներկայացված առաջարկություններ: Այսպես օրինակ՝ տնօրենի, տնօրենի տեղակալների կամ առարկայական հանձնաժողովների նախագահների աշխատանքի պլանավորվումը չի հիմնվում այդ հարցումների արդյունքների վերլուծության վրա: Հարցումները հիմնականում իրականացվում են առաջին կուրսեցիների շրջանում՝ օգնելու նրանց մասնագիտական կողմնորոշմանը:

Ինչ վերաբերում է արտաքին շահակիցներին, ապա նրանց ներգրավվածությունն առաջին հերթին ապահովվում է գործատու-դասախոսների միջոցով: Նրանք հանդես են գալիս կրթական ծրագրերի բովանդակության արդիականության մասին դիտողություններով և առաջարկներով, որոնք քննարկվում են առարկայական հանձնաժողովներում, այնուհետև մանկավարժական խորհրդում, երբեմն ուղարկվում նաև ՄԿՈՒԶԱԿ-ին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում չի իրականացվում որակի ապահովման քաղաքականությունների, հայեցակարգերի և ընթացակարգերի պարբերական բենչմարքինգ, այլ քոլեջների փորձի ուսումնասիրություն:

Այդուհանդերձ, քոլեջի դասախոսական և ուսանողական անձնակազմից ներկայացուցիչներ մասնակցում են ՀՀ ՈԱԱԿ-ի կողմից անցկացվող վերապատրաստումներին և հրավիրվում են որպես փորձագիտական խմբի անդամներ: Մյուս կողմից, տեսանելի չէ, թե քոլեջն ինչպես է օգտագործում ստեղծված ներուժը ներքին որակի կառավարումը բարելավելու նպատակով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության համար ստեղծված խումբը համատեղ է աշխատել բոլոր 10 չափանիշների շուրջ: Այդուհանդերձ, պետք է նշել, որ ինքնավերլուծությունը բավարար պատկեր չի ապահովում արտաքին գնահատման համար: Այն հիմնականում նկարագրական է, առկա տվյալները թերի են, հիմքերի մեծ մասը կրկնվում է և հաճախ անտեղի, օրինակ՝ 1-ին կուրսեցիների մասնագիտական կողմնորոշման հարցումների մասին նշված է բոլոր չափանիշներում, երբ խոսքը կրթական ծրագրի գնահատման մասին է, ինչը հնարավորություն չի տալիս պատկերացում կազմել գործընթացների կազմակերպան կամ կիրառվող գործիքակազմի և մեխանիզմների մասին:

Ներկայացված ինքնավերլուծության համաձայն՝ որակի ապահովման մասնագետը տարեկան հաշվետվություն է ներկայացնում տնօրենին, իրականացնում քանակական և որակական վերլուծություններ, որոնց վրա հիմնված առաջարկներ են ներկայացվում:

Այդուհանդերձ, փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ 2020թ-ից ի վեր որակի ապահովման մասնագետը ներկայացրել է միայն դասալսումների վերաբերյալ մեկ հաշվետվություն 2021թ-ին: Տնօրենի տարեկան հաշվետվության փաթեթում ընդգրկված չէ որակի ապահովման մասնագետի տարեկան հաշվետվությունը, առկա չեն նաև այլ որակական կամ քանակական վերլուծությունների տվյալներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման մասնագետը կարիերայի կենտրոնի հետ համատեղ իրականացնում է հարցումներ, սակայն դրանց արդյունքները կամ վերլուծությունը ոչ միշտ է հրապարակայնացվում կամ փոխանցվում բոլոր հնարավոր շահառուներին: Նշենք նաև, որ քոլեջի կայքն ունի, որակի բաժին, որը որևէ տեղեկատվություն չի պարունակում:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ քոլեջն ունի որակի որակի ապահովման մասնագետի հաստիք և մշակել է որակի ներքին կառավարման հայեցակարգ: Մյուս կողմից մտահոգիչ է տվյալ հաստիքում աշխատակիցների հոսունության խնդիրը, որը մեծապես խոչընդոտում է գործընթացների համակարգվածության և շարունակականության ապահովմանը: Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ հստակեցման կարիք ունեն նաև որակի մասնագետի պաշտոնի անձնագրում սահմանված գործառույթները, քանի որ դրանց մի մասը վերաբերում են վարչական այլ պաշտոնների: Ներկայումս տվյալ հաստիքը զբաղեցնող աշխատակիցը հիմնականում մասնակցում է դասալսումների ժամանակացույցի կազմմանը և որոշ հարցումների իրականացմանը:

Փորձագիտական խումբը հատկապես մտահոգիչ է համարում որակի ապահովման մշակույթի հաստատման և տարածման ուղղությամբ քայլերի և միջոցառումների բացակայությունը: Փորձագիտական խումբը գտնում է, որ առարկայական հանձնաժողովների հետ սերտ համագործակցությունը և բոլոր ներքին շահակիցների համար վերապատրաստումների կազմակերպումը մի կողմից կբարձրացնի նրանց իրազեկությունը որակի ապահովման կարևորության շուրջ, մյուս կողմից կխթանի որակի ապահովման մասնագետի հետ համագործակցությունը: Որակի ապահովման համակարգի կայացմանը մեծապես կարող է նպաստել նաև վարչական անձնակազմի կողմից որակի ապահովման մասնագետին տրվող կոնկրետ հետազոտություններ անցկացնելու հանձնարարականները, որոնք անհրաժեշտ են տարեկան, ինչպես նաև միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորման համար: Նման մոտեցումը մեծապես կնպաստի քոլեջի կառավարման համակարգի մի շարք գործընթացների բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում որակի ապահովման մասնագետի և կարիերայի կենտրոնի համագործակցությունը և հարցումների կազմակերպումը, սակայն գտնում է, որ հարցումները, ֆոկուս խմբերի և կլոր սեղանների կազմակերպումը պետք է ունենա հստակ սահմանված նպատակներ ու դրանց արդյունքների շահակիցների շրջանակ, և

արդյունքներն էլ հասանելի լինեն քոլեջի ներքին և արտաքին շահառուներին, ինչը մեծապես կնպաստի որակի մշակույթի տարածմանը:

Քոլեջի որակի ապահովման համակարգի կայացման համար կարևոր գործոն կարող է լինել նաև այլ ուսումնական հաստատությունների որակի ապահովման կենտրոնների և մասնագետների հետ համագործակցությունն ու փորձի փոխանակումը: Որակի ապահովման համակարգի բարելավման մեկ այլ գործիք կարող է լինել ներքին ներուժի օգտագործումը, մասնավորապես որակի ապահովման վերապատրաստումներ անցած դասախոսների և ուսանողների ներգրավվումը տարբեր գործընթացներում:

Փորձագիտական խումբը համարում է, որ վերոնշյալ գործողությունների իրականացումը կարող է ապահովել նաև որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք իրականացմանը քոլեջի գործունեության բոլոր ոլորտներում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջը բավարար քայլեր չի ձեռնարկում որակի ապահովման մշակույթի ձևավորման ուղղությամբ, ներքին և արտաքին շահակիցները բավականաչափ տեղեկացված չեն և ներգրավված չեն որակի ապահովման գործընթացներում, որակի ապահովման մասնագետի գործառույթները դեռևս հստակեցված չեն, կառավարման օղակները նախքան որոշումներ կայացնելը որակի ապահովման մասնագետին հիմնականում չեն հանձնարարում հավաստի տվյալների հավաքագրում իրականացնել, լիարժեք չեն կիրառվում տվյալների հավաքագրման և վերլուծության որակական և քանակական մեթոդները, չեն գործում խնդիրների վերհանման այլ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Լիլիթ Բաղալյան
Փորձագիտական խմբի ղեկավար

06 սեպտեմբերի, 2023 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Լիլիթ Բաղալյան՝ 1992-1997 թթ. սովորել է Երևանի պետական լեզվաբանական համալսարանի Ռոմանագերմանական լեզուների ֆակուլտետում: 2008 թ.-ի սեպտեմբերին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Անգլերենի «ավերման» բայերի բառակազմական հնարավորությունները՝ հայերենի զուգադրությամբ» թեմայով և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1997-2019 թթ. աշխատել է Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի Անգլերենի ամբիոնիում որպես դոցենտ: 2019 թ. դեկտեմբերից Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի ամբիոնի վարիչն է:

Քրիստինե Հակոբյան՝ 2004 թվականին ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը ‹‹Դասավանդում տարրական դասարաններում›› մասնագիտությամբ: 2015 թվականին ավարտել է ԳԱԱ-ի ‹‹Տուրիզմի հիմունքներ››, ‹‹Էթիկետ և միջմշակութային հաղորդակցություն››, ‹‹Մարդկային ռեսուրսների կառավարում›› 5-ամսյա հեռահար դասընթացները: 2011 թվականին մասնակցել է ‹‹Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում››, իսկ 2020 թվականին՝ «Զբոսաշրջություն(ըստ ճյուղերի)» մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների և մոդուլային ծրագրերի մշակման աշխատանքներին: Մի շարք մասնագիտական ձեռնարկների հեղինակ է:Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և տեղակալների վերապատրաստող է: 2005 թ.-ից առ այսօր աշխատում է «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում՝ որպես Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ և Տուրիզմի դասախոս:

Վիոլետտա Դավիդյան՝ 1999 թվականին ավարտել է Հայկական Գյուղատնտեսական Ակադեմիան «Տնտեսագետ-հաշվապահ» մասնագիտությամբ: 1995-2000 թթ. աշխատել է «Երևանյան լույսեր» ՍՊԸ-ում որպես հաշվապահ: 2003-2008 թթ. աշխատել է «Բռայթ-Լայթ» ՍՊԸ-ում որպես հաշվապահ: 2014 թվականից առ այսօր Տարածաշրջանային №1 պետական քոլեջի դասախոս է:

Ալբերտ Թադևոսյան՝ 2020 թվականից սովորում է Երևանի պետական հումանիտար տեխնիկական քոլեջում՝ «Ֆինանսներ» մասնագիտությամբ: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

26.06.23 թ. – 29.06.23 թ.

N.	26.06.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում տնօրենի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում փոխտնօրենների հետ	10:30	11:30	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	11:40	12:20	40 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5.	Հանդիպում շրջանավարտների հետ	13:40	14:40	60 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ	14:50	15:50	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:00	18:00	120 րոպե

N.	27.06.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում կրթական ծրագրերի համակարգողների (հանրակրթական, մասնագիտական, դուալ), ուսումնական մասի ղեկավարի, հանձնաժողովի նախագահի և մեթոդիստի հետ	10:30	11:30	60 րոպե
3.	Ռեսուրսների դիտարկում	11:40	12:50	70 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ	14:10	15:10	60 րոպե
6.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ	15:20	16:20	60 րոպե
7.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ	16:30	17:10	40 րոպե

8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:20	19:00	100 րոպե

N.	28.06.2023 թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Զուգահեռ հանդիպում «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ	Զուգահեռ հանդիպում «Սպասարկման կազմակերպումը հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» և «Շուկայաբանություն» մասնագիտության կրթական ծրագրերի պատասխանատու/ների հետ		09:30	10:30	60 րոպե
2.	Զուգահեռ հանդիպում «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Շուկայաբանություն» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Սպասարկման կազմակերպումը հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	10:40	11:40	60 րոպե
3.	Զուգահեռ հանդիպում «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Շուկայաբանություն» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Սպասարկման կազմակերպումը հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	11:50	12:50	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:00	14:00	60րոպե
5.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (ուսումն. պրակտ. պատասխանատու, գիտահինովացիոն բաժին, կարիերայի պատասխանատու, կուրսղեկ) ղեկավարների հետ			14:10	14:50	40 րոպե

6.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (հաշվապահ, կադրերի տեսուչ, վեբ կայքի պատասխանատու, գրադարանավար, արխիվավար) ղեկավարների հետ	15:00	15:40	40 րոպե
7.	Բաց հանդիպում	15:50	16:30	40 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:40	18:00	80 րոպե

N.	29.06.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Որակի ապահովման կենտրոնի աշխատակցի հետ	09:00	10:00	60 րոպե
2.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	10:10	11:10	60 րոպե
3.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	11:20	13:00	100 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	14:20	17:00	160 րոպե
6.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:10	17:30	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Նախորդ ռազմավարական ծրագիր	1
2.	Նախորդ ռազմավարական ծրագրի գնահատում	1
3.	Ստորբաժանումների տարեկան պլաններ	2
4.	Ստորաբաժանումների հաշվետվություններ	2
5.	Տնօրենի տարեկան հաշվետվություններ	2
6.	Աշխատակիցների կողմից ներկայացված գնահատման առանցքային ցուցանիշների հաշվետվություններ	2
7.	Ստորաբաժանումների ղեկավարների տարեկան հաշվետվությունների վերաբերյալ քննարկումների արձանագրություններ	2
8.	Կառավարման խորհրդի վերջին 3 նիստերի արձանագրությունները	2
9.	Հաստիքացուցակ՝ ըստ աշխատավարձերի	2
10.	Տնօրինական և մանկավարժական խորհուրդների վերջին 3 նիստերի արձանագրությունները	2
11.	Առարկայական հանձնաժողովների նիստերի արձանագրություններ	2
12.	Նախահաշիվ	2
13.	Ընկտրված 2 կրթական ծրագրերի դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության վերլուծությունը	3
14.	Ուսումնառության նյութ, զեկույց, մոդուլային ծրագրեր, ուսպլան, գործնական առաջադրանքներ 0413 մասնագիտության հատուկ և ընդհանուր մասնագիտական մոդուլների գծով	3
15.	«Աղբարկղի մեթոդով» կատարվող հարցման նմուշներ	3
16.	Քննությունների և ստուգարքների ընթացքում ուսանողների ցուցաբերած առաջադիմության արդյունքների վերլուծությունն	3
17.	Պրակտիկաների լրացրած օրագրեր/ ընտրված 3 կրթական ծրագրերի համար՝ 4-ական/	3
18.	Պրակտիկայի նպատակով հաստատությունների հետ կնքված համագործակցության պայմանագրեր	3

19.	Պրակտիկայի մատյաններ	3
20.	Ուսանողների թիվը՝ ըստ մասնագիտությունների	4
21.	«Չափորոշիչների համապատասխանեցում գործատուների պահանջների հետ» հարցման օրինակ և վերլուծություններ	4
22.	Մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թիվը և վերլուծություն ըստ մասնագիտությունների /վերջին 3 տարվա կտրվածքով/	4
23.	Ինքնուրույն հետազոտական աշխատանքների նմուշներ	4
24.	Վերջին ուսումնական տարվա համար նախատեսված զեկուցումների, ինքնուրույն ստեղծագործական , հետազոտական աշխատանքների թեմաները, որոնք հաստատվել են ամբիոնների կողմից	4
25.	Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման աշխատանքների(կլոր սեղան քննարկումներ, դիտարկումներ, բանավոր և գրավոր հարցումներ) արձանագրություններ	4
26.	Դասախոսական անձնակազմի մրցութային հարցաշարեր, մրցութային հանձնաժողովի արձանագրություններ	5
27.	Դասալսումների լրացված նմուշներ, վերլուծություններ (ներառյալ առարկայական հանձնաժողովների կողմից անցկացվող դասալսումների և քննարկումների արձանագրությունները) և դասալսումների մատյաններ	5
28.	Դասախոսների գնահատման նպատակով ուսանողների շրջանում իրականացված հարցումներ	5
29.	Դասախոսների վերապատրաստման փաթեթներ	5
30.	Միջազգային և հանրապետական կոնֆերանսների մասնակցության հիմքեր /վկայականներ/	5
31.	Վերջին երեք տարվա ընթացքում մեթոդական կամ մասնագիտական վերապատրաստում անցած դասախոսների անվանացանկ	5
32.	Դասախոսների պորտֆոլիոներ, դասախոսի պլաններ	5
33.	Դասախոսների գնահատման լրացված ձևաթուղթ /հարցազրույց, ինքնագնահատում, ղեկավարի գնահատում/	5
34.	Դասախոսի պաշտոնի նկարագիր	5

35.	Երիտասարդ կադրերի պատրաստման պլան	5
36.	Դասախոսների բազա	5
37.	Դասախոսների կողմից մշակված և հեղինակված մասնագիտական ձեռնարկներ, դասավանդման ուղեցույցներ	6
38.	Հավելված 50, 51 – հետազոտության ընթացքում ուսանողների կատարած վերլուծության փաստաթղթեր	6
39.	Ստորաբաժանումների եկող ռեսուրսների ձեռքբերման պահանջագրերի օրինակներ	7
40.	, Ուսումնական հաստատությունների, կազմակերպությունների հետ կնքված համագործակցության պայմանագրեր	9
41.	Ֆոկուս խմբերի համար պլանավորված հարցաշար/արձանագրություններ	10
42.	Քանակական (հարցում) և որակական (դիտարկում, հարցազրույց, ֆոկուս խումբ, կլոր սեղան) հետազոտությունների արձանագրություններ	10
43.	ՈԱԿ-ի կողմից իրականացված բոլոր հարցումների հարցաթերթերն ու վերլուծությունները	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Լսարաններ,
- Առարկայական կաբինետներ,
- Ամբիոններ,
- Համակարգչային լսարաններ,
- Մարզադահլիճ,
- Գրադարան,
- Ընթերցասրահ,
- Բուժկետ,
- Միջոցառումների համար նախատեսված դահլիճ։

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԿԳՄՍ նախարարություն - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈՒ - Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ - որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ - որակավորումների ազգային շրջանակ

ՊԿՉ - պետական կրթական չափորոշիչ

ՌԾ - ռազմավարական ծրագիր

ՈՒԽ - ուսանողական խորհուրդ

ԼԿԾ - լրացուցիչ կրթական ծրագիր

ՈՒՕ կազմ -ուսումնաօժանդակ կազմ